

Կ Ա Ր Ե Ն Բ Ա Դ Ա Լ Յ Ա Ն

Բ Ե Ն Չ Ի Ն

(Բանաստեղծություններ)

Երևան
Հեղինակային հրատարակություն
2008

ՀՏԳ 891. 981-1 Բաղայան
ԳՄԳ 84Հ-5
Բ 141

Բաղայան Կ.Լ.
Բ 141 Բենգլին: Բանաստեղծ. ժողովածու/ Կ.Լ. Բաղայան.-Եր.:
Հեղինակային հրատարակություն, 2008.- 184 էջ:

Կ. Բաղայանի առաջին ժողովածուում տեղ են գտել հեղինակի վաղ պատանեկությունից մինչև հասուն երիտասարդության տարիների ստեղծագործությունները: Դրանցից ոմանք արդեն հասցրել են մեծ աղմուկ բարձրացնել հասարակության մեջ՝ արծարծված թեմաների կեղծ պուրիտանիստական մեծամասնության կողմից մերժված լինելու պատճառով: Հեղինակի կողմից ստեղծված գրեթե բոլոր հերոսներն էլ ինքնակենսագրական են, որոնք չնայած մարդկային բարդությային հարաբերությունների ինքնատճության շեշտակիությանը, այնուամենայնիվ, ունեն մեկ մաքառում՝ երջանկություն:

ԳՄԳ 84Հ-5

2 0 0 0

ISBN 978-9939-53-071-0

© Բաղայան Կ.Լ., 2008թ.

ՀՈԳԻՍ

Հոգիս ազատ է, շնչում եմ թեթև,
Քայլում եմ այնպես հպարտ ու վեհ
Կարծես արքա արծվի մի մեծ թև
Իջել է վրաս, որ ճախրենմ դեպ վեր:

Քայլում եմ հանգիստ, առանց շտապելու,
Ջանում եմ դառնալ հրեշտակ, բայց՝ անթև,
Խոսքեր չունենմ ես արդեն ասելու:

Բայց ինձ չեմ սպառել, ես դեռ էլի կամ,
Մի վերջին քայլ էլ ունեմ անելու,
Որպեսզի շտկեմ իմ սխալներն անկամ
Ու նորից քայլեմ՝ առանց շտապելու:

21 փետրվար 2000

ՀԱՉԱՐ ՉԱՐԴԱԾ ԱՊԱԿԻՆԵՐ

Հազար ջարդած ապակիներ
Ու բեկորներ խշրված,
Տրորված են փշրանքները,
Այս տարածքը խոշտանգված:

Կրակ, բոցեր, լափող լեզու,
Ծուխ, գոլորշի, անդուր հոտեր
Ու վայնասուն՝ քարձր ու զուր,
Տաք դիակներ՝ լեշ ու անտեր:

Մեռելային մի լուրջուն
Ու մերթընդմերթ հառաչանքներ,
Ռեքվիեմի երաժշտություն,
Ներբողական սիմֆոնիաներ:

Ու ոտնկալս ծափողջյուներ
Այս ամենը կատարողին,
Հազար ապրե՛ս ու կեցցենե՛ր
Կյանքը դաժան դարձնողին:

11 հունիս 2000

ԻՆՔՆԱՄՈՒԱՑՈՒՄ

Ես ինձ վերածել եմ մի ապուշի,
Չեմ ապրում այնպես, ինչպես ես կուզեի,
Վարում եմ մի կյանք՝ առանց անուշի,
Թեև անուշը ես այնքան կուզեի:

Ես ինձ տվել եմ ինքնամոռացման,
Իմ հոգու համար չունեմ ոչ մի պահ
Եվ միայն այն ժամ, երբ գիշեր է ուշ
Հիշում եմ ես ինձ, զգում եմ մի ահ:

Ես այսպես ապրել հաստատ չեմ կարող,
Իմ փոքրիկ, ոսկրոտ, հիվանդ մարմնում
Դաժան վիուկներ կան, ես էլ՝ անկարող
Եվ զգում եմ ես կամքի խոնարհում:

Անկում են ապրում իմ ուժերը վեհ,
Ինձ տարան-բերին, ծախեցին էժան,
Մուտքերս բաց են, քանզի կա կարոտ,
Ելքերս ցավոտ, խոցոտ ու վերքոտ:

Ես քարշ եմ տալիս ոտքերս բարակ,
Հիմա ես չունեմ և ոչ մի սպասում,
Լույսերը թույլ են, ես էլ՝ անճարակ.
Քայլե՛մ, առջևում կա ինքնամոռացում:

6 հոկտեմբեր 2000

ՆԻՆՁ

Ու ես քնած եմ, կուպերս բարակ
Թեթև իջել են, շղարշել դեմքս,
Փրփուրը կապույտ, լազուր անհատակ
Խորտակել է ինձ, խեղդել է կամքս:

Անկամ արարած, չէ՞ որ քնած եմ,
Խաղաղ խաղում են շողքերը պայծառ,
Կուրծքս մերկացած առ քեզ պարզած եմ,
Քո մեջ թափանցած հաստաբուն մի ծառ:

6 հոկտեմբեր 2000

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՈՐՈՇՈՒՄ

Չեր վերջալույսը իմ արշալույսն է,
Քանզի իմ օրը սկսվում է այն ժամ,
Երբ երկնակամարում վառվում է կեռման,
Եվ իմ աղոթքը առ արևը չէ,
Ոչ էլ օրհներգս գով լուսաբացն է,
Իմ ճանապարհը լուսավորողը հրե գունդը չէ,
Նա իմ աչքերից արցունք բերողը, իմ նվազ լացն է:
Աստղագարդ երկինք՝ ձեր համար հմայք,
Իմ համար փարոս գիշերվա ճամփի,
Միակ փարոսը այն նեղ կաժանի,
Որ տանում է առ նա, որ մի հատիկն է հմայվողների:
Աստղագարդ երկինք ու ճիվաղ մարմին,
Հմայվողի համար մեկ միասնություն,
Փա՛ռք քեզ իմ լուսին, իմ կիսալուսին,
Անեծք խավարն ու մութը լուսավորողին:
Ու մթության մեջ երկու մերկ մարմին,
Թացոտ շուրթերի ջերմ միախառնում,
Չով շնչառություն՝ բերան առ բերան,
Բիրտ ներթափանցում՝ մարմին առ մարմին,
Իմ հառաչանքը՝ ինձ վերցնելու վայրենությունից,
Եվ իմ սարսուռը՝ ինձ անցած նրա սառը քրտնքից
Դարձած մեղեդի, փորձում են քնած
Գիշերվան հանել մեռելությունից...

6 նոյեմբեր 2000

ԻՄԿԻՐՔԸ

Իմ կիրքը առ նա ունի պատմություն՝
 Երկար ու անսանձ, երբեմն դաժան,
 Շարունակական ընդհատվող է այն,
 Ջերմ վերսկսումով սպասողական,
 Բայց ամեն կայծը տալիս է միայն
 Նոր ապացուցում առաքինության
 Նրա՝ ոչ թե իմ, հետադիմակա՛ն,
 Դու դեռ չգիտես, որ ես եմ այն
 Մարմնացումը պարկեշտ մաքրության,
 Ով ցանկանում է, և չի տիրանում,
 Ով միշտ տենչում է և չի հագնում՝
 Ունենալով լոկ խենթ պակասություն,
 Անբավարարություն՝ կամքի ու նրա:
 Ու դառնում ես դու հիշեցման թերթիկ,
 Մեղով սայիտակին գրված մի կանոն՝
 Գորշ մարդկանց ապրող կյանքով անկանոն,
 Դու ճիշտ կյանքով վառվող մարդկային կերոն,
 Ես, ... ես էլ մի կերոն՝ վաղուց մոխրացած,
 Ապրած, վայելած, միայնակ տքնած
 Ու ամեն ինչից վաղուց խիստ հոգնած
 Քա՛րշ տամ մարմինս՝ հոգնաբեկ ու քած:

7 նոյեմբեր 2000

ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՈՒՄ

Ազատ ծխալով՝ կբարձրանամ վեր խիտ մառախուղից,
 Ինքս կհասնեմ անսահման թվացող երկնքին կապույտ,
 Ու որպես մրրիկ՝ պայթած սեփական փլատակներից
 Ներքև կթափեմ ցուրտը՝ ողողված արևի կույտով:

Եվ այդ ժամանակ ես կտուրամ՝ կորած հույսի թևերը գտած,
 Կսավառնեմ՝ թեթև՝ վայել բարձունքներում աստվածահաս,
 Անհավատալի շրջադարձներով դեղնակապույտ-վառ արևը հոտած
 Կփշրեմ զարկով, հսկա թևերիս սև վարագույրերով:

Մութ բևեռներից կփայլատակեն թեթևաբարո դեղնություններս,
 Մի պահ ապշահար մահվան սարսուռով ես կբարանամ խորանի առաջ,
 Բայց այն ժամ ես՝ մոլորյալս, կհիշեմ կարոտի սև տանջանքներս
 Ու կոկորդիցս ազատ կարձակեմ զուգավորության վայնասուն հառաջ:

Ու միլիոնավոր ոսկե թռչուններ իմ մեջ կգարթեն,
 Մայիսյան ժիր թիթեռնիկի պես ջրափոսերը ես կցատկոտեմ,
 Արշալույսները՝ տանջած իմ հոգին, ու լուսինը՝ դառն ու մորմոքիչ
 Մառը ճահիճների անբասիր ու զագրելի սևով կպատեն:

Երկաթյա ճանկից ճարպիկ կփախչեմ դեմքով ահասաստ,
 Ոճի՛ր, վրե՛ժ, մահաբեր ատամներդ փայլեցրո՛ւ, մի՛տք իմ,
 Հագեցնեմ ծարավս ոսկյա ըմպելիքով նրա քրտնքի,
 Օրն է, սկսեմ երթս՝ որպես փքված մի պիղծ առագաստ:

Ալեծուփ սիրո արբեցուցիչ ու մոգական ընդարմացումից
 Ջարդուխուրդ կանեմ ուժասպառ ամոթի կապանքները լիրբ,
 Կելնեմ որպես հսկա մի ծեր ջին ապակյա շշից
 Ու կարոտագին թախծոտ աչքերով դրոշմներ կանեմ անձանոթներին:

Ու ոչինչ, փույթ չէ, որ վրեժի երթը կավարտեմ սևադեմ,
 Դառնադի կաթիլներ և մոլեգնանքի անողոք ճիչեր, առհավետ չքվե՛ք,
 Եվ եթե մի օր հարբած ծովերում անցնեմ ջրի տակ՝ արդեն սևադեմ,
 Իմ մասին ոչ մի լողացող տախտակ չի հիշի երբեք, չի՛ հիշի երբեք:

21 նոյեմբեր 2000

ՀԱԿԱԲՆԱԿԱՆ

Ես սիրում եմ իջնել փտել ճահիճների ծածկի տակ զգվելի,
Ուր ազոավները բարի ձայնով ձայնակցում են հրեշտակին՝
Որմնաքանդակ շղթաներով ճորտագրված մարգարեին ծիծաղելի,
Այգաբացը հրավերքի բույրն է ցրում մերկանալու ճոխ հանդեսին:

Լուրթ չարքերը խրախճանքից քշտած իրենց լնդերը սև
Վայելում են արգանակս՝ արբենալով միայն բույրից,
Որոշեցի ես կզրկեմ նրանց այսօր այդ հաճույքից
Ու կխնդրեմ հրեշտակին այսօր պարտքով տալ ինձ մի թև:

Մի ստորոթյամբ կթավալվեմ համեղ օդում եղեռնաբույր՝
Գրգռելով ախորժակը ցեխոտ, անկուշտ վիուկների,
Որ կանչում են տենչանքների աղաղակով՝ խոստանալով մի լավ համբույր,
Ա՛հ, ինչևիցե, փոշմանեցի, շնորհում եմ ձեզ մարմինս նզովյալի:

Դե՛, արա՛գ, կռապաշտ, ապիկար լափող դողոշներ,
Մաշկեք կապտավուն ոսկորներս պիրկ ու լացեք անկեղծ...
Բայց ո՞ր նողկալին էր ինձ նենգավորել, որ իմ կյանքին սեր
Ապահովելու համար ես չօգտվեցի իմ իսկ սեփական մարմնից անեղծ:

26 նոյեմբեր 2000

ԻՆՔՆԱՆԵՐՇՆՉՈՒՄ

Դալկությամբ իմ ոսկեցու կանգնած եմ մերկ, երազկոտ,
Հեզությամբ մի ահագոտ երկրպագում եմ գիշերվան այս տարփալի,
Երջանկությանս երգն է դա, որ հիշում եմ արդեն աղոտ,
Խրոխտ միտքս սևացրել են բիրտ ցավերն այդ բերկրալի:

Ըստ դրա՝ սպառված եմ, քանզի խաղացի դերերս բոլոր,
Վեհաշուք կուռքերիս՝ արդեն ձանձրացած ես կտրորեմ,
Աստվածներից ազատված՝ գիշերվա ճամփան կբռնեմ մոլոր,
Հոգեթով ժպիտիս պիղծ թրթռոցը լուսին կնետեմ:

Ու կիջնեմ Երկիր. միգուցե որպես անձրև կաթնահամ...
Միգուցե ծորամ որպես մշուշներ ոռնացող բքի...
Հավանական է, այնտեղ էլ մնամ՝ անշարժ ու անկամ,
Բայց ամեն դեպքում կունենամ համը քո գով քրտնքի:

Ի՞նչ կերպարանքս, ի՞նչ էությունս, հապա՞ մարմինս՝
Անապատներից, ժանգոտ դարերից դողմներ առած:
Փոշոտ եղյամով սնված, գուրգուրված այդ առնակամին
Ի՞նչ կարևոր է, թե աղի ծովում ո՞ւմ է խորտակում:

Ու, խոշտանգվելով, կսուզվեմ դեպի հատակդ յուղոտ,
Դատարկությունից ես կշանթարզեմ հազար արևներ,
Բավարարվածի լիրբ մոլեգնությամբ այդ ծովդ յուղոտ՝
Ցամաքեցնելով կթողնեմ միայն աղի բյուրեղներ:

Ու իմ ծիծաղի նենգ աղաղակի հսկա կացինով
Փշրանքներ կանեմ այդ բյուրեղներդ հենց ծովի ափին,
Եվ քո մազերի խիտ թավուտներում հորինած երգի ցինիկ պարերով
Փշրանքներդ մարդկանց անխնա կընծայեմ, թող ուտեն հացով:

Միգուցե մի օր քեզ նորից կենարար ջուր ես պարզեմ,
Թող հոսեն կրկին տաք առվակներդ խողովակիս մեջ,
Ու հավաքելով աղահամ ջրի ահռելի պաշար՝
Կարոտով անգութ քո ցամաքելու վայնասունները ես կվայելեմ:
26 նոյեմբեր 2000 և 12 հունիս 2001

ԿԱՆԱԶՈՒԹՅՈՒՆ... ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ

Խենթ ու սանձարձակ վայրի կանաչի խիտ առատություն,
 Որ սարսափելի ահռելի հեռվում միաձուլվում է լուրթ հորիզոնին,
 Եվ ես՝ գորշություն այս ամենի մեջ, բայց՝ հզորություն,
 Որ ինձ եմ ենթարկում վերևում գամված գանգուր ամպերին:

Քարերին, հողին, ջրի շառաչին կարգադրում եմ մեռած լռություն,
 Ու հետո թաքուն ինքս եմ ծնկում քարին ահագին,
 Մարդու ստեղծած առաջին աղոթքն եմ ես լուռ մտմտում,
 Աղերսում տեսնել գահավիժումը ջրե ժանյակի:

Ու հեծկտում է երկինքը ահեղ մռնչյուններով,
 Միախառնվում իմ գորշությանը՝ ծվարելով պարկում վզիս երակի,
 Լիցքավորվելով հեզ իմ մարմնի կեղտաջրերով՝
 Սկսում է երթը՝ բարակ, նվազ, լուռ ու անդադրում:

Աղքատ եմ նորից, ուղղեմ ծնկներս հոգնաբեկ կյանքից,
 Կոպերս փակեմ, գնամ մանկության մաքուր գետակից արծաթ
 հավաքեմ,
 Անձրևի բարակ ձեռքերը բռնած մտնեմ ծառերի տաճարը կանաչ,
 Դառնամ եղեգնի բողբոջ անճանաչ:

Սաղարթին թառած օդում թափառած թաքուն տագնապը եռանդով լվամ,
 Հավաքված ջրով մարդկանց գլխատեմ՝ ինձնից ձախ ու աջ.
 Վա՛յ, խղճի հոտ է աշխարհից գալիս, պատուհանդ բա՛ց,
 Տե՛ս ծիածանը՝ մեռած անձրևի այս ուժեղ ու թույլ տապանագիրը:

19 հունիս 2001

2 0 0 1

ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ

... Ու թե աստված ինձ նրան չտա,
 Որպես ընդվզում ես կբորբոսնեն,
 Վախենում եմ թեթև դերեր նա ինձ տա,
 Տաշվեմ, մաշվեմ, չծափահարվեմ,
 Բայց միևնույնն է իմ գինը գիտեմ,
 Ես հպարտ եմ իմ ճյուղերով, բնով
 Ու առավել շատ իմ արմատներով,
 Իմ վաղեմությանը, իմ դալարությանը,
 Տանջանքն ապրելու իմ տոկունությանը,
 Իմ նուրբ ինքնությանը՝ չհասկացվող ու չզգացվող,
 Իմ խոհեմությանը, իմ խելառությանը,
 Նրան տրվելու իմ վեհ ցանկությանը
 Ու փոխարենը քարե մի շենքում դեռ նոր կառուցվող
 Ետ-առաջ գալուս անդուլ թուլությանը, թուլամորթությանը,
 Կամ էլ անտառում, բաց երկնքի տակ
 Իմ պլպլելու, նրա ժլատությանը...
 Հրաժարվում եմ ես իմ անցյալից,
 Մի ամբողջ գորքից՝ այդքան փափագած,
 Թե նա ցավոտ է ետ նահանջելու իմ մութ խորքերից,
 Հպարտությունից հրաժարվում եմ մեծ հպարտությանը,
 Իմ կուսությունից ես զրկվում եմ առանց դժվարության,
 Մեղսակից ձեռքով հիմա թախանված
 Ցավեր եմ զգում չափահասության,
 Ցավում եմ ցավից իմ ցավոտության
 Ու տխուր փաստից իմ մենակության,
 Ժողով եմ անում քարերին կանգնած,
 Հայտարարում եմ դեմքով այլայլված,
 Որ ինձ մնում է դողալ վախվորած:

-Ո՞ւմից:
 -Թույլերի՛ց, ամենից շատ ստորություններ կյանքում կատարած,
 Ծույլերի՛ց, ճարճատումներից շատ հոգնածորեն անվերջ տնքացած
 Նաև մլակների զարհուրանքներից, մեր նստվայր Էրմիտաժում ճոխ
 զարչահոտած:

-Է՛լ ո՞ւմից:
 -Իմ անունից, իմ կոչումից, իմ քրտինքից,
 Ի դեպ, ես քրտնում եմ տաք քրտինքով՝ տապից, տոթից և հաճույքից,
 Պաղ քրտինքով՝ և՛ սարսափից, և՛ ամոթից,
 Գիտավորյալ, ոչ թե անկեղծ հաշտությունից
 Աղ եմ շիթում հավատացող ձևացումից:
 Ինչպես կայծակ լիագորված թուխս ամպերից
 Կնիքելով՝ ես ներում եմ քո չգալու անտաշ փաստը, փաստաթուղթը,
 Գլխացավը, որ ծագում է տարիքն առած կուսությունից,
 Եվ իմ հիվանդ սովորույթը:
 Բայց ուզում եմ միայն մեկով բավարարվել,
 Երկարորեն, աննպատակ ճամփորդելուց ջարդված, հոգնած
 Հառաչանքով հանգստանալ ու քնանալ,
 Լուսնի նման՝ արևից՝ քո, խավ սփրթնել.
 Ծիածանի ուրիշ գույնով գունավորվել:

21 հունիս 2001

Բա՛ց քո աչքերը
 Ու երկար, անթարթ ինձ վրա նայիր,
 Աչքերիդ շանթով իմ կնճիռներում
 Թեթև թրթռացող
 Արցունքի փոքրիկ, շողարձակ կաթիլին անգուսպ հետևիր:
 Ոգիանում է լույսը արևի,
 Թախծում է իմ դեմ:
 Բայց, խո՛րը նայիր,
 Ընդերքից ելած տառապանքն է լո՛ւյս
 Ու իմ ծիծաղով մաքրված թախիժ,
 Թախի՞՞ծ՝ թախծի դեմ,
 Կարոտ ու կսկիծ:
 Շնորհապարտ եմ իրիկնաժամին
 Երկիր ուղարկված բարակ անձրևին,
 Իմ ճախրումներին, իմ ճշումներին
 Ու չմոռանամ,
 Առավոտ կանուխ շրթունքս ցողեմ
 Մերկ իմ թաթերի ծայրին բարձրացած
 Ես առաջինը թուխպը համբուրեմ,
 Եվ ձոնեն նրան օրհնություն ու փառք,
 Ես քեզ երգ էի պարտք:
 Օ՛, շնորհակալ եմ,
 Լավ ծաղիկներ եմ,
 Թույլ տուր առանձնացնել այս ծաղկեփնջից
 Կանաչ-կարմիրը,
 Երանգավորել մեռած անձրևի ծիածանային տապանագիրը:
 Ու տարիներով այսպես ներկելով տապալված կամար՝
 Իմ տեսիլների փնջից անհամար
 Ավա՛ղ պակասում են գույներ ու երանգ,
 Անգույն եմ դառնում, ու չունեմ ոչինչ
 Ու ինձ մնում է ուսի մի բեկոր, իմ աչքերը ցինջ,
 Մատներս ի վար կաթում է քնքուշ խաղի մի շվար,
 Ու տարուբերելով ոտքերիդ միջև տապալված մի քար,
 Հերքված հեքիաթ, մարգարե, մամռոտած մի դար՝
 Քնած մրրիկի արթնացումները դեռ կնշմարեմ,
 Մոլեգին հողմը խուլ կհառաչի փողոցում խավար
 Ու մթի միջով ոչ ոք չի տեսնի իմ երթը տխուր,
 Եվ հողմը միայն ոռնոցով իր խուլ
 Հետքերիս վրա տխուր կվայի:

24 հունիս 2001

Աղքատ խոսքերով շատ զարմանալի մի ծանոթություն
 Ինքս պատրաստած իմ դժնդալի մարմնի համար,
 Ապահովելով սպիտակ ձմեռվա ցուրտ գաղտնիություն՝
 Երեք գանգերը մեկուսանում են տնում բավարար:
 Եվ այլ մի հրաշք՝
 Մեծոտ ու փոքրոտ այդ կղզիների արշիպելագում
 Հեռանալու միտք է ծագում երրորդի գանգում:
 Եվ իմ ու քո մեջ ծավալվում է լուռ
 Մի զարմանալի սրբագործություն,
 Այդքան փորձված, բայց բոլորովին անծանոթ մի ծես,
 Որի ընթացքում հոգուս մոմերը
 Քո փայտանյութով պիտի դու վառես,
 Ու իմ մկանե դարպասները կոռ պիտի դու այրես:
 Ու դողում են իմ շրթունքները՝ զիլ հառաչելով,
 Իմ վառարանում անտաշ փայտանյութ ես դեռ չեմ այրել,
 Ու միշտ հիշում եմ իմ ծիծաղը ես ջերմ կարկաչյունով,
 Երբ դու փորձում էիր իմ կրակներում քո կամքը հալել:
 Եվ իսկապես, որ իմ ու քո միջև հողմեր են շաչել:
 Հիմա տառապում է մեր բաժանումի վառարանը՝ մութ, երբևէ շիկնած,
 Առանց քարածուխ կամ թե հենց ածուխ
 Իր չորսբոլորը ջերմություն ցայտած,
 Բոսոր շանթերով խենթ շառագունած,
 Ծով բոցավառված, արև նկարած,
 Վառ գունավորված, երանգավորված,
 Ինչպես մի թաքուն ամոթ նկարված,
 Սառցե ձեռքերի սահուն փաթիլներով,
 Չորս հատիկ բառով առույգ բորբոքված,
 Ներս ծավալվելով, դուրս թավալվելով,
 Վարդով, շուշանով, նարգիզ, ռեհանով,
 Բույրերով օձված ու հոտավորված,
 Բնության կանչով բնութավորված,
 Պարզ շարժումներով, զիլ շարժուձևով
 Մկսված, զարգացած, եզրափակված
 Ու լիցքավորված ու լիցքաթափված:

Իմ կրակները դանդաղ մարել են,
 Ողբերգություն է թաքուն կատարվել,
 Տաք մոխիրներս շա՛տ միայնակ են հիմա մնացել,
 Հրդեհից հետո լքված տնակը
 Շա՛տ խորդիրդավոր փորձում է լռել,
 Թեև ես այնտեղ ժամերգություն եմ այսօր պատվիրել:
 Եվ այդչափ հրաշք տեսնելուց հետո
 Ինձ համար դարձյալ հրաշքը վերին
 Քո կրակներում մերկ այրվելու
 Այդ վաղնջական երանությունն է,
 Գարձյալ ու դարձյալ այն վայրկյանն է սուրբ,
 Երբ քո բաղձալի մթին աչքերում
 Շիկ կայծկլտում էին վարանումները անգոր մարմնիս՝
 Գառնալով անմեղ-մեղավոր մոխիր,
 Երջանկավորված հակիրճ մի ոճիր,
 Եվ դա՛ էլ դարձյալ, դա՛ էլ երևի
 Քո կրակներում մերկ այրվելու
 Նույն վաղնջական երանությունն է:

24 հունիս 2001

ԳԱՐՇԱՀՈՏՈՒԹՅՈՒՆ

Գարշահոտություն վրաս կթաղեն,
 Ծակոտկեն մաշկս կավազապատեն,
 Երեք բլուրից աղյուս հավաքեն,
 Հոտավետ օդում պարիսպ կառուցեն,
 Աշտարակներում ես պահակ կանգնեմ,
 Աշտանակներում մեհյաններ վառեմ,
 Միակ ընկերս ագռավին կարգեմ
 Ու կտցահարվեմ, կռնչյուն հանեմ,
 Խնդրեմ իմ դժգույն մաշկի խորքերից
 Ավազը մաքրի, երբ դու ինձ դառնաս,
 Ու մաշկահանված նրա փետուրից
 Գիշերը կարված թիկնոցս վրաս
 Վազեմ քո դիմաց, սուրամ ընդառաջ,
 Առաջ ընկնեմ քո ճակատագրից,
 Ցատկեմ պարսպից, աշտարակներից
 Եվ քեզ հասնելով՝ շրթունքս լզեմ,
 Ժանտախտ մտքերս ի կատար ածեմ,
 Թքեմ քո աչքին, հետո աջ ձեռքին,
 Ագռավատուն բերնումս մազերդ ծամեմ,
 Հանեմ մացառներ վրադ աճեցնեմ
 Ու պարարտացնեմ արնով ահագին,
 Մեզով ջրված կեղտ առնետներից
 Քո թավ անտառում ես կարածեցնեմ,
 Սովամահ արված իմ ընկերներից,
 Իմ ագռավներից, իմ դառդառներից
 Քթիդ լորձունքով կկերակրեմ,
 Ուղեղդ կտամ նրանց ընթրիքին,
 Այսպես կքամեմ հյութերդ, ստորի՛ն,
 Գանդաղ ու դաժան, արհամարհական:

1 հուլիս 2001

ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Ես պետք է արցունքներ լացեմ
Աստվածային կարմիր ծեսերին,
Գլխաբաց նստեմ աղոթքներ անեմ
Պարահանդեսի դիվին դևերին:

Ու եկեղեցուց թաքուն հեռանամ
Քարաշեն շենքում ցուրտ մեկուսանամ,
Բարակ որդերիս ազատ արձակեմ
Ու կերակրեմ խաչափառերով:

Քթիցս թափեմ ես աղոենալին
Ու հրաման տամ ծափահարելու,
Վազքարշավ ելած ժամացույցներին
Դաղար եմ տալու ու հեռանալու:

Իմ հետ կտանեմ երկու սլաքներ,
Տներ, եղեգներ, գնացքի գծեր,
Իմ ժամն է եկել, վազքով արշավներ,
Երկու սլաքներ, աջ ու ձախ կողմեր:

Կգամ, կքայլենք երկուսով սահուն,
Դու ինձ կուղեկցես աշխարհներ թաքուն,
Ու մի օր էլ ես խաղերով սիրուն
Ընդառաջ ընկած կտանեմ քեզ տուն:

Դաշտով անցնելիս սիրող կիսբեմ
Երկու սլաքներ ու մի ցուցանակ,
Քամած արյունդ ինձ թանաք կանեմ
Տապանաքարդ կեղեռնապատեմ:

Բացատի փոքրիկ կանաչ կածանում
Քարերը շուռ տամ, քեզ հողին պահ տամ,
Տոխմ եղեգներ վրադ աճեցնեմ,
Բերքահավաքիդ չմոռանամ գամ:

Եվ հրավերքներ ուղարկեմ աջ-ձախ,
Գլխիս հավաքեմ քոռ, համր ու կաղ,
Խրախճանք անենք ուրախ ու անվախ,
Զիլ թմբկահարենք քո նիհար դագաղ:

Ես էլ կլինեմ ուրախ ծաղրածու,
Կստիպեմ բոլորին ծաղրել քեզ վրա,
Հոգոց կհանեմ գոհացած ու
Խուլ թրմփոցով կիջնեմ քեզ վրա:

Կենացներ կասեմ շատ նվիրական,
Խոսքեր կվատնեմ պերճ ու զանազան,
Ճկուն շարժումով շատ վճռական
Վրադ կուղարկեմ տասնյոթ գազան:

Գայլերիս պահ կտամ սև նեգրներին,
Ետ կվերցնեմ մի կոշտ պայմանով,
Երբ արահետով մենք դեպի քեզ գանք
Սև թող ճառագեն իրենց աչքերով:

Մեր դողդյունից դու վեր կկենաս,
Արթուն կնստես քո եղեգնուտում,
Բայց ա՛յ քեզ զարմանք, մեծ արհամարհանք,
Կես ճանապարհից մենք տուն կդառնանք:

Դե՛, մնա՛ մենակ, լքված, մոռացված,
Վախեցի՛ր մթից՝ կապույտ սարսափով,
Դագաղդ քաշիր վրադ, անիծվա՛ծ,
Ոհմակ է անցնելու վաղը այդտեղով:

Վե՛րջ, որոշել եմ թաղում պատվիրել,
Դառնալ ծաղրածու, գայլեր վարժեցնող,
Երկու սլաքով քեզ մատնանշել,
Մոտակա պարիս պատվով պատրաստվել:

2 հուլիս 2001

ՉԵԶՊԵՄՆԵՐԻՆ

Նկատվածը պարտավոր է լինել հզոր.
 Ես անցնում եմ, հպարտորեն տարուբերում իմ գլուխը,
 Աջ եմ նայում, ձախ եմ տեսնում,
 Չախ եմ նայում, ձախ եմ տեսնում,
 Հիշե՛ք դուք ինձ, երբ ես տղա՝ քսանամյա,
 Բարևում էի ձեզպեսներին:

Անցավորը տապալում է մարդկանց անգոր.
 Ես քայլում եմ, թեթևորեն արտաբերում իմ տաք խոսքը,
 Ներքև եմ նայում, վերև եմ տեսնում,
 Վերև եմ նայում, վերև եմ տեսնում,
 Գովե՛ք դուք ինձ, երբ ես տղան՝ ամենամյա,
 Չեմ ողջունում ձեզպեսներին:

30 օգոստոս 2001

ՔԱՂԱՔԸ, ԵՍ... ԻՄ ՊՈՆԵՍԸ

Ու քաղաքը արթնանում է
 Սառցապատված ցրտությունից,
 Մեկ գիշերում տեղակայված
 Խստաբարո ու խստաշունչ
 Ճերմակաթույր ձմեռվանից:
 Լուսաբացին ցուրտ սենյակում
 Արթնանում են երկու տղա,
 Ու, սթափվելով կենակցելու սարսուռներից,
 Սարսուռ են ոգիացած փաթիլներից,
 Ձյունով պատված ցուրտ սենյակում
 Արևներ են հանկարծ ծագում,
 Ցայգ են երգում երկու մարմին,
 Տարուբերվում, նետվում աջ, ձախ
 Ու ճոճվում են առանց դադար,
 Դառնում սիրո մի մեծ կամար,
 Քարանում են՝ պահն է խաղաղ...
 ... Ու մրսում են երկու տղա,
 Չմեռ ապրած այդ սենյակում.
 Պահն ապրածի ուրախության
 Լացն է խեղդում փխրուններին,
 Բայց արցունքի կաթիլներում
 Ծնունդ առավ, շողարձակեց
 Չմռան որդին՝ ձյան փաթիլը,
 Իջավ, նստեց մահճակալին,
 Հավվեց, անցավ պատահաբար
 Նրա վրա հրված-ընկած մերկ մարմնին,
 Ու ձյուն դարձավ հոգին նրա,
 Սիրտը դարձավ ձմռան բեկոր,
 Երակներում դաժանաբար
 Սառույց կապեց լերկ արյունը,
 Իսկույն հանգչեց հանկարծ ծագած ցայգ արևը.
 Նա հեռացավ ու խառնվեց ամբոխներին:
 Ու փոխարենն այդ տղայի,

Իր անկողնում մենակ թողնված
Ու հերթական անգամ լքված այս տղայի
Գլխուղեղում՝ ձյունով պատված,
Դրվեց մի նոր տապանաքար՝
Մառը հուշով խաչավորված:

... Ու քաղաքը արթնանում է
Յուրտ ձմեռվա ներխուժումից,
Ու սենյակում թավալվում է,
Տանջահարվում բաժանումից
Մի ցուրտ տղա:
Բայց տակավին չհանդարտված,
Քուրք ու մուշտակ, խելագարված
Այս անգամ էլ ինքն է լքում
Իր սենյակը, մենությունից, ցրտից լացող,
Աղերսագին մեկին կանչող, չկշտացող,
Չմռան ցրտով, ձյան փաթիլով
Գունավորված իր օթևան-անկողինը,
Դուրս է նետվում դեպի քաղաք,
Ընդարմանում սառնությունից,
Եվ մի պահ էլ ու նա հանդարտ,
Ծանր վշտից իրեն շտկած
Մկսեց քայլել՝ վեհ ու անդարդ,
Ճամփան բռնեց նույն ծառուղու
Ու հերթական անգամ նորից
Նա ներս մտավ թատերաբեմ՝ կյանքի ուղի,
Աչքով արեց մի դուրեկան անծանոթի,
Քայլեց, նստեց նստարանին,
Արդեն պարզ էր, գտավ նորից
Շուրջը ոռնող ցուրտ ձմեռվան ի հակառակ
Այս գիշերվա երկարատև երազներում
Իր մարմինը տաքացնողին, գուրգուրողին,
Երիտասարդ, շատ դուրեկան այլ տղային:
Նրանց բարակ ոտքերի տակ
Մեղմ ճռճուց ձյունը ձմռան:

30 օգոստոս 2001

ՄԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ես ինձ ստիպում եմ, որ քեզ լույս աշխարհ ծննդաբերեմ,
Ու որպեսզի ես քեզանից ծնվեմ
Անհրաժեշտ է մեռնեմ ու նորից ծնվեմ,
Բայց, ավա՛ղ, հաճախ, բավական հաճախ
Հղիանում եմ ծանոթ, անծանոթ
Շատ պատահական, կամ էլ մտածված,
Վաղօրոք, նախօրոք կանխամտածված,
Չուտ գիշերային կամ ցերեկային հանդիպումներում:
Տերևաթափ է՝ դրսում՝ ծառերի՝ փտած,
Ու պտղաթափ է՝ ներսում՝ արզանդի՝ փթթած,
Հերթական ցավը, կորուստ՝ փափագած,
Արնոտ վիրակապ՝ անցքիս՝ բորբոքված,
Վերջ: Ազատված եմ, ազատագրված
Տականք ու կեղտոտ, զուտ թափառական,
Կամ ո՞վ գիտե, գուցե լավ էլ առնական,
Բարեկիրք ու ջերմ, խիստ դաստիարակված,
Օ՛ֆ, միևնույնն է, տականք ու կեղտոտ
Հերթական անգամ ինձ հետ կենակցող
Այդ տղամարդկանց բիրտ արմատներից:
Հիմա խորհում եմ դեպի ո՞ր նայեմ,
Խավարով պատված այդ չորս կողմերից
Որտե՞ղ սևեռեմ հայացքս անգույն,
Բարակ ոտքերով, դանդաղ քայլերով
Ընդհառաջ գնամ, հաստատվեմ ուրույն
Իմ ճանապարհում՝ ճակատագրի՛ս, ու ոչ թե հենց իմ,
Եվ ո՞ւմ ճանապարհին ես հանդիպելով՝
Պետք է կառուցեմ մի մեծ խաչմերուկ,
Կտրեմ, հատեմ այն, անցնեմ թրթիռով,
Վազեմ ու փարվեմ՝ լպիրշ ու անձուկ:
Չէ՛, ինչպես տեսնում եմ չեմ ունենալու
Իմ նախագծում ոչ մի խաչմերուկ
Ու չե՛մ վազելու, այլ ապրելու եմ ու միշտ քայլելու,

Վա՛յ, ա՛յ քեզ որձկտալու նենգահոտություն,
 Արդեն հոտեցին քո բեկորները,
 Որ շատ քիչ առաջ ինձնից վիժվեցին
 Ու թույլ ծորալով՝ գետնին թափվեցին,
 Լա՛վ, արդեն լավ եմ, ելնեմ հավաքեմ
 Այս արնաշաղախ մսագնդերը,
 Մի հատ լվացվեմ, կազդուրվեմ, սթափվեմ,
 Որքա՞ն կարող եմ ես այսպես պառկել,
 Դուրս գամ, որոնեմ ինձ բեղմնավորող,
 Մի քանի վայրկյան ինձ ոգեշնչող,
 Բարակ իրանս իր գիրկն առնող,
 Հերթական անգամ իմ մեջ թափանցող,
 Նենգաբար ստող, ինձ սեր խոստացող,
 Բայց գոնե ա՛յս անգամ շատ երիտասարդ
 Ու շատ գրավիչ, խիստ պատկառելի,
 Աստվածավախ որդուս ազնիվ հայրիկին,
 Իմ քառասուներկուերորդ մահկանացուին:

9, 10 սեպտեմբեր 2001

ԿԱՆԽԱՄՏԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեզ չեն վազանցի,
 Մեզ էլ չեն հասնի,
 Չէ՞ որ մենակ ենք
 Մենք այսուհետև,
 Քաղաքը թողնենք
 Մեզանից հետև,
 Այդպիսին երկուսս ենք,
 Զգա՛ ես ու դու ենք,
 Մենք միայնակ ենք,
 Անջատ, հեռու ենք,
 Բոլորից տարբեր
 Ու քարկոծված ենք,
 Տանջված ու մաշված,
 Արհամարհված ենք:
 Առանց մտածված,
 Ծիլ՝ արտում դարձած,
 Մեր կամքի փառքով,
 Ամպերի կառքով
 Եկ փախչենք՝ հոգնած՝
 Տնից, ամբոխից,
 Նախիր, ոհմակից,
 Դառնանք ուղևոր
 Չմռան գնացքի,
 Յուրտ կայարանի,
 Օղակայանի,
 Պահ տանք սովերը
 Մեր մարմինների
 Օդին ու ջրին,
 Մռայլ բարքերին,
 Ու մեզ չեն գտնի,
 Մեզ էլ չեն հասնի:
 Դե ե՛կ, շուտ փախչենք,
 Գիշերը խավար
 Մեր բռունցքներում
 Հավաքենք պահենք,
 Բայց շատ շտապելուց

Հանկարծ վայր գցենք,
 Փշրենք ու ջարդենք,
 Ծաղրուծանակենք
 Ու ոտնահարենք,
 Թքով շաղախենք,
 Հանենք ցեխտոված
 Լուսինը փակենք
 Ու խավար ստեղծենք,
 Բոլորից փախչենք:
 Եվ դատարկություն
 Խաչմերուկներում,
 Եվ մեզ չհասնող,
 Մեզ չվազանցող
 Սև դատարկություն
 Ու մի լռություն,
 Հազար հայացքներ,
 Աչքեր, ականջներ
 Եվ դատարկություն,
 Մրտեր, հոգիներ,
 Կեղծ բարեպաշտներ,
 Բութ հառաչանքներ
 Եվ ափսոսանքներ:
 Չբացատրե՛ս,
 Չբացատրվե՛ս,
 Մեր մասին նրանց
 Ոչինչ չպատմես,
 Միայն ո՛չ նրանք,
 Միայն ո՛չ նրանց,
 Միայն ո՛չ մոտիկ
 Լինենք մենք նրանց,
 Լա՛վ է ոչ մի ձև,
 Բայց առանց նրանց,
 Միայն ո՛չ մի դարձ,
 Միայն ու միայն
 Ոչ մի հետադարձ:

26 սեպտեմբեր 2001

Չեմ էլ սիրելու, սիրահարվելու կամ էլ սիրվելու:

ՃԵՂՔՈՒՄԸ ՆՐԱ

Եվ հոգնածություն, դավաճանություն,
Անտարբեր, բայց ճոխ հյուրասիրություն,
Մացառ հոնքերի փետրավորություն,
Եվ արյունակցի երկյուղածություն...

Ու որպես այնտեղ՝ թուխպերում ճախարող
Վերջին երամի հոգնած մի կարապ
Ես քո ուսերն եմ օթևան ընտրում,
Դավաճանում եմ հովիտ ու քարափ:

Հոնքերի վերջին, վերջին մշուշով
Հրճվում է նա,
Կարմիր մասրենու արտասուքներով
Թրջվում է նա:

Արթնացող ամպի հառաչն առաջին
Գալիս մտնում է ականջը նրա,
Չով որոտները ցավով ու անցավ
Ճեխքում են թիկունքն ու լանջը նրա:

Կայծակ էր, նետվեց, բեկվեց, թպրտաց
Ու մեկը մեռավ ուսերին նրա,
Ամպրո՛պ էր, պայթեց, փլվեց ու գնաց
Ու մեզը մեռավ ձեռքերում նրա:

Թևերն ամփոփեց, հավաքվեց թռավ,
Շշուկը մեռավ շուրթերին նրա,
Ուժասպառ եղավ, հոգնած կորացավ,
Ցավը կուչ եկավ բազուկին նրա:

Ժրաջան մեղուն նեկտարն առավ
Բերեց ու ցողեց թաց վարսը նրա,
Փափուկ կարիճը թույնաթափ եղավ,
Եկավ կուտակվեց երակում նրա:

Միրո մորմոքով փոքրիկ մի կաքավ
Բողոք է պատմում հայացքին նրա,
Ու մրջյունների քարավանն անդամ
Օրհնանք է բերում խոսքերին նրա:

Նա հրճվում է բոլոր բոլորի առած տվածով...

Եվ ծավալվում է շոգը շնչասպառ,
Ստվեր է փնտրում նրա փեշի տակ,
Ու արեգակի տաք շողքը պայծառ
Խուտուտ է տալիս շրթունքները փակ:

Բարակ մութի հետ իրիկնաժամին
Ձեռ առնելու չափ միամիտ մի հով
Գալիս խաղում է մարմնով սպիտակ
Թե. «Տեսե՛ք, տեսե՛ք, ես էլ եմ քամի»:

Բայց հեղուկ է ինչպես հովատակ,
Չուր պատառոտում կոկորդը դատարկ,
Ուրուր ու արծիվ մագիլ են սրում,
Գալիս նրանից մի խորշ են պոկում:

Ժամանակն այսպես գալիս է, գնում,
Իշխում է երկար կամ շուտ հեռանում,
Չուր հրճվում են որոշ ժամանակ,
Վայելում պահը սին վայրկյանների:

Եվ տարվա վրա ծավլում է տարին,
Բերում մոտեցնում դժնդակ պահին,
Ու խեղճ պատանին մենակ չի մնում
Խորհի՛ թե ի՞նչ է տալու աշխարհին:

Թողե՛ք նա մի քիչ ինքն իր հետ մնա,
Ծանր ու թեթև անի բոլորին,
Իր ներսը նայի, և ո՞վ իմանա
Գուցե թե ուրիշ պատանի ծնվի:

BRAVO! BRAVISSIMO!

Մի պատուհան եմ միայն ես թողել,
 Բացել ու փակել այն հոգիս գիտե,
 Ժամանակ առ ժամ նա դուրս է ճախրում
 Ու ետ է գալիս, երբ հոգնած է նա:
 Գալիս դեմ դիմաց նստում է ինձ հետ,
 Փորձում է գրուցել պառավածիս հետ,
 Բայց չի էլ անգամ կանխագուշակում,
 Որ հեքիաթասածը ե՛ս եմ լինելու:
 Խեղճ, մտացածին, թեթև ստվերը
 Մինչև այսօր միամտաբար, հլու
 Կարծում է, որ շատ բան ունի պատմելու,
 Ինձ հետ կիսվելու, բացահայտվելու:
 Ու մոռանում է, նա ամեն անգամ
 Այդ ես եմ նրան պարզելի ուղեղ մտտո,
 Մի քանի երակ, կեցվածք ոսկրոտ՝
 Մարմնիս նիհար ճամպրուկում բրդոտ,
 Ու ման եմ ածել ուռենիների երկար ծառուղում,
 Իմ աչքերով եմ նրան ցույց տվել,
 Իմ ականջներով եմ նրան լսեցրել,
 Իմ զգայարաններով եմ նրան կաշկանդել,
 Դյուրեղ, գրավել, զգացնել տվել
 Ե՛վ պատրանքը՝ վառ, և՛ զագրանքը՝ սև,
 Իմ քայլվածքով ես, իմ շարժումնով
 Գայթակղել եմ ու նրան տվել՝
 Թող զբաղվի սիրով՝ վայել, անվայել,
 Յուրտ գիշերներում ինձ եմ սառեցրել,
 Ինձ եմ տաքացրել տապ գիշերներում,
 Խաչմերուկներում ինձ եմ կանգնեցրել,
 Բառերն ընտրել եմ իմ խոսացվածքում,
 Ե՛վ տառապել եմ, և՛ տապալվել եմ,
 Բայց և երբեմն՝ գնահատվել եմ,
 Փաղաքշվել եմ և գուրգուրվել եմ,
 Սակայն այս դեպքում նորից ու կրկին

Ես իմը բնավ չեմ եղել, ընդամին,
 Էլ ո՞ր է մնացել, որ քոնը լինեմ,
 Թեթև, անկշիռ մի գոյացության,
 Հետմահու պիտակ շողքինը լինեմ,
 Ինձ քեզ նվիրեմ, ես ինձ մոռանամ
 Քեզ երկրպագեմ, քո համար ապրեմ,
 Քո ուզեցածը ինձնով վայելես,
 Ինձ բան չթողնես, թալանես, տանես,
 Ու վերջին պահին՝ կածանիս վերջում
 Դու հռչոցով ինձանից պոկվես,
 Շուրջը դիակիս ոստոտես, պարես,
 Օգտագործածը պատյանի վրա անգամ չմայե՛ս,
 Անտեր ինձ թողնես, երկինք համբարձվես,
 Սուրբ ձևանալով՝ դրախտ հաստատվես,
 Ինձ՝ մեղավորիս, դժոխք շարտես:
 Բայց որպես երբևէ իմ մեջ հաստատված
 Արնաճաճանչ վառ փայլատակություն
 Մի օր դու կիջնես, կգաս հողի տակ,
 Անձուկ կարոտով դու ինձ կփնտրես,
 Վերագտնելով՝ ջերմ կփաթաթվես,
 Գլուխդ խոնարհ կիջեցնես հատակ
 Եվ իմ կրծոտված մոխրի վրա
 Ե՛հիշտ այն նույն տեղում որպես հիշատակ,
 Որտեղ ականջս էր կյանքում երեկվա
 Լուռ կշռնջաս՝ ափսոսանքով մեծ.
 - Հազա՛ր կեցցեմե՛ր, մարմնիդ անեղծ,
 Հազա՛ր կեցցեմե՛ր, երդվում եմ անկեղծ,
 Ռոնատակ տված ամպերում անգամ
 Քեզ փառքեր տալով՝ կրկնում եմ ես՝
 Առանց երեսպաշտելու և առանց ամոթ,
 Հազա՛ր կեցցեմե՛ր, բռավիսիմո՛:

1-23 նոյեմբեր 2001

ԿԱՐԾԵՑՅԱԼ ՏՂԱՆ

Հրե զամբյուղ՝ տաք արևի, նարնջագույն արևածագ,
 Ու մի տղա,
 Խիստ վեհաշուք թաց լորենի՝ երկարածիզ ծառուղիում,
 Մի այլ տղա,
 Ու սրտածև տերևներում շողքերի խաղ, շողարձակում,
 Ու մի տղա,
 Երկնային հավերժության քաղցր ծփանք, քրտինք, հեշտանք,
 Մի այլ տղա,
 Գառը խոտի հոգին զավթող բուրմունք ու հուր,
 Ու մի տղա,
 Լուսապսակ միջատների խանդավառանք, խանդավատանք,
 Մի այլ տղա,
 Բզզոց, դզզոց, սվոց, գվվոց, տնքոց, նվվոց,
 Ու մի տղա,
 Պերճ զարթոնքին պերճաբարբառ մի դեղձանիկ,
 Մի այլ տղա,
 Չայնակցելու հոգեխառով մի հեկեկոց, սուր հևհևոց,
 Ու մի տղա,
 Հեռվում լավող տրակտորի խուլ հռնդյուն,
 Մի այլ տղա,
 Խռովարար կեղտապատում՝ հիշողության, մտքի ճնշման,
 Ու մի տղա,
 Արյուն ծծող երկու մոծակ, պուտիկավոր կարմիր գատիկ,
 Մի այլ տղա,
 Լուսաբացի հրաշք օդի խոր ներշնչում,
 Ու մի տղա,
 Շատ քայլելուց, կոտրտվելուց հոգնած մարմին,
 Մի այլ տղա,
 Չեռքեր, ոտքեր, մատների խաղ՝ ձեռքով՝ ոտքի,
 Ու մի տղա,
 Բերան, շրթունք, թքի ավար գազանաբար,
 Մի այլ տղա,
 Թեթև պրկում շրթունքների, վզի մի խաղ, աչքերի խայծ,
 Ու մի տղա,

Մեկուսացված կենակցելու, կրքի վառ կայծ,
 Մի այլ տղա,
 Ժամանակը չափչփելու սլաքների իրարանցում,
 Ու մի տղա
 Կոկորդ քերող, քիթը մաքրող թշնամաբար,
 Մի այլ տղա,
 Մեջքը ծռող, առաջ ցցվող պահի անցում,
 Ու մի տղա,
 Աստվածացում, այլասերված մի տեսարան,
 Մի այլ տղա,
 Լուսինացում, կրքերի ճոխ մեծ տափաստան,
 Ու մի տղա,
 Մի այլ տղա,
 Եվ մի տղա,
 Երկու տղա...

8 նոյեմբեր 2001

ԻՄՍՅԵՆԱՐԸ

Մի կինոթատրոն,
Առռելի դահլիճ,
Վիթխարի էկրան,
Ներխուժող ամբոխ,
Պատռված կտրոն,
Երեք հատ զանգեր,
Նստարան՝ ոչ ճոխ,
Ծափ տալը պետք չէ,
Ֆիլմը սկսված է:

Քիչ ուշացումով
Ներս է տողսկում
Կարծեցյալ տղան՝
Ահավոր քաղցած,
Նհիհար ու դալուկ
Տկար, սովալլուկ:
Գեղին ծաղիկներ.
Վեց հատ երիցուկ,
Մեկը թոռոմած՝
Դա յոթերորդն էր
Ծաղիկն ու տեղը
Նախավերջինն էր
Կարգը՝ տղայի:

Սկսնակի համար
Բավական վատ չէր,
Թերևս աննշույլ
Շատ ծանոթ սարսուռ,
Սակայն խանգարիչ
Ոչ մի հանգամանք,
Տարակուսանքներ,
Ինքնաքննարկում,
Տատանողական

Անդուր վիճակներ:
Սկսվե՛ց,
Գրգռված տղան
Նյարդաքայքայվեց,
Ինքնահաստատվեց,
Կենտրոնաձգված
Շտկումներ արեց,
Եվ ահա՛.
Շատ վճռական
Մի քանի նստարան
Աջ կողմ մագցեց,
Գրգռված տղան
Գրգռված տղուն
Մին պատրվակով
Առաջարկ արեց:

Նշանակետը ճիշտ էր ընտրված,
Ախր նմանը
Իրեն նմանին
Չարմանալի կերպով
Շուտ է ճանաչում,
Նաև զգում է
Կամ էլ շատ հանկարծ,
Խիստ պատահական
Բացահայտում է
Տեղի ունենում,
Որից հետո էլ...
Ժամ է հարցվում
Կամ թույլ սիգարետի
Երկու գլանակ է
Լուռ բաց թողնվում,
Ինչպես այս դեպքում:
Կարճ ասած,

Երկու վայրկյաններ հետո
Տաք ջրի կաթիլով
Իրար ցողելու
Համակ միտումով
Վեր կացան տեղից,
Շարքերով անցան
Ու լուռ դուրս եկան
Կինոյի կեսից:

Տղան մոռացավ,
Որ մեկ ժամ առաջ
Նա իրեն զգացել էր
Խիստ արհամարհված
Ու հուսահատված,
Պայմանավորված
Մեկ ուրիշ տղան՝
Չորակոչիկն այն,
Պարզապես չէր եկել
Ժամադրավայր,
Եվ հիմա տղան
Քաղաքը թրջող
Հանդարտ անձրևի
Կաթիլների տակ

Եվ ուղեկցությամբ
Մեկ այլ տղայի
Գնում է ուրախ՝
Ձեռքին կարմիր տուփ՝
Օծանելիքի,
Եվ պարագաներ՝
Լողանալիքի.
Եվ չի էլ անգամ
Կանխագուշակում,
Որ այս նոր տղան
Մինչև այս պահը
Նրան լողացրած
Գայլուկների մեջ
Լավագույնի պատվին է
Արժանացվելու:

Եվ իսկապես որ,
Ա՛յ քեզ երագված
Բախտավորություն:

Հետաքրքիր է,
Ինչի՞ մասին էր
Ֆիլմը: Տղայի՞...

21 նոյեմբեր 2001

ԱՐՔԱՅԱՑՈՒՄ

Այնտեղ՝ վերևում՝ անտեսանելի, պիրկ գագաթներում
 Ջրի փաթիլները գոլորշի դարձած խիտ թանձրանում՝
 Ծխապատում են դարերը մաղած գանգուռը ժայռի,
 Ու ծավալվում է շնչահեղձության մի իրարանցում.
 Այս մի բեկորից մյուսն են թռչում քուլաները՝ նենգ,
 Բարձր ժպտում են՝ սպիտակին տալով բարձունքները՝ հեզ
 Ու կատաղությամբ, վայրագ սուլոցով ներքև են սուրում,
 Գահավիժում են, երբ որ տեսնում են իրենց վերելքում
 Հանկարծ ներքևում մերկացած մնաց որևէ գանգուռ,
 Ու տիրանալով՝ նորից են ժպտում, նորից ցնծում են, նորից ելնում են,
 Միաձուլվում են ծայրահեղ ճերմակ ամպի գծերին
 Ու խժռվում են միամտաբար, ու կլանվում են անհագուրդաբար,
 Գնում են՝ դառնում հերթական նորածին կաթիլը՝ ամպի,
 Կաթիլ առ կաթիլ հարստացնում են պառավ-ծեր ամպին,
 Ու երբ ագահը՝ պառավ-ծեր ամպը էլ չի դիմանում
 Ստիպված է լինում հոգին ավետել մարդկանց աշխարհին
 Ու շորորալով՝ գնում բախվում է վայնասունաբար
 Մեկ ուրիշ թուխայի ու գոռգոռում են, ու հեծկլտում են,
 Ոչ-ոք չի հաղթում՝ երկուսն էլ փոքրիկ ցողիկներ դառնում,
 Բրոնզ ես թափում, գլորվում են ցած. անձրև է ծորում:
 Անդուլ նվվոցով թափվում են ներքև ու, երբ հասնում են կանաչ անտառին
 Լիրբ քրքշում են, թե. «Տեսե՛ք, տեսե՛ք, մենք նորից եկանք՝ տեսքով այլաբար»:
 Նոր կարած կանաչ զգեստներ հագած մութ եղևնուտում
 Համեստ լռում են տասնվեց հատ ծառ՝ դիմադրաբար,
 Ու կաթիլները՝ գոլորշիախառ, հանգրվանում են փշոտ սաղարթում
 Մինչև լուսաբաց, մինչև արբեցում, ցայգակատարում,
 Մինչդեռ գիշեր էր, կար ոսկե փշրանք սև երկնակամարում...
 Առավոտյան կողմ, թրջված խոտի թարմ հարթությունում
 Այս ու այն կողմից անտառ ներխուժած ճառագայթներից
 Սկսեց փայփլել ցողը՝ վաղորդյան՝ տաքացած օդում,
 Չարթոնք էր ապրում երեկվա ջրի ներխուժումներից
 Մի հնադարյան, բայց և կուսական զիլ մամռապատում,
 Կային և՛ ծղրիղներ, և՛ դրախտ բուրող նուրբ մանուշակներ,

Նորից եղևնի, արական կոներ, փշեր ու խեժեր,
 Ե՛վ արեգակ կար, և՛ շոշափելի ու բուրումնավետ ճոխ աշխուժացում,
 Ե՛վ հեքիաթային կամ թատերական ավանդապատում...
 Բայց չէր ազատվել տարածքը նվվոց-ջրածայներից,
 Այնտեղ՝ ներքևում՝ դարավանդ փոսում, կատարվում էր խենթ մի
իրարանցում,
 Արքայանում էր կաթիլն անձրևի, ոգիանում էր, արեգակնանում,
 Ծափահարում էր, տիեզերք թռչում՝ աստղ էր դառնում,
 Ծեփվում էր քարին, ոստում էր, ցայտում,
 Լուսավորվելով ու կայծկլտալով՝ ասուպ էր դառնում,
 Վերից էր նայում իր բնօրրանին, իր ծննդավայր պառավ ամպերին,
 Վեհ շարժումներով նրանց էր տալիս յոթ կոր երանգներ,
 Ջրվեժ էր դառնում ու հագեցնում էր հսկա եթերներ,
 Արքայավայել իր բարձունքներից նետվում էր ձորակ,
 Մնում էր կախված, անշարժանում էր որպես գոլ ժանյակ.
 Ու որպես բարեգութ, գթասիրտ արքա հիշում էր կարծես,
 Որ արքաներից յոթ սարեր այն կողմ
 Ջրի կաթիլով է վայրկյանը չափվում,
 Ավագուտների միատարր պարսում
 Եվ բեռնած ուղտերի ծեր քարավանում
 Կյանքը թռչում է, խամրում է, խանձվում,
 Մի ուրիշ տեղ էլ աղով հագեցած
 Ժայռի բեկորներ՝ իրար դեմ ելած,
 Իրար են ճգնում, փորձում են հաղթել ուժը կենարար,
 Բայց, արականացված այս մի տարածքում
 Թնդում է ջրի ճոխ արքայացում:

14 դեկտեմբեր 2001

ՏԵՈՒՐ ԳՈՒՅՆԸ: ԿԱՐՍԻՐ

Տաք, մեղմ աշուն էր, չքնաղ այգի էր ու տուն՝
Կարծես ծածկված կարմիր տերևների հսկա վերմակով,
Անգուգական էր՝ միախառնված կարոտով անհուն,
Բայց բարձիթողի ու հին էր տունը՝ փայտե դռնակով:

Սակայն տանտերը գտել էր իրեն, իր հանգրվանը,
Ուր լուսաբացին հաճախ արթնանում էր նուրբ զգացումից,
Բույրից, կարմիր տերևների դյուքիչ շրշյունից,
Նստում էր անկողնում՝ մի կողմ տանելով սպիտակ սավանը:

Կախարդանք էր դա... իրեն թվում էր, որ մահացել է,
Չափազանց փխրուն կարմրավում տերևների հագիվ
լսելի բույրի նկատմամբ
Առանձնահատուկ հոգեհարազատության պատճառով նրան
Տերևներով ծածկել, կարմիր են գրել վրան:

Հիմա վառ կարմիր տնային տոգեղ զգեստը հագին
Նստել էր անշարժ իր այգու՝ հրաշեկ անտառի եզրին,
Անթարթ նայում էր հեռուն՝ անանուն ու նաև մթին՝
Իր շրջակայքի սրտածնլիկ գեղեցկության ճիշտ շարունակություն:

Նա նկարում էր, մտասուզվում, երագում, ստեղծում,
Հիշում էր սիրային պատմությունները՝ միշտ պատահական,
Որոնք սկսվել են միշտ տարբեր ձևով,
Բայց ավարտվել են խիստ միանման:

Առաջինը խելագար էր, երկրորդը՝ գեղեցիկ չափից ավելի,
Վարպետ լողորդ էր երրորդ անցորդը, չորրորդը՝
շրջիկ նույնքան պաշտելի,
Իսկ նա դարձան էր այդ հիվանդների,
Որ հիմա շնչում են ասպերախտ կյանքով՝ խիստ ողորմելի:

2 0 0 2

Բայց չէ՞ որ այս ժայռը օրերի հեռվում մուգ կարմիր դարձած
Մանկական ամուլ դայակի մման խնամել է նրանց,
Մոր մման ցավել ու փայփայել է՝ սիրուհու մման.
...Սուրճը սառել էր կարմիր գավաթում... և այդպես շարունակ:

Հիմա նա սերտել է ոսկե կանոնը իր կարմիր գրքի.
«Տղամարդուց հեռանալ միշտ առաջի՛նը, լքել՝ անվերադարձ
Եվ երբեք չափսոսալ ապրածի համար ու նաև կրքի»,
Թեև ու՞մ լքել՝ հեռացածների՞ն, կարմրատերև անտառի եզրին գամված:

Հնագրավաճառատանը լսած հազը նա մի պահ հիշեց,
Հնամաշ գրքերի, հնամյա հոտը իր օրագրի, անցած-գնացած ուրախ օրերի,
Հակիրճ, սակայն խնամքով միշտ տղագրված կարմիր երգերի
Կրկներգերը փորձեց վերհիշել ու անձայն երգեց:

Աշնանային քամին կարմիր առանձնատան ավերված բակում
Կարմրաշեկ տերևներով նոր նախշագարդ էր գծում, հորինում,
Իսկ բուխարիում կարմիր ցուլերը աշխույժ կայծկլտում
Ու օտարոտի կարմիր պարում էին, լացում, հեծկլտում:

Միայնակ պարին կարապի վերջին ճիչն էր ներդաշնակ,
Մի քանի պատառ արցունքոտ հուշեր, ապերջանիկ էր, թշվառ, հուսահատ,
Հառաչանքի տեղ՝ երկու շունչ աղոթք, ծաղիկներ ճերմակ,
Դալար գորովանք իր այգու վրա ու դռան թակոց (այդքան երագած),
ուժեղ, երկու հատ:

Ու խշրվեցին հազար հրաշեկ կարմիր տերևներ թեթև վազքի տակ,
Նա մեկնեց ձեռքը՝ առանց նշույլի մեծամտության,
Իր իսկ սրտաբաց ջերմ ընդունումից՝ կանգնեց շփոթված.
Նուրբ էր դեմքը, աչքերի մեջ ճառագում էր ծեր բարություն:

14 հունվար 2002

ՅՈԹԱՆԱՍՈՒՆԵՐՈՐԳԻՆ՝ ՅՈԹԱՆԱՍՈՒՆ ՏՈՂ

Մի քանի շարժում և ես արթնացա,
Առաջին միտքս, բնականաբար, հոգու վիհերից
Իմ հետ արթնացած, ընդարմացած ճիչն էր կարոտի,
Թերևս այսօր մի փոքր համակ ու տարօրինակ.
Կար զգացումը, որ մի քանի ժամ անց
Խավար քաղաքի աստիճաններում՝ անվերջ միայնակ,
Օտար փողոցում իրար հանդիպած
Երկու տղաներ կպատսպարվեն քարափում շիկնած,
Բայց դեռ արգանդի համը չփորձած
Դուրս պիտի վիժեն երկու տղաներ՝ արագ ու հանկարծ,
Վախը պատել էր. երրորդն էր այնտեղ նրանց այցելել՝
Թաքուն հսկելով ճանապարհները թաց:
Հիմա օրերի խորքից գարշահոտ
Միրտս, մարմինս, հոգիս, ուղեղս կուզեն ծիծաղել
Այս փոքրիկ գունդը, որ պտտվում է այն մեծ գնդի շուրջ
Ունի պատմություններ շատ զավեշտական, բայց ի սկզբանե լուրջ,
Երկուսից՝ երեք, երեքից՝ երկուս,
Նա՛ իր տեղում էր, նույն քարանձավում,
Նույնիսկ այս անգամ քաշքշուքներով ներս էր ճխտվում,
Փոխվել էր միայն երրորդը. աչքը լու՛յս,
Ու դու մի ասի, բռնապետ էր նա, այն էլ ինքնակոչ,
Իր կեղտոտ հոգում նույնքան էլ կեղտոտ
Մի նպատակ կար. լինել բախտավոր որսորդ:
Խիստ այլայլված էր այդ հայտնությունից երկրորդը՝ անհույս,
Նա կորցրել էր ոսկե պարունակությունն իրեն ճկույթի,
Գցել էր ժեխի մեջ ու պայքարում էր նա հուսահատված,
Մի քիչ բանակցե՞լ, ի՞նչ կարելի էր նրանից ուզել,
Թերևս հաճույքի տագնապոտ պահեր,
Եվ երբ աստիճանի տակ՝ դաժան փակուղում ու անօգնական
Մնում էր միայն դառնալ կրքոտ գանձ՝ հլու հնազանդ,
Խրվել, մխրճվել դժխտ, դուրեկան, բռնապետական
Ճոխ հարստության սկզբնակին զարգանդ.
-Կուզե՞ս, դու նստիր կտրված ծառի փարթամ կոճղակին:
Նրա պայմանը բավարարված էր, գործն ավարտված էր,

Մնում էր միայն բերնում հավաքել
 Անորոշ համի սպիտակ մի հեղուկ,
 Չեռքում հավաքել սև վերարկուի ծայրերը նեղուկ,
 Անվերջ միայնակ ձյունոտ քաղաքի
 Աստիճաններով վերև բարձրանալ,
 Դեմքով ուղղվել դեպի կամրջի ծայրը հակառակ
 Ու վազել, վազել, փախչել ու սուրալ, սահել ու հևալ,
 Նորից բարձրանալ ձախ ու աջ թեքվող աստիճաններով
 Ու նորից վազել, փորձել փրկվել, ձուլվել ձմեռվան:
 Եվ այդ գիժ վազքում,
 Առանձնահատուկ մի նուրբ խնամքով
 Տեղափոխվում էր կամրջի վրով
 Բերանում պահված դողդողանման սկիզբ՝
 Լի մարդկանց (օ՛, ներողություն ջարդուկների) կյանքով:
 Հարկադրանքից ետ ուշքի գալով, փախուստի ճամփին
 Բռնապետության արգասիքները
 Գետին են թքվում, բայց ոչ զգվանքով
 Ու խառնվելով՝ այն միաձուլվում է
 Մայիտակ ձմեռվա սառած ձյան շերտին,
 Եվ ապաշխարհանք է երկնքից իջնում,
 Նրա զոց դռնով ներս է սպրդում,
 Նորից ձմեռ է մտնում նրա տուն,
 Մառույցով պատված նրա աչքերում,
 Ու խոստումներ է նա իրեն տալիս,
 Որոնք նախկինում միշտ էլ տրվել են,
 Որպես ետդարձի արժանի ճգնանք,
 Բայց և դրժվել են նույնքան հեշտությամբ,
 Որքան հեշտությամբ նա խոշտանգվել է,
 Քերվել է, ճանկվել, նա՝ խոշտանգվել է:
 Ապաքինվելով՝ նորից է ելնում մեծ անցումների՝
 Ողողված լույսով՝ անցած հեքիաթի կայծկլտումների
 Ու, սովորաբար, բոլոր հետքերը
 Վարար անձրևն է լվանում, տանում,
 Իսկ այսօր ձյուն է.
 Չյունն իր սպիտակ թևերն է այսօր օդում ճախրեցնում,
 Չյուն է, ձյուն է իմ ու քո օտար քաղաքում:

20-23 հունվար 2002

ՏԻՂՍԱՓՈՍԵՐՈՒՄ

Ճիչ... շքերթն է ոզնիների,
 Լացն է մղկտում ծայրին փողի,
 Ամենուրեք զգացվում է տականքների
 Ժեխահոտը կերակրափողի:

Մինչդեռ նա վազում էր,
 Կանգառ էր անում ու ցեխ էր ուտում,
 Չհագնալով՝ ուտում էր նորից
 Ու հետ էր տալիս ու լափում նորից:

Հետո լզում էր իր շրթունքները
 Կամ էլ գրպանից նա դուրս էր բերում
 Իր դաշտանաջրոտ թաշկինակները
 Ու հոտ էր քաշում, ու սրբում էր նա իր շրթունքները:

Չկշտանալով՝ մեկիկ ընտրում էր
 Խոշոր մնացած ցեխագնդերը՝
 Քիչ առաջ փսխած իր կեղտաջրից
 Ու, բույրից արբելով, շտապ խժռում էր:

Սոված մնալով՝ բողոք էր անում,
 Փորձում էր դոփել տիղմաջրերում,
 Այս ու այն կողմ էր ժեխը ժայթքեցնում,
 Չբավարարվելով՝ ելնում էր միզում կկվաբներում:

Բջջոտ պարկի դատարկումներից,
 Ծարավ զգալով քաղցր ցեխերից՝
 Ինքնամիզում էր իր լայն բերանում
 Ու հագնում էր չփշփոցներից:

Ու հիանում էր ինքն իրեն ետով,
 Ցեխափոսերում թույլ արտահայտված
 Իր վիուկային զագրելի տեսքով,
 Իր արարածով, իր արարվածքով:

Այդպես էլ կապրեր, չէր էլ մտածի
 Մտածեցնել տալ, մի պահ կանգնեցնել,
 Սթափեցնել մարդկանց ու հանդգնեցնել
 Գալ, իր ուղիներով ներսը սպրդել:

Ու հյուրասիրվել ցեխագնդերով,
Դրանք համտեսել թարմ միզաջրով,
Վերջում հրամվել տիղմագարդանախշ
Թարմ կոնֆետով՝ կկվափետրանախշ:

Ու միջօրեին մի ստվար օրվա
Ճիշտ միջնամասում ցրտոտ ձմեռվա
Խոժոռ աչքերը կեղտին երեկվա
Հանկարծ փակվում են կամա ակամա:

26 հունվար 2002

ԳԱԼԱՐՈՒՄ... ՏՂԱՆ ՏՂԱՅՔԻՑ

Եկե՛ք, եկե՛ք դեպի դյուրական գալարքներն իմ մարմնի,
Բայց թե մեկը փորձվի բազուկներով անվարան լողալ ավը իմ ծովի
Կխոցոտեմ կես ճամփին թարթիչներիս նետերով
Ու կսուզեմ ձեր կամքի առագաստը մտովի:

Ձեր ընթացքի ծովի մեջ անաստ դիրքով կկանգնեմ
Ես իմ բոլոր թովքերով, հնայքներով իմ անշեջ
Բյուր բանակներ զինավառ ու բյուր զնդեր կշարժեմ,
Մեծ աշխարհը անհագուրդ կպարուրեմ ես իմ մեջ:

Ու կորուստների խուլ երջանկությամբ, անընտել ցավով
Կխոնարհեմ քաջագնի ձեր գլուխներն առնական,
Կգալարվեմ ձեր լանջին թովչական իմ համբյուրով
Ու կշնչեմ օդի պես թաց շուրթերը դյուրական:

Ու կելնեմ ճեմելու իմ հայացքով ոսկեթագ,
Բոցեղ աչքիս լուսի տակ դուք կլինեք գերիվար,
Հեզ կտողաք, կօղակվեք, կգալարվեք ոտքիս տակ,
Ես կայանն եմ ձեր կյանքի, դուք՝ զինվորս հերթական:

Որպես հավերժ լուսեպսակ մի փարոս
Եկե՛ք տղայք, և, սակայն, ե՛ս եմ տղան տղայքից,
Եկե՛ք, կամքս ձեր մարմնով թող խաղա,
Ես՝ և՛ ստրուկ, և՛ տիրող, ես՝ հեզ օձ, և՛ ես՝ տղա...

1 փետրվար 2002

ՈՒ ԴՈՒ ԼԱՑԵ՞Ն ԵՄ, ՏՂՈՒԿ

Լալի՞ս ես դու, լուսե՛ փոքրիկ, լո՛ւյս մանչուկ,
Փոքրիկ ես դեռ, զանգրահեր ես, սևահեր,
Ծեծել են քեզ տղաները խաղընկեր,
Լալիս ես դու, լուսե՛ մանչուկ, լո՛ւյս տղուկ:

Լա՛ց, և սակայն, օրեր կգան, հ՛ա, հաստատ
Դու կխնդաս, նրանք կլացեն, բոթից, գույժերից,
Կլացեն նրանք ցավով ահասատ,
Բայց այսօր, այսօր դու լաց՝ ծեծի հույզերից:

Լա՛ց, երկինքը ձյունում է, թափում է թերթեր,
Երա՛զ է՝ իջնում է, փռվում է թեթև,
Անրիժ աչքերից անմեղ արծաթին
Նագում են, նագուկ են, ա՛խ, ինչ ափսոս էր:

Մանկիկ ես՝ անմեղ, մնաս լուսերես, լա՛ց,
Ու միշտ մտքումս հայացքն է քո թա՛ց,
Թե ինձ ես փնտրում աշխարհում անցած,
Ուզում ես պատժես, տաս ինձ կոժ ու լաց:

Ես վրնջյունն եմ լսում քո լացի,
Ես սպասում եմ, թե կելնես իմ դեմ,
Մակայն ո՛չ, դարձի՛ր, հեռացի՛ր, գնա՛,
Ու թվում է, թե գալիս ես արդեն:

Քիչ էլ թափառիր՝ երագելով ինձ,
Անհայտ ճամփեքին ճամփորդի՛ր նորից,
Ժամանակը չէ, գթա՛, մանչո՛ւկ ինձ,
Թո՛ղ վայել ձևով տեսնեմ քեզ նորից:

Ու դու շնչում ես իմ հույզերի հետ,
Ապրում կուսական իմ երագներում,
Բայց իմ պատանի սրտում սիրահեզ
Միշտ երագ մնա, մնա արնախում...

Չէ՛, չեղավ փոքրիկ դու նորից, վերստին
Փորձում ես լացել, ուժգին հեկեկել,
Բայց ես չեմ կարող անդադրում ու հին
Հեքիաթներ պատմել քեզ մտածածին ու սին:

Հողախաղերից սևացած թևքով,
Մրբի՛ր բյուրեղը աչքերիդ, մանչո՛ւկ,
Դե՛, մի լաց, շտկվի՛ր, սթափվի՛ր, ա՛յ տղուկ
Կամ էլ... լա՛ց, լալիս ես հոնգուր ու հոնգուր:

Մի պահ էլ ու բեկվեց քո լացը,
Յողերը կորան թերթերից վարդի,
Մրբեց փոքրիկը կաթիլը լացի
Ու քայլեց, գնաց դանդաղ ու կամաց:

Դյութե՛ք ինձ, աչիկնե՛ր իմ մանկան,
Գրկե՛ք ինձ, թաթիկնե՛ր իմ մանկան,
Բռնի՛ր ինձ, պահի՛ր ինձ, փրկի՛ր ինձ,
Փրկի՛ր ինձ, ի՛ն հզոր երեխա ու... լա՛ց:

1 փետրվար 2002

ԿՏՅԱՀԱՐՎԱԾ ԼՈՒՌԹՅՈՒՆ

Ամայի պուրակ է՛ ծեր, ծուռումուռ ծառերի,
Արդեն գիշեր է՛ ուշ, առանց աստղերի,
Կանգնել եմ, հոգիս հույս է դեռ ամոքում
Եվ թվում է, ահա կգան, կանգնեն պիտի:

Միայն, հեռվից լռություն եմ կտցահարում,
Մթում ծնված ոտնաձայնը ծեր անցորդի
Դանդաղում է՛ մոտենալով... հեռանում է, անցնում՝
Տագնապներիս այնպես օտար ու անհաղորդ:

Մռայլվում եմ, փակվում հովտում իմ մտքերի,
Կրկնում եմ առանց դադար, դաստիարակվում,
Անվերջ կանգնում այս ստորոտում նողկանքների
Մինչդեռ լեռներն ինձ են կանչում անվերջ հեռվում:

Վերքս հանձնած վայելքների իմ սպեղանուն՝
Հարբած խինդով՝ անվերջ երկար որոնումի,
Թափառում եմ բերկրանքով ես դեպի տուն,
Խառնվում եմ իմ տարերքին մոռացումի:

Ինքս մի պահ թվում եմ ինձ ես երջանիկ,
Շուրջս ջահեր ու ջահեղներ կային գեղեցիկ,
Արբեցումի մշուշներից սուզվելով ցած՝
Ափսոսանք եմ տալիս կյանքին իմ վաղանցիկ:

Թափառում եմ փողոցներով, կարոտում եմ,
Խնդում, տխրում ու քայլում եմ դեպի պուրակ,
Քամին՝ կամաց, հանդիպում է ինձ խոստանում,
Բայց ես նորից լռություն եմ կտցահարում:

1 փետրվար 2002

ԻՆՔՆԱՍԱՏՆՈՒԹՈՒՆ

Նորալուսինն է, թե լիալուսինը հեզ
Գոռում է, գոչում՝ աղաղակելով
Եվ ամեն անգամ պատմում է կրքով:

Պատմում է կրքով, ինձ է քամբասում,
Արդյոք որտեղի՞ց, ինչպե՞ս իմացավ,
Որ հիմա աստղերին իր մոտ հավաքում
Ու մինչև լուսաբաց ինձ է բանասարկում:

Կարող ես ասել, ինչպե՞ս իմացավ,
Իմ թաքուն լուրը ո՞նց նա գողացավ,
Ինքն էլ չիմացավ, թե ի՞նչ նա արեց
Ու երբ հասկացավ... խավարում եղավ:

Եվ ընկեր դարձավ իմ գաղտնիքներին,
Իր սառնությունից խոցվեց խորապես,
Բերանբացություն չարեց իմ մասին,
Եվ անսովոր էր մտերմությունն այդ այնպես:

Ու լուսինն եկավ, սահուն կուտակվեց,
Իմ ճոխ աչքերում ուրույն հաստատվեց,
Ու մատնիչներ դարձան իմ աչքերը զույգ
Գավաճանվեցի... իմ լուսինները զույգ:

Կարող ես ասել, ինչպե՞ս կարող էր
Լուսինն իմանալ իր արքայական վեհ բարձունքներից,
Որ սիրում եմ քեզ՝ սիրով ես մի պերճ,
Եվ, որ դա ա՛յն ձևն է եղած սերերից:

Մի թե՞ քամին էր նրա ստրուկը,
Որ ինձ շոշափեց, լուսին բարձրացրեց,
Կամ էլ ծաղիկը լսեց իմ սուգը,
Լացս բույր սարքեց, երկինք ցնդեցրեց:

Ու այդ անամոթ կաթնագունդը ծեր,
Որ հասցնում է մեկ դժնի ամսում
Երեք երեսներ իրենից ծեփել՝
Գլխաբաց հեքիաթիս վախճանն է անում:

Շեղ լուսին լինի, թե կեռի տեսքով,
Նորալուսինն է, թե լիալուսինը հեզ
Գոռում է, գոչում՝ աղաղակելով,
Ու ամեն անգամ պատմում է կրքով:

2 փետրվար 2002

ԸՆԹԱՅՔՍ

Ո՞վ է բխեցրել իմ ընթացքները,
Շռայլումներն այս ո՞վ է ինձ տվել,
Ու երազային բարակ գանձերը
Իմ ճամփաներին ո՞վ է շաղ տվել:

Եվ տազնապն այդ վաղ գարնանային,
Եվ թեթևաբայլ հուզումներս բարկ,
Անտեղյակ կաժան միշտ բյուրեղային,
Եվ այդքան ձայներ, և այդքան զարկեր:

Ո՞վ է պարզել զարթնեցումներն իմ,
Ո՞վ է ինձ սիրել, ինձ պաշտել կյանքով,
Սփռվել դաշտերում հոգուս մտերիմ,
Լցվել իմ տապով, իմ շռայլ կամքով:

Ո՞վ է ուռկանել իմ ծովեզերքում
Անհոգ ու անփույթ, երբեմն անփայլ,
Ինձ ամփոփել է մարգարտաշարում
Ու խաղաղ շաղախել պիրկ վզերն այլ:

Ո՞վ է իմ կյանքին տվել երազներ
Ու երազներիս պարզել կյանքեր,
Ինքը մնացել անհաս աստված,
Այդքան հարուստ ես, շռայլ, բայց՝ անհաս:

2 փետրվար 2002

ԱՆԽՈՋ ՀՈՐՉԱՆՔՍ

Իսկ մի՞ թե ես իրավունք չունեմ
 Պարզ ու հասարակ բաներ գրելու,
 Օրինակ ասելու, որ այսօր տխուր եմ,
 Մի տեսակ անխոջ եմ, գլխացավ ունեմ
 Ու մի՞ թե բողոքելու իրավունք չունեմ:
 Ունեմ, ո՞նց չունեմ, էն էլ ո՞նց ունեմ,
 Թեկուզ ինքս ինձ այս պահին
 Պախարակում եմ, որ մանրամասնում եմ,
 Ու տարիներ ձգվող իմ վեհությունից
 Ես մանրանում եմ, ճղճիմ խոսքեր եմ պերճաբարբառում,
 Բայց միևնույն է, է՛լ չեմ դիմանում,
 Հորձանքս՝ հոգնածության, անվերջ մեներթյան
 Եկել ծածկել է կերպարս վեհ-իքս,
 Դարձել եմ ստվեր նախկին նախկինի,
 Արդեն այդպես է մոտ ութը ամիս,
 Որ համալրել են յոթանասուններ:
 Ու չփորձեք փնտրել այստեղ դուք հանգեր,
 Ես հիմա խոսում եմ տետրիս, գրչիս հետ
 Ու չեմ էլ անգամ ես պատկերացնում,
 Թե կարդացողն այս ո՞վ է լինելու:
 Ասեմ, կարդացո՞ղ, որ արժանի չես դու սա կարդալու,
 Բայց, պատահաբար, վայրկյանի պահով,
 Սա քո ձեռքն ընկավ՝ քո ձայնն առնելով,
 Ինչպես օրինակ իմ մեներթյունից
 Անելանելի, միշտ ինձ հետևող,
 Այցեքարտ դարձած մտածմունքներից,
 Տվայտանքներից ինձ անվերջ տանջած,
 Պահի, վայրկյանի մութ ճառագայթով
 Թեթև առկայծված ես արարում եմ
 Ահա այս հսկա պոռոտախոսությունը
 Եվ քիչ է մնում պոկեմ թերթերն այս

Տրորեմ, նետեմ... գլխացավ ունեմ,
 Այնքան ասացի ես դրա մասին,
 Որ այս երկու օր է վերագրել եմ ինքս իմ անձին,
 Թեյս սատել է, հիմա ի՞նչ անեմ, դուրս չի գալիս,
 Անվերջ թերիություն, անավարտ մնալու
 Անգոհունակություն և դժկամություն
 Ունեցա այսօր այսօրն ապրելիս,
 Հիմա մրսում եմ, կուգեի նվնվալ,
 Ունեմ մտադրություն ես սափրվելու,
 Լիցքավորվելու, վերափոխվելու, հլու
 Գրեցի հլու, որ հանգավորեմ, ինչևէ,
 Ստիպված եմ նորից մտնեմ հանգավորվելու
 Չգիտեմ ո՞ւմ կողմից ստեղծված օրենքի մեջ:
 Չէ՛, չեմ հանգստանում այսպես գրելուց,
 Չարմանալի է, բայց սա ինձ չօգնեց,
 Դադար եմ տալիս ցնդաբանությանն այս
 Եվ իմ՝ վաղուց արդեն սառած անշաքար թեյի
 Վերջին կումն եմ կոկորդս առնում,
 Նուրբ բաժակից՝ իմ իսկ ձեռք բերած,
 Եվ դիրքս էլ անհարմար է, հոգնեցի:
 Ընկճված եմ,
 Ընդամենն ավելացրեցի հոգնածությունս,
 Թափ տամ ուսերս...

21 փետրվար 2002

ԵՍ ՈՒՆԵՄ-ՉՈՒՆԵՄ

Ես ունեմ բավարարման մեծ կարիքներ.
Ես չունեմ ինձ բավարարողներ:
Ես ունեմ մի կյանք առկա կյանքերից,
Ես չունեմ մի կյանք ապրող կյանքերից:
Ես ունեմ, չունեմ, բայց ինչե՞ր ունեմ և ինչե՞ր չունեմ,
Ես ունեմ, չունեմ...

26 փետրվար 2002

ԱՆԳԻՆ ՎԵՐԱՊՐՈՒՄ ԱՆԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ

Ինձ թվում է ամեն ինչ դեռ վերջացած չէ,
Դեռ կհանդիպենք առանձին ապրած օրերից հետո,
Ու իմ տառապանքը վերապրումի դեմ իսկապես ոչինչ է,
Դու ինձ կսիրես, ես քեզ կմերեմ, ինչևիցե:

Մինչ այդ, ես կարող եմ ընդգծել իմ կյանքը,
Որտե՞ղ եմ ես քեզ հավատացել ու որտեղ ո՞չ,
Ե՞րբ ես դու ինձ շոյել, քանդել հոգուս հանքը,
Որքա՞ն ես դու ինձ տիրել, երբ ես դա ուզել եմ անխոց:

Թո՛ղ որ այն երջանիկ օրերը ետ չգան, ինչևէ,
Թող որ մենք չվերադառնանք այն օրերին, ցա՛վ է,
Ժամանակների ճամփորդ լինել չեմ ուզում, բա՛վ է:
Քո չգալը իմ համար իսկապես որ դա՛վ է:

Այսուհետև ես քեզ չեմ ուզում, լսի՛ր, ամերե՛ս,
Իմ սերը հետզհետե քաշվել է մի կողմ, դու ի՛նքդ գիտես,
Ծովափնյա գծերում լուռ մրմնջում է հեռուն, ու անտես՝
Ես դողդողալով բորբոսեցնում եմ հուշերս աներես:

Հիմա գիշեր է լողում դեպի ինձ բոլոր կողմերից,
Բարի գիշերներ ես քեզ չե՛մ հղում, ես քեզ չե՛մ տեսնում,
Բարի առավոտ ես քեզ չե՛մ ասում, կողքս չես քնում,
Իհարկե, եթե...առավոտ լինի իմ դարավանդում:

Բայց, այնուհանդերձ, երևակայելի կիսախավարով
Մի անգամ կանցնեմ ես սթեթոսկոպ, սին հեկեկալով,
Մերկ իմ ոտքերով դալուկ խոտերը արահետ կանեմ ես տորբելով
Ու կանհետանամ՝ իմ արցունքներին փարոս կարգելով:

Միայն, միայն թե դու չսայթաքե՛ս հանկարծ,
Երբ թեթև ինձ քայլես իմ արցունքների նեղ արահետով,
Ես, ե՛ս քեզ խնդրում եմ, ես քեզ թողել եմ փարոսների կայծ,
Դու, դո՛ւ չմոլորվե՛ս, դու չսայթաքե՛ս, երբ ինձ մոտ քայլես:

Դու չերկմտե՛ս,
Դու չվարանե՛ս,
Դու չսայթաքե՛ս,
Ես սպասում եմ քե՛զ...

Քե՛զ... սիրում եմ ես:

26 փետրվար 2002

ՓՈՔՐԻԿ ՍԻՐԱՎԵՊ

Կառանատույցում քարածխահոտ ու թաց փայտահոտ
Անձրևից հետո սկսվեց ողողվել,
Տազնապահայաց էր և ուներ կարոտ.
Նոր ժամանվածը սկսեց որոնվել:

Պատուհանների մեջ և վագոններում ու հարթակներում,
Ու ամենուրեք դեմքեր էին, դեմքեր,
Մակայն այն դեմքը, որ պետք էր, չկար
Մինչդեռ այն փայլվում էր նուրբ անձրևաջրում:

Եթե նա շրջվեր, տուն վերադառնար
Կյանքը հասկանալու փորձերից նրան
Կմնար մի հետք, միայն քերծվածք,
Բայց՝ «Մի քիչ քայլե՞նք», և եղավ քայլվածք:

Նա եղավ շատ կարճ... նոր գնացք գնաց,
Երկար քայլում էին գոլ արահետով,
Կոխկրտած, պնդացրած նեղ կածաններով,
Կայարանամերձ ծառուղիներով թաց:

Միմյանց հանդեպ անասելի քնքշանք նրանք զգացին,
Պատասխանվեցին, չապարդյունվեցին,
Հնչեղ բղավեց զվարթ լազուրը սիրահարներին,
Միմյանց ոսկեփայլ ցանցում նրանք նստացվեցին:

Կիսաբաց շրթունքներում պոռթկում էր կուրծքը,
Ու ետ էր մղվում, ու նվաճում էր նույնքան կամացուկ,
Ու կծոտվում էր չոր ծղոտիկներով շիկացած դեմքը,
Ու նաև ուտը, ու պարանոցը, ու ձեռքը դալուկ:

Ու մթնշաղ էր հյուսիսային ցուրտ հին կայարանում,
Նրանք սուզվում էին կրթոտ գիշերվա խաղաղ սպասման մեջ,
Ու միքի էին մտնում ծեր ծղրիղների շշմոցի տակ,
Մահուն անձրևը լուռ փսփսում էր կույր մթությունում:

Հիմա ամենից շատ իրար հիշում են իրիկնամուտին,
Անամոթաբար խաղում են նրանք իրենց կյանքի հետ
Ու մտածում են, հիշում՝ լռության անհոսության մեջ,
Երբ նկատում են խռպոտ, կապարագույն, բարձր ամպերին:

Նրանց խրճիթներում գորշ ծխի նման իջել է ձմեռ,
Մնում է միայն քայլել ընդառաջ՝ անշտապ քայլերով,
Անցնել թունելի սև ծխապատված անցքերով անմեռ,
Անհատակ կիրճով, կամրջի վրով, նեղ զառիթափով ու մառախուղով,
ձմեռվա միջով ու կայարանով:

Հիմա կարելի էր միմյանց զգալ, քան թե նշմարել,
Միմյանց փռել մռայլ լեռների լռություններում,
Դ-բսևորումները՝ կյանքի իսպառ բացառել
Ու թաց երկաթգծերին անհեքիաթ պառկել:

Երկուսի սիրով ու նաև երկար երկաթգծերով
Իրար հետ կապված երկու քաղաքների կայարան մտան
Երկու դիակառք երնջատապ հովատակներով.
Անցյալն ապրված էր, առջևում կար նոր կյանք՝ այնտեղ՝ ամպերո՞ւմ:

17 մարտ 2002

ՎԱՅԵԼ ՍԽՐԱՆՔԻԴ ՄԻԱՅՆ

Քո քաղաքը պատրաստվում էր անձրևներուն,
Ինչպես նաև պետության մեջ այլ պետության մի սենյակում
Հույսով լցված, լիցքավորված մի տղայի դիմավորելուն:
Ու ճեպընթացը՝ սպիտակ, արագ գլորվում, անդուլ սլանում
Իմ ու քո քաղաքը իրար հետ կապող ասֆալտապատ ուղով
Ինձ ու քեզ արագ քո քաղաք էր տեղափոխում:

Ձերմ էր, տաքուկ էր ու հյուրընկալ քո մեծ պետության փոքրիկ սենյակը,
Պատրաստվում էր նա ինձ իր մեջ առնելու ու շիկանալուն,
Ինքնըստինքյան, ես էլ լիարժեք պատրաստ էի
Ինձ այնտեղ անխռով ամփոփելուն,
Միայն թե չգիտեմ, քե՛զ ինչպե՞ս կոչեմ, անվանակոչեմ
Այս պատեհ-անպատեհ, պատշաճ-անպատշաճ թեժոտ պահերում,
Վայել, թե՞ անվայել քո զինվորական վեհ սխրանքներին:

Կուզե՛ի քեզ տեսնել թեժ մարտի դաշտից նոր վերադարձած,
Մի գուցե նույնիսկ մի փոքր՝ ո՛չ մահացու, բայց վիրավորված,
Դու կլինեիր այդ դեպքում շատ ու շատ ավելի կրքոտավորված,
Թո՛ղ, որ քո ոտքից կամ էլ թե ձեռքից՝ ականախոցված,
Արյուններ ծորային, հոսեին, լիզոտվեին լեզվով իմ թքոտավորված
Ու լերդանալով՝ իմ մեջ դու կանցնեիր երակավորված:

Պատվոգիր կտայի քեզ դրա համար ես,
Չէ՞ որ դու սիրում ես դրանք այդքան շատ,
Գովասանք կանեի թեկուզ և միայն այն բանի համար,
Որ չնայած հետևից դու ինձ տիրեցիր՝
Ապացուցեցիր, որ գրոհումը, ներխուժումը՝ բիրտ, կարող է
լինել այդքան դուրեկան:
Ես գրավված եմ, ե՛ս, ես գերված եմ, սակայն...
... ես քեզ սիրում եմ, նաև քաղաքը՝ քո, որ պատրաստվում էր
անձրևավորվելու:

9 մարտ 2002

ՋՂԱՁԻԳ ՆՎԱՃՈՒՄ

Երջանկությունը օդում չի ճախրում,
Այն նվաճվում է մաքառումներում,
Երջանկությունը՝ նույնն է, թե՛ սերը,
Պատահաբար չի ձեռքդ ընկնում:

Ավելի մեծ շնորհ, քան սերը, չկա,
Չկա նրա պատժից ավելի բարձր վիշտ,
Նախևառաջ, ապրելու ցանկություն է այն
Եվ ապրեցնելու անձնագոհություն:

Սերը զարթոնքն է կանաչ բնության,
Dies irac-ի կայտառ օրհներգն է,
Ձերմ մեղեդին է սիրահարվածի,
Ջղաձիգ մարմինների անխռով պարն է:

Այն տապալում է, ոչնչացնում է
Դատարկ ուրվականին՝ տխուր օրերի,
Բացահայտումն է քո ողջ աշխարհի,
Քո մերկացումն է, քո վահանն է կռռ:

Կանգա՛ռ, ամեն ինչ այսպես գունավորված չէ,
Սինաբանությանն այս վերջակետ է պետք,
Եվ, իրականում, սիրային կյանքում
Ամեն ինչ բարդ է ու բարդեցված է:

Ես՝ քեզ, դու՝ ինձ նայենք մենք մի պահ,
Կենում ենք հիմա սիրո հատակում,
Իրար ենք ուտում, խժռում ազահ,
Դու նայում ես ինձ, դու քեզ ես նայում:

Իսկ արի փորձենք փրկել միմյանց,
Փաթաթվիր դու ինձ, աչքերդ փակիր,
Մոռացիր շնչառության մասին, համբուրիր,
Մոռացիր խոստումներ տալ, խոստացիր:

Մոռացի՛ր խոսքերը և այն ամենը ողջ,
Ինչ դու ուզում ես հապշտապ խոստանալ,
Օրեր անց դու նույնիսկ չես էլ հիշելու
Քո խոստումները, այս ամենը ողջ:

Երջանկության պես կորցված օրում
Լավ կլինի, թե՛ վատ, դրանից մեզ ի՞նչ,
Բայց, երջանկությունը մեզ դեռ կժպտա,
Ես այն կնվաճեմ, հաստա՛տ, հավատա՛:

10 մարտ 2002

ԿՈՐՈՒՅԱԼՆԵՐԻՍ

Հոգնած հայացք էր դեղին թարթիչներով ինձ վրա նայում,
Այդպես եղել էր արդեն հարյուր դար, կարծես անդադար,
Մերկ սավերները քնած էին իրենց արտացոլանքում, գաղջոտված օդում,
Կար հաստատ հարյուր ու մեկ դար, ու դեռ կքնեին էլի հարյուր դար:

Կուզեի հասկանալ ես նրանց, մի գուցե օգնել կուզեի ես նրանց,
Փորձել արթնացնել, վերկացնել նրանց, կամ էլ հեռանալ, չքվել, մոռանալ,
Իսկ մի գուցե մի պահ ծնկի գալ այդտեղ ու փորձել խորհել.
Ինչո՞ւ եմ քնած, ինչո՞ւ չեմ արթուն, իսկ մի գուցե ե՞ս եմ քնած կամ արթուն:

Եթե կա ավարտ մութ ուղեծրին այս մոլորակի, ուր ե՛ս եմ ապրում,
Ապա այն այստեղ է, այս տխուր հովտում, ուր մարդիկ քնած են,
չեն տրվում սիրուն,

Բայց, եթե կա ավարտ, ապա կա նաև անգուշակելի,
անծանոթ մի սկիզբ,

Եվ կա ճանապարհ, կա մի ուղեծիր սկզբի-ավարտի ոլորաններում:

Երկա՛ր ճանապարհ, հոգնաբեր ուղեծիր, ուրեմն քնե՛ք,
դուք շատ հոգնած եք,

Մեծ ճանապարհ եք կտրել ու անցել, եկել եք հասել ձեր հանգրվանին,
Մարի այս լանջին, հողի ձեր բաժնին, ձեր փայտե տնակին,
Ննջեցե՛ք, գնա՛ն, հանկարծ չխաթարե՛ն ձեր քունը՝

հավիտյան, կկարոտե՛մ:

10 մարտ 2002

ԵԿԵՂԵՑԱՍԵՏ

Երանելի էի՝ բնագդաբար և ոչ,
Բոլոր նրանցն էի, որ հայտնվում էին անկոչ
Ու կենակցաբար հեռանում էին ինձանից անխոջ:
Հոյակապ էի և այդպիսին լինելու համար
Ունեի բոլոր ու ոչ բոլոր նախադրյալները ես,
Բայց կյանքիս արևմուտքին անոճ
Իզուր գլորված տարիներն անհամար
Գալու են բախելու կոպերս չորկոճ:
Ու մոլագարված ճամպուրեկ եմ խլում,
Խելազար փախչում եմ տագնապահարված,
Դեմքս շրջում եմ հայելուց ջարդված,
Անդրադառնում եմ ու բեկվում այլ փողոցներում,
Նետվում եմ օտար նեղիկ մայթերին,
Դժբախտացվում եմ, անիվահարվում,
Թախծում եմ՝ միայնության ես դատապարտված,
Կենդան, անկենդան պաղ դիակներին՝
Շուրջս հավաքված, հողազրկում եմ,
Վազում եմ զբոսնելու բանտարկված
Մարդու միակ իրավունքով սին,
Հետո բուժում եմ իմ հիվանդ հոգին,
Տողատակերն եմ խորունկ թափանցում,
Ուր կարմիր քարեր եմ տանում թաքցնում,
Սև ազոավների ծովածոցերում
Ամենախոնավ միջանցքի ծայրում
Պատշաճ գայրութով ուսերս եմ թոթովում,
Երբ գրգռված խլվում եմ կրքեր շիկավում,
Մարսափից գուզված վրա եմ հասնում,
Անապասելիորեն, մի քիչ կոպտաբար
Անմեղ մեղավոր եմ ինձնից ձևացնում,
Հետո կայտառ, մարտական աշխույժ երաժշտությամբ
Անցնում եմ բազմապատուհան շենքերի միջով.

Գնում եմ հասնում ցուրտ լուսավորությամբ
 Մոմահոտ, վեհաշուք մեծ եկեղեցուն,
 Խոնարհ քայլում եմ ահռելի դատարկությամբ,
 Գոլորշիանում եմ ներս լռության միջով
 Դամբարանային սահուն սալիկների վրայով
 Ու եկեղեցաբեմի ժանյակապատ մրոտ գավիթում
 Յոթը մոմեր եմ մեղմ կրակին տալիս,
 Պղնձածուլված կոչնակազանգերին խռպոտ
 Խոստումնալից երկնքից խորամանկ նայելիս
 «Խաչից իջեցումն» եմ ես պատվեր տալիս
 Ու շուրջս զարթնում եմ հազար ձայներ բոթ,
 Ու աղաղակներ, զնգոցներ, զանգեր,
 Ես էլ ոսկեթել ելուստներով դուրս եմ պրծնում,
 Անդրադառնում եմ ու բեկվում այլ փողոցներում,
 Ինձ քաշ եմ տալիս նեղլիկ մայթերին,
 Օտար եկեղեցում եմ ինձ խաչակնքում:

24 մարտ 2002

ՓՈՐՁԵՄ ԵՐԹԵՎԵԿԵԼ ԵՐՓՆԵՐԱՆԳ ԱՄՊԵՐՈՎ

Հանճար է, փափուկ միտքս՝ մեղրածոր,
 Երգով է իր շվիահար շատ հռչակավոր,
 Ու նա ուզում էր երկար մի քուն, որ
 Հասցներ այսօր դանդաղ իջնել ձոր:

Ու տասնչորս արբա մեհյան եմ շինել,
 Դուռը բացել եմ կարմիր կակաչով,
 Ու, երբ հոգնած եմ սարսափելի եղել.
 Սկսել եմ երթևեկել երփներանգ ամպերով:

Իսկույն հալվել եմ թռչունները պիղծ՝
 Թողնելով քամուն քամիների համար,
 Պոկվել եմ թռչողները քաղաքից անեղծ
 Ու կանգնեցրել եմ ժամեր անհամար:

Ջարդվել եմ գետեր մութ ծխարաններում,
 Ես մոռացել եմ ինձ քիչ տաքացնել,
 Նորից եռացել եմ տաք կավճարաններում
 Ու կաթս թափվել է, ու սկսել եմ մաքրել:

Հետո աթոռ եմ քաշ տվել կենտրոնում դրել,
 Ես երկար, երկար փնտրել եմ, բայց ոչ թե այստեղ
 Ու չեմ կարողացել քամիներ բռնել
 Ու հեղեղներին կրակ եմ վառել տեղ-տեղ:

Քիչ խանձվել եմ, ինքնախարանվել,
 Քիչ ծուխ եմ կապել, կամ՝ հեծկլտացել,
 Թռվռացել եմ կրակի ծայրին՝
 Ապավինելով միայն ամպերին:

Ու բարձրացել եմ, բարձրացել եմ վեր,
 Երթևեկել եմ գանգուր թուխպերով,
 Բայց, մի՛շտ տարվել եմ քամիներով վեհ
 Ու մի՛շտ քշվել եմ, տարվել եմ, տարվել...

3 ապրիլ 2002

ՀԵՔԻԱԹ

Գնում եմ տուն՝ անձրևին, ցողին, թացին,
Լողում եմ տուն ու պետք չէ բացել,
Պետք չէ խաթարվել տաք աչքերի լացին,
Ծորում եմ իմ տուն, ուր կրակ եմ բոցել:

Գինափոշի եմ աչքերիս քսել,
Շոգը հոգնել է անտառում հիվանդ,
Չմռան ճերմակը դեմքիս եմ քաշել,
Նրա հետ չափչփել եմ չոլեր, նաև հանդ:

Հիմա մենք բույս ենք՝ կանաչ, անճանաչ,
Լուսաբացին արևն էլ էլ չի կարմրում,
Իմ մեծ բերանը նվում է հառաչ,
Ու մեծ աչքերս ամպրոպ են մրում:

Ու ցող եմ թորում իմ արցունքներից,
Գինարբուք պատվիրում դարավանդներում,
Ուր կկկոցեմ սև ճառագայթներից՝
Արփիի՝ մխրճված խիտ երկինքներում:

Ու խոնարհել եմ ծաղկափոշու մեջ շրթունքներս ես,
Այնտեղ, ուր ընկել ենք մեծ քար եմ դրել,
Ապագա ընթացքս կանոնակարգել եմ ես,
Գետերը քնել են ու հեքիաթ չեն լսել:

6 ապրիլ 2002

ՇՈԿՈԼԱԴՆԵՐ ՄԵՏՐՈՅՈՒՄ

Եռում է միտքս յոթերորդ երկնքում,
Ես վախենում եմ ձեռք տալ ու հիշել,
Ես չէի ուզում սիրվել տաք գիշերներում.
Շոկոլադներ եմ սկսում ես կշռել:

Գ-ու ինչպես անձրև եկար ու չկաս,
Կորցրել եմ դեմքս մետրոյի վագոնում,
Ու չի հալվում շոկոլադը իմ մեծ բերանում.
Ծաղիկներիս համար ծեփում եմ կարաս:

Գ-ու խելոք պարի՛ր իմ ափերի մեջ.
Ես կաթ դառնամ հոսեմ ջրի վրայով,
Բխում է իմ արևը քո աչքերի մեջ.
Սպիտակ ապրիլը քաշեցի մարտի վրայով:

Ծեծի՛ր ինձ դաժան, գուրգուրի՛ր քնքուշ,
Վազբդ ընթացրո՛ւ այս գիշերներով ուշ,
Բայց չապավինես քո թևերին անուժ.
Թռի՛ր, թռի՛ր ու կաթս կուլ տուր անուշ:

Գ-ե՛, վազի՛ր, փախի՛ր, փորձի՛ր դու թռչել,
Փոքրիկ թռիչքներ, սով, ճովողյուններ,
Ու հարկադրված ուշ ետ վերադարձ,
Ու դիմավորում, ու աղաղակներ:

Ու երկուսով ենք հիմա մենք ճախրում,
Թռիչք վերցրած սուրում ենք արագ,
Երկու խխունջներ, շոկոլադ, թունել,
Ծխեցված գծեր, վագոններ, մարագ:

6 ապրիլ 2002

ԾՆՈՒՆԴԱՍ

Վաղուց իջել էր գարնանային երկար մթնշաղը
Անձրևաբեր ամպերից մթնդած մերկ ու ցուրտ արտում,
Ծանր դղրդում էի, որտեղ նորից գարուն էր վաղը,
Իսկ ես խամրում էի, միախառնվում իմ շրջապատում:

Ընտելանում էի մանկուց ինձ ծանոթ տպավորություններին,
Աշխարհի գարնանային ջահել ամայությանը,
Գյուղական գարնան մերկությանը՝ մաքուր ու լուսնին՝
Պատրաստ ծաղկունքի հիշողությանը:

Հերկած դաշտերն արդեն պատրաստ էին բեղմնավորմանը,
Անձրևաբույր էր, իսկ խրճիթում՝ անշուք՝ քնած գյուղացի,
Բոքիկ ոտքերով հանդարտ վագում էր անձրևավորումը
Մերմնագռավների անտեր բներով... օ՛ր, տաքացի՛:

Ես տարածվում էի հարազատության խաղաղ պարզությամբ,
Վեր էի խոյանում ու ծորում ներքև պատկանելիությամբ,
Թաքուն ներկայությամբ, արթնացումների անդրադարձությամբ,
Տարփանքով, տպավորության բուրավետությամբ:

Ու նույնանում էին իմ տենչանքները իմ ստեղծվածին,
Ես նվագում էի դյութիչ ու անհագ տոնախմբություն,
Հնչեղ ճշում էի իմ նվիրական պերճ արարածին,
Նաև շնչում էի նախագագանան յուղափայլություն:

Գարնանայնություն էր գունաթափ ձյունը՝ թաց,
Պայծառ բացվածքներ էին երկնքում՝ ամպամած,
Ու կաթկթոց էր՝ հին կալվածքների տանիքներին թաց,
Հողը կրծքաբացվել էր այգում ու բակում, արտերում՝ հնձած:

Կանգնել էի ծլարձակ, պիրկ խոնավությամբ,
Անմեղ, միամիտ, անտեսանելի խղճահարությամբ,
Ուժասպառ ճիգով մահահառաչի շնչահեղձությամբ,
Ուրվապատկերիս զարհուրելիությամբ, կայծակնայնությամբ:

Վարդագույն ձայնով մարմնավորում էի զիլ վրնջոցներ,
Անառարկայական, սքանչելի, շատ սքանչելի երագի նման,
Կար հոգի՝ անտեսանելի ու, ուժգին խրխնջոցներ,
Տեղ-տեղ քամի կար ու մուգ սահմաններ:

Ուրիշ տեսակ էր դարանամուտում խոտը կանաչում,
Ազնվականական համազգեստներով մարմնամասնությամբ
Ջուգված թիթեռը այլ կերպ էր այստեղ տապից շվարում,
Բնույթով և ես բեկվում էի հավերժ նորատիությամբ:

Թափանցիկ բաղձանք էր իմ աղաղակից միայն մնացել,
Ու ես լուծվել էի իմ տարիներում, իմ գարուններում,
Քսաներկումայա իմ հեքիաթներում, կերպարանքներում,
Այսօր անձրևով քաղաք իջեցված կաթ-կաթիլներում:

15 ապրիլ 2002

ԻՆՔՆԱԹԻՌՈՒՄ

Այսքան կապտություն զուտ երկնային,
Նույնքան կապտության անդորր իմ հոգում,
Անմարդաբնակ, հանգիստ պատմություն,
Երկար միջանցքներ, տարածք օդային:

Ապագայամետ նոր ձեռքբերումներ,
Հրաշքապատված զիլ արբեցումներ
Ու գինարբություն, խելագար խոսքեր,
Ճոխ ու շահավետ հայարտ գնումներ:

Թռիչք - վայրէջքներ, օտար այլ ազգեր,
Ու որոնումներ խաչմերուկներում,
Ու սպասումային հետադարձ հայացք,
Առջևում նոր կյանք, պայքարի մեծ անցք:

Աշխարհը չափող կլոր պատուհան,
Գանգրահեր ամպեր, քնաբեր ժամեր
Կամ տատանումներ՝ բնորոշ գիշերվան
Ու վեց հատ վառվող, ուղղաձիգ մոմեր:

Իմ հոտով ապրած երկու երկրներ
Ու մեծ անհայտներ երկուսի միջև,
Արևաթափանց բովանդակ պարեր,
Ու քառակուսի մեծ թափառումներ:

Անթիվ դեմքեր են հիմա կլանել
Ու կուլ են տվել անտիկ կառույցներ,
Բեն են բարձրացել շատ ինքնահավան,
Թագոտ «Սև-Կարմիր» տրամադրությամբ:

Խիստ ընդվզումներ անձնափոխության,
Ու դաշտեր, դաշտեր, մագաչափ կանաչ,
Պիրկ քայլվածքներ ձևամոլության,
Ու ծով, ու քաղաք՝ լրիվ անճանաչ:

29 ապրիլի 2002

ԿԱՐՄԻՐ ՍԵՐԺՈՒՄԻՍ ՀԱԿԱՌԱԿ

Հայտարարում եմ մեկտարյա ժամկետով
Լկտի պահվածքի, բողոքի ուղերձ
Եվ այն կնքում եմ հազար ու մեկ անգամ՝
Սանձարձակ դարձած մեջտեղիս կետով:
Թող աղավաղվի կյանքս բարձրաբերձ,
Ու թող սլաքներ ելնեն երթիս հակառակ,
Բայց, միևնույնն է, թեկուզ սողալով,
Թեկուզ ժխտահոտ մայիսով չարակամ
Ես հասնելու եմ քաղաքն այդ մթով,
Ու պատարագը ես լսելու եմ իմ ուզած լեզվով,
Վռնդելու եմ բոլորին դեպի աշունը նեխուկ,
Ու մնալու եմ ես անձնական շուքով,
Ինձ եմ կերտելու փարիզյան ոգով,
Ու դոփապար եմ ծնելու փողոցում՝ բանուկ,
Հանգրվանելու եմ ծոցերում տաքուկ:
Ու, մի օր էլ ես այդ հյուսիսային դեղին քաղաքում
Սոսնձահոտ փչող տաշված քարերից
Երկար աճեցված, խնամված ճանկերով
Գզտելու եմ ուղերձս, ծիծաղելու եմ,
Որովհետև ե՛ս աղավաղվելու եմ վերջնականապես.
Օգնե՛ք, ինձ... ինձանից,
Նվիրեք ինձ... ինձ:

3 մայիս 2002

ՉԱՅՆԵՐ ԵՄ ԼՍՈՒՄ

Բոլորը քայլում են, գնում են առաջ,
Իսկ ես դոփում եմ իմ կանգնածս տեղում,
Դոփ-դոփ-դոփ:

Ճակատագրիս մի անկյունն եմ ես քաշվում, թաքնվում,
Տո՛ւկ-տո՛ւկ-տո՛ւկ:

Ուրիշ լվացած ջրերն են գլուխս ցողում, օծում, լվանում,
Կա՛թ-կա՛թ-կա՛թ:

Ու թռչկոտում եմ ջրակույտերում, ցեխոտ փոսերում,
Հո՛ւպ-հո՛ւպ-հո՛ւպ:

Տխոր մտմտում եմ օտար օրհներգներ, փառքի սաղմոսներ,
Տա՛մ-տա՛մ-տա՛մ:

Ու գռմռում եմ ինքս ինձ վրա, կաղկանձում եմ ես,
Հա՛ֆ-հա՛ֆ-հա՛ֆ:

Արնանպատակ լուրեր եմ ստանում, խոշտանգվում եմ. կա՛յծ
Վա՛յ-վա՛յ-վա՛յ:

Մի ուրիշ պահի բռնաբարվում եմ, նաև տրվում եմ,
Չա՛ն-չա՛ն-չա՛ն:

Ցավերից հոգնած ցավազրկվում եմ, արբենում եմ ես,
Վա՛խ-վա՛խ-վա՛խ:

Տեղումս կանգնած անուշ քնում եմ, երազ եմ երգում,
Մո՛ւշ-մո՛ւշ-մո՛ւշ:

Իրականությանն նշույլ եմ փնտրում, փայլատակում եմ,
Հե՛յ-հե՛յ-հե՛յ:

Նախանձաբար թույնում եմ նկատվածներին, սրի եմ առնում,
Ցա՛վ-ցա՛վ-ցա՛վ:

Վերջին խոսքերը ծաղրում եմ հպարտ, արհամարհում եմ,
Պա՛հ-պա՛հ-պա՛հ:

Մի վերջին շարժումով պարզ եմ ստանում, ծափահարվում եմ,
Ծա՛փ-ծա՛փ-ծա՛փ:

Այսբանից հետո ես հագնում եմ,
Սկսում եմ քայլել, առաջ ընթանալ
Ու ոչ թե դոփել՝
Դոփ-դոփ-դոփ:

11 մայիս 2002

ՏԳԵՂԻ ՈՒ ՍԻՐՈՒՆԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ես ընկերացել եմ սատանայի հետ,
Նա շատ տգեղ է ու գռեհիկ է՝ սարսափելի շատ,
Թեև հակառակը չէր կարող լինել նրա հետ,
Ապրում ենք ամենուր, կարևորը՝ հաշտ,
Հագիվ ենք հասցնում կյանքը վայելել,
Դեռ նոր ենք ելել վայելքների դաշտ,
Բայց, ախր, է՛ս թաղված գյուլախորովը
Գե՛շ է՝ ահավոր ու գարշելի է՝ գորշ:
Հիմա ի՞նչ անեմ. վայելումներիս հակառակ գնա՞մ,
Թե փորձեմ զոհել գեղեցիկի հետ ճոխ երևալս,
Բոլոր կողմերից մատնացույց արվելս:
Լա՛վ, ինչի՞ մասին եմ մտածում, դողոջ
Ընկերոջս մի թեթև կասեմ ու ես կընծայվեմ
Շատ գայթակղիչ տեսքով՝ երանելի,
Ու գեղեցկություն կհոսի ինձանից,
Թեկուզ խաբուսիկ, բայց տեսանելի.
Կարևորը, որ մեկ տարով ուղիղ
Ես հեռացել եմ գմբեթով տներից
Ու ճոխ ապրում եմ, կյանքով՝ գովելի,
Ունեմ ամե՛ն, ամե՛ն ինչ, բոլորին,
Չկա ինձ համար այլևս ոչինչ անհասանելի
Ու ունեմ նաև մի շատ լավ ընկեր,
Որը տգեղ է, գեշ է, զազրելի,
Բայց կարևորը ե՛ս շատ եմ սիրու՛ն:

11 մայիս 2002

SԱՐՏԵԼՇՏԱՈՒԹ

Ողջույն քե՛զ, պարո՛ն վերափոխություն,
Հարկադրված երկամյա ծառայությունից բուք
Վերադարձել ես, դարձել ես անգութ,
Ինձ չես ճանաչում, պարո՛ն տախտակություն:

Ողջույն քե՛զ, սիրելի պարո՛ն փափկություն,
Վերջերս չես երևում կապույտ եթերում,
Իսկ մի ժամանակ գովում էիր դու ինձ մաքրության համար,
Մի գո՞ւցե նորից հիշես ինձ, պարո՛ն նրբություն:

Օ՛, ողջույն քե՛զ, Ձերդ Մեծություն, պարո՛ն առաջին,
Եվ այսպես, այստեղ եք արդեն, թե՛ նորից այնտեղ,
Հիշո՞ւմ ես, ե՛ս՝ դու եմ, դո՛ւ՝ ես եմ, նաև անկողին,
Այլևս կույս չեմ, պարոն ո՛չ վերջին:

Ողջույն, բարի լո՛ւյս, պարո՛ն հիմարություն,
Պահապան կերտվող, բաղնիքային խոտ
Ու իմ հետ ստիպված կենակցող, դեղնոտ
Ու միշտ ուշացող, պարո՛ն սալաթություն:

Վերջապես ողջո՛ւյն, պարո՛ն էլիտարություն,
Մադամ, մադամուագել վիրահատված շուն,
Ինձ է՛չի տեղ դրած, Փարիզը տեսած,
Նարնջագույն սիրող, պարո՛ն հաճելիություն:

Ողջույն կոլտի՛կ պարոն լավիկություն,
Ուզում ես ցավից քեզ համար նորից փորձեմ ես ժպտալ,
Իսկ դու ինձ պատմիր սցենարներ բանալ,
Մի անգամվա համար միայն պարո՛ն չեմուչումիկություն:

Այս ո՞ւմ եմ տեսնում, ողջո՛ւյն պարո՛ն երանություն,
Քո շատ մեծ բիտին կարոտել եմ ես,
Կուզես շապիկս հանեմ քեզ համար, թափի՛ր ինձ վրա,
Խոսի՛ր դու ինձ հետ, պարո՛ն հաստատություն:

Ողջո՛ւյն, բալիկ ջա՛ն, պարո՛ն մաքրություն,
Շատ պատահական, սիրուն հանդիսություն,
Ո՛չ նախատեսված, սակայն հիշարժան նաև
Կարոտվելու միանգամայն արժան, պարոն հեզություն:

Ողջույն կուզեի հղել Ձեզ, պարո՛ն երանելիություն,
Ներեցե՛ք, որ ընդհատում եմ ֆիլմը ձեր սիրուն,
Պարզապես, կուզեի Ձեզնից օգտվել սիրասուն,
Բայց դուք կորել եք անձրևում, պարոն ընծայություն:

Եվ այսպես, ողջո՛ւյն, պարո՛ն անգերազանցվածություն,
Հուսով եմ ձեռք եք բերել մեկ մատից ավել օգտվելու ընդունակություն,
Գաղութից առավել եք, «Դոլյակ» եք՝ խմված մոգությամբ,
Դուք շա՛տ արագ էիք, պարո՛ն չկրկնվելիություն:

Ողջո՛ւյն եմ ասում քեզ, պարո՛ն անսպասելիություն,
Մեծ էր առաջարկդ, երկար էր, անվերջ,
Ցավո՛ք այդպիսին չեմ... ես տաս րոպե և վերջ
Հուսով եմ, որ մենք դեռ կհանդիպենք, պարոն գժություն:

Եվ այսպես, վերափոխություն ու տախտակություն,
Մրան հակառակ թեքված փափկություն, նաև նրբություն,
Հոգեխռով առաջին, անիմաստ վերջին,
Անիմաստ հիմարություն, ճոխ սալաթություն:

Եվ էլիտարություն, խարտյաչ հաճելիություն,
Կնքված լավիկություն, դերասան չեմուչումիկություն,
Գռեհիկ երանություն, երանելի հաստություն,
Անմոռանալի մաքրություն, սառած հեզություն:

Մութ երանելիություն, շռայլ ընծայություն,
Անգերազանցվածություն, գինու չկրկնվելիություն,
Փոքրիկ անսպասելիություն, գիշերվա գժություն
Սկիզբ վերափոխությամբ, ավարտ... գժությամբ:

Հազար երկու հարյուր վեց միջանկյալ օրեր,
Ճամփա եմ ելել, անավարտ ճամփա,
Եվ մի՞ թե սա՛ էր ի վերուստ տրված,
Ճակատագրված:

Ողջո՛ւյն հազար երկու հարյուր յոթերորդ իմ օր:
Աղերսում եմ, չնմանվես անցած օրերիս բոլոր,
Ինձ ներկայացրու ութսունյոթերորդ անցորդիս մոլոր,
Հավատացած եմ նրա հերթը ուղեղս՝ ոլոր
Կմխիթարի, նոր պարզև կտա՝ գեղեցիկ, հզոր,
Անուրջ եմ ուզում, քայլել եմ ուզում տանիքով կլոր,
Քեզ հաջողությո՛ւն, ողջո՛ւյն իմ այսօր:

11 մայիս 2002

ԼՈԹԱՐԻՆԳՅԱՆ ԲՈԿՈՐԵԱ

Աստծոն հաճո էր գործել իր ստեղծած
Օրերի հերթում կողերից ծեփված աղախնիս միջոցով,
Փրկության անձրև ծնունդիս օրը երկրին տեղաց
Ու ինձ պաշտեցին՝ որպես փրկչի՝ աննզով,
Ու ինձ այրեցին՝ որպես կախարդի՝ հրե խարույկով,
Թեև սարսափել եմ ես միայն մեկ անգամ,
Երբ ես՝ մի հասարակ կույս լոթարինգյան,
Որ ծնվել եմ հովերգական գեղջուկ վայրերում
Լսեցի մի ձայն, ես գտա նրան, կյանքս մտավ հուն,
Եվ ձայնն ինձ ասաց, պարզապես ասաց.
-Վերականգնի՛ր գահը՝ գահընկեց՝ ի հեճուկս նրանց:
Բոկորեա գյուղից էի ես և վախենում էի անձանց
Դավաճան լինելու բիրտ ցանկությունից,
Ու այդ օրվանից ավելի լավ էր մեռնեի րուպե անց,
Քան չկատարեի պատվիրանները Աստծո՛ ինձ տված,
Չէ՞ որ կոչված էի հավատքի համար,
Նաև պաշտված ու աստվածացված լինելու համար,
Իսկ ո՞վ կարող է ինքն իրեն գրկել,
Կամ հրաժարվել փառքից անհամար:

11 մայիս 2002

ԻՄԿՅԱՆՔԸ

Իմ կյանքը վերանայել է պետք անհապաղ,
Ինձ տաքացնել է պետք, ինձ պետք չէ թողնել պաղ:

Իմ կյանքը վերադասավորել է պետք շուտափույթ,
Ինձ ջերմացնել է պետք, իսկ... դրանից ինձ ի՞նչ փույթ:

Իմ կյանքը պետք է սկսել հիմնովին նորից,
Հրաժարվել է պետք ինձ ամենից, բոլորից:

Իմ կյանքը պետք է հորինել լրջորեն,
Ինձ գույներ են պետք ու նախշեր նորորեն:

Իմ կյանքը պետք է արժեքավորել,
Ինձ պետք է արքայացում, պսակավորվել:

Իմ կյանքը պետք է եզակիացնել,
Ինձ պետք է ամեն ինչ մասնակիացնել:

Իմ կյանքը պետք է սահմանազատել,
Ինձ հստակեցվել է պետք, անպետքը գատել:

Իմ կյանքը պետք է սիրել, չէ՛, պաշտել,
Ինձ պետք է աղոթել ու երկրպագել:

Իմ կյանքը պետք է անուն ունենա,
Իմ կյանքը պետք է կյանքեր ունենա:

Ցավո՛ք, ամեն ինչ պետք է, և ոչ թե ուզում եմ,
Սկսենք այնտեղից, որ պետք է ուզել ու ոչ թե պետք է...

17 մայիս 2002

ԱՐԹՆԱՑՈՒՄԻ ԵՐԿՈՒ ՁԵՎԵՐ

Կարելի է արթնանալ ու սկսել գրել,
 Անկողնուց ցած կախել ոսկրոտ ոտքերը,
 Դուրս հանել վերմակից տաքացած մարմինը,
 Ճպճպացնել փոքրիկ, ծուաչափ աչքերը,
 Հետո քորել այս ու այն նուրբ տեղերը
 Եվ, ապա ձեռքն առնել գրիչն ու թղթերը
 Ու սկսել արարել, ինքնամոռացվել,
 Եղած չեղածդ թղթերին հանձնել,
 Փորձել դատարկվել ու լիցքաթափվել,
 Մտքեր ժայթքեցնել ու պերճախոսել,
 Ձանալ հեքիաթներ վերստին ստեղծել,
 Խորամանկությամբ ինքդ քեզ խաբել,
 Ամեն ինչ պայծառ գույնով մատուցել,
 Բառերի խաղով ինքնաջերմացվել
 Ու տրվել, տարվել, երազներ հունցել,
 Խորունկ գիշերդ խորհրդավորել,
 Լուսեղ կեսօրդ ճոխ լուսաբանել,
 Լուսին նկարել, արև հայթայթել,
 Փոթորիկ ստեղծել, ջրհեղեղ անել,
 Հուզվել, ներշնչվել ու հուզախոռվել,
 Կրակապատվել նաև ու բոցակալվել,
 Ելնել թավալվել, ամեն ինչ պատռել,
 Ամենը առնել ու աղբը նետել,
 Քանդել, ավիրել, վայնասուն անել,
 Բարձր հռիռալ՝ արքայավայել,
 Որսալ, գլխատել ու թունավորել,
 Ու շարադրել, ու շարադրվել...
 Կարելի է արթնանալ նաև ու ոչինչ չգրել:

23 մայիս 2002

ՑԱՎԵՐՍ

Թեթև բքում է իմ փոքրիկ սենյակում,
 Անիմաստ օրեր են գալիս ու անցնում,
 Ու ես հոտում եմ, բորբոս եմ կապում,
 Այսպես ապրում եմ, զուտ հերթագայվում:

Ու ճիշտ պատրանք է ամեն շարժումս,
 Իմ խոսացվածքս, կեցվածքս, դիրքս,
 Անարժեք է ինձ համար ամեն ամենս,
 Հետևաբար ոչինչս ու ես հենց ինքս ոչինչ եմ նաև:

Մտքեր եմ ծնում, որ ինձ տանջեմ ես,
 Հիշում եմ, որ հիշելու ոչինչ չունեմ ես,
 Ո՛նց եմ ափսոսելու դրա համար մի օր ես,
 Երբ դարձած կլինեմ ուղիղ վաթսույնյոթ ու կես:

Մրտիս ցավերը, գլխացավերս, նաև հոգնելս,
 Մենակությունս՝ գաղափարական ու մարմնական,
 Աղքատությունս, հոգե ու մտաբիրտ իմ տանջումները
 Ինձ խարանել են՝ առանց զենք, ական:

Մեկ ակնթարթում բյուրավոր անգամ
 Նույն մտահղացումն է ուղեղս թակում,
 Փախչել եմ ուզում, ուզո՛ւմ եմ, ուզո՛ւմ,
 Ապրել եմ ուզում, ուզո՛ւմ եմ, ուզո՛ւմ:

2 հունիս 2002

ԾԻԼԵՐ ԵՄ ԾՆՈՒՄ

Ճորտության կաղապարը վրաս ես քաշած,
 Կոտորած ծնող ուժը ճակատիս գրած,
 Կարմիր գաղափարով, կապույտ ուրվականով
 Երկինք եմ շարտում բազում հարցումներ:

Ու մոխրակույտերից առասպելական կայծակը ծագած
 Հրովարտակս է ինձ հեռաձայնում հոշոտող շանթով,
 Անգո սերմերիս հնգաթևանի աստղանիշով
 Տողատակերում տալիս է ազատ պարզաբանումներ:

Ու ես հոգնաբեկ, աննվաճ, անհոգեբնակ,
 Ինձանից հետո վախճանաբեր սև հետևանքներ,
 Ու անագորույն, շատ հաստամուռ քսան դահիճներ
 Միայն կծնեմ, ու թրթուռ կծլեմ, նրանց կսնեմ,
 Դավադիր տանջանքիս անթաղ թողնելով՝
 Բռնկված արևի բույլ անշեջ բոցում
 Դառնագույն արյունը բույրով կհոտեցնեմ,
 Այդ օրը միայն անհոս բարիքներ ես կվայելեմ,
 Հարստահարված, բռնությանն ընդեմ, կարիքին՝ դիմաց,
 Վեհանձնական ամենի երախս լայն բաց,
 Հակառակ սրտիս ծանր վերքերին՝ գորեղավորված,
 Ոգևորության անմարմին քամուն եթերածնված
 Կտամ խանձելու խելառ, տափուկ հոգիներ,
 Խանդավառության տաք աշտանակներում
 Կտամ թրծելու անտեղի, բազմաթերթ վեճեր,
 Ու այս ամենի հղացման գաղտնիքը՝ անսանձ ու մոլի
 Ռազմաճակատի իմ արցունքներում թաքուն պահ կտամ,
 Աշխարհասասան մահեր կծնեմ, սարսուռ կծլեմ,
 Անձնատուր որոտ, երկունքի ցավեր, խոր դավեր,
 Լայիրշ աղետներ, ակնհայտ սարսափ ու ազդու կրքեր
 Քաղաք կիջեցնեմ, ես ինձ կծնեմ, դեռ իմ կողքերն էլ ծիլեր կծնեմ:

7 հունիս 2002

ՇԻՉՈՖՐԵՆՆԻԱ

Տարօրինակ է, երբ շուրջս ամեն ինչ տարօրինակ է,
 Խորհրդավոր է, երբ շուրջս ամեն ինչ խորհրդավոր է,
 Անհետաքրքիր է, երբ շուրջս ամեն ինչ միօրինակ է,
 Անտանելի է, երբ շուրջս ամեն ինչ շատ ահավոր է:

Գիտե՞ս, իմ շուրջը պարում են ոմանք,
 Ոմանք քայլում են, գիշեր է, խրախճանք,
 Չէ՛, չէ՛, պարում են՛ն, բոլորն են պարում,
 Թե՞ չէ՛, մի թուպե, ցերեկ է, զվարճանք,
 Բայց, ախր հենց նոր գիշեր էր, ցատում,
 Չէ՛ խելագարվում եմ, է՛լ չեմ հասկանում:

-Ը՛հմ, հիմար, անասուն, շորերս ե՛տ տուր, շորերս ե՛տ տուր, շորերս...
 Վա՛յ, ինչ ամոթ է, տկլոր եմ, որտեղի՞ց ճարեմ հիմա հանդերձանք,
 Մրսում եմ, պատուհան էլ չկա բացեմ՝ տաքանամ,
 Էս ինչո՞ւ են բոլորը վազում խելագար:

-Ա՛յ տկլոր հիմար, անձրև է գալիս, վագի՛ր դեպի հանք:
 -Դեպի հա՞նք, միամի՛տ խենթեր, ես արգելել եմ, որ այստեղ անձրև գար:
 Էս անտեր ճանճերին որտեղի՞ց խոսելու մման հարմարանք,
 Լռե՛ք, հեռացե՛ք, զգում եմ ձեզանից ահավոր զզվանք
 Ու հանկարծ չփորձեք ինձանից տանեք մարդկանց բամբասանք,
 Թե՛ ես տկլոր էի, խելագարված էի, կեղտոտ, դիվահար:
 Ուզում եմ ծեփվել պատի անկյունին, զգում եմ նողկանք,
 Ու որովայնս պարում է արագ՝ բերանս տալով կեղտաբույր գարշանք,
 Աչքներդ լո՛ւյս լինի ժեխս համտեսող գայլեր սովահար,
 Բայց, կա՛ց, մի՛ թուպե, ձեր աչքերն ո՞ւր են գայլեր ապիկար,
 Իսկ հեռվում խոտ հնձող մարդկանց ձեռքերը՝ տանջահար:

8-14 հունիս 2002

ԵՐԱԶ

Չմեռը հանդարտ վրաս եմ քաշում՝
Շատ երկարատև, կարծես հարատև,
Խոր նինջ եմ առնում, մեղմիկ փնչեցնում,
Երազ եմ տեսնում, որ ունեմ ես թև:

Հիմա կարող եմ ես նույնիսկ թռչել,
Ինքս բարձրանալ, հյուր գնալ ասածուն,
Մի գուցե նաև կարճ հանգրվանել,
Անընդհատ խմել միայն թարմ մածուն:

Տարածականացվել, տրվել ամենին,
Նվիրաբերվել, բարություն սփռել,
Փռվել խոտի մեջ՝ կանաչ, անմեկնին,
Անէականացվել, ուշադիր լռել:

Կլանել, կուլ տալ ամեն ելևէջ,
Որ ինձ է դիպչում խորունկ անտառից,
Բարձրաքերթ ժայռից, մթին ձորակից,
Ու ծաղիկներից՝ սայիտակ, անառէջ:

Աչքերս փակած կամացուկ սողալ,
Հպվել վարսակի ճայթուն հասկերին,
Լքված մարագում հատիկը աղալ
Ու դրանք խառնել ձագերիս կերին:

Ու ջրակալել հողերս՝ առատ,
Բոբիկ ոտքերով վազել մարգերում,
Փոքր շունչ առնել՝ գտնելով սաղարթ
Դաշտիս եզերքի ջահել կաղնուտում:

Թավշոտ տերևի հեզ սվսվոցից
Նորաքաղ խոտի հոտավետ խուրճում
Բույներ կառուցող ժիր ծղրիղներից
Հնչյուններ պոկել ու տաղեր ձոնել:

Մի պահ լռում եմ, դադար եմ առնում,
Ստվեր եմ տեսնում ու փշաքաղվում.
Իմ կյանքում եղավ սպասված ժամանում,
Առատ սիրով եմ ես պարգևատրվում:

Ես էլ մենակ չեմ, մենակ չէ և՛ նա,
Մենք երկուսով ենք, սիրում ենք անխնա
Միմյանց, և՛ կյանքը, քունս՝ արթմնի,
Միայն թե երագս իրական չդառնա:

15 հունիս 2002

ՍԱՏԱՆԱՅԱՅՈՒՄ

Ուշ է, երեկո է չարագուշակ տարածվում,
Ուրվապատկերիս վրա աստղերն են ջրակալվում,
Դիվային մի բան սատկում էր անտառում,
Ամեն կողմից թշնամաբար դարանակալված ծառուղում:
Հետո, զարհուրելիորեն կամաց, սատանան հեռացավ,
Միայն հեռվում, տառապալից հաճույքով սկսեց կռնչալ,
Ապա խեղդվել մի անառակ լպիրշ ծիծաղով...
Նա գետնի տակն անցավ ողորմելի, ուժասպառ ճիգով:
Իսկ ես, ես է՛լ շնչահեղձ մեխվել էի մթության մեջ,
Խելազար, անառողջ ու զագրելի մտքերով:
Ու այդ օրվանից սատանան կարծես սկսեց այցելել ինձ,
Ու ես հասկացա տարօրինակ է լինում, երբ տարօրինակ եմ ես.
Ամեն ինչ շուրջս աղոտ պարում է՝ վայրի ու անտես,
Իրար հետ անձայն խոսում են մարդիկ՝ անփայլ, աներես,
Վարակում են ինձ, ու այդ օրվանից տարօրինակ եմ ես:

22 հունիս 2002

ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Անսահմանափակ տպավորությամբ
Եվ կցկտուր զավեշտի դիմախաղերով
Խոր պեղումներ են հոգումս անում՝
Ինքնաճանաչման մտադրությամբ:

Առանց գործիքի ու անգեմ աչքով
Գործի են անցնում, ինքնաքննարկվում,
Ինքս ինձ նայում են ուրիշ հայացքով,
Ճանաչում են ինձ ու աղավաղվում:

Ինձ բարևում են ուրիշ բարևով,
Ողջունում են ինձ ուրիշ ողջույնով,
Ինձ ջերմացնում են ուրիշ արևով,
Մտքերս սնում են վճիտ թույլներով:

Անունս գրում են ուրիշ տառերով,
Ուրիշ ծիծաղի ձև են ինձ ընտրում,
Երգվում են ես ուրիշ բառերով,
Ուրիշ աստվածներ են ինձ համար գտնում:

Ուրի՛շ են, ուրի՛շ... կա՛ց, ուրիշ չեն ես,
Ինչ էլ որ խոսեմ, ում էլ աղոթեմ,
Ոնց էլ ծիծաղեմ, կամ էլ լաց լինեմ
Միշտ մեկ նպատակ մտքումս ունեմ:

Իսկ ուղեղ, գլուխ, բանականություն
Բնավ էլ չունեմ, չեն էլ ունենա,
Քանի որ ունեմ բաց կապույտ արյուն՝
Ծնված օրվանից նենգ ապականված:

30 հուլիս 2002

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՍ

Ճանապարհներ՝ ը, ճանապարհներ՝
Պատահական, կանխորոշված,
Ուղիներ են, ասֆալտապատ երկար ճյուղեր,
Խորդուբորդ են կամ էլ լրիվ պարզ հարթեցված:

Ամեն դեպքում ես չեմ սիրում հարթ ուղիներ,
Մայթաքելը շատ էլ հեշտ է ողորկ ճամփին:

Ճանապարհներ՝ ը, ճանապարհորդ
Հավիտյանս հավիտենից:
Մագլցված են ճամփաներս,
Ոտքերովս տրորված են
Փա՛ռք ոտքերիս,
Իսկ մարմինս քարշ է տրված,
Խե՛ղճ իմ մարմին:

8 օգոստոս 2002
Վանաձոր

ԱՆԱՎԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Տարին ծավլում է ձեր տարվա վրա,
Ողջ ապրած կյանքս անցյալ է արդեն,
Նայում են անցած ճամփիս այսօրվա
Իսպառ ու անհետ կորած ժամեր են:

Ֆանտաստիկ տխուր ապրում են հիմա,
Բուպեյվա համար հոգի են տալիս,
Անշնչանում են, երբ հարմար է դա,
Նորից զարթնում են շնչով անհանգիստ:

Սարլանջեր են բազում ես քայլել
Ու ամեն անգամ չեմ հաշվել դրանք,
Անգամ ոմանք էլ մոռացել են ես,
Բայց շատ շատերին կոչում են պատրանք:

15 օգոստոս 2002

ԾԱՌԻ ՎՐԱ

Մի հաստ գերան է առջևս ցցված՝
Ոլոր ու մոլոր, ծոռուամուռ, քիչ կեռ,
Ամառ է. ու, հետևաբար, կանաչապատված,
Մի գուցե ընդունելի է, իսկ մի գուցե՝ զկեռ:

Մի հաստ գերան էլ տակս է դոփված՝
Անհարթ, խորդուբորդ ու շատ անհարմար,
Հողից շատ քիչ է արևին ձգված
Ու ունի ճյուղեր բազում, անհամար:

Ես էլ լոճված եմ այդ գերաններից,
Որ այս ու այն կողմից մամռակալված եմ,
Ազատություն եմ տվել ոտքերիս,
Որոնք աջ ու ձախ թեթև նետված եմ:

Ավելի վերև պարզապես չկամ,
Անզգայնացած եմ, պահին եմ տրված,
Չափավոր, անչափ լացում եմ անկամ,
Կվերադառնամ արդյո՞ք գոնե գեթ անգամ:

Կփորձեմ արդյո՞ք բարձրանալ նստել վերին ճյուղերին,
Նամանավանդ, որ ի՛մ վերադարձին
Վերին ճյուղերն է՛լ ավելի շատ
Աճած կլինեն, մոտիկ կլինեն արևին, ամպին:

Ու կարևոր չէ՛, ու էական չէ՛,
Ինչպես կհասնեմ ամենավերին հյութեղ պտուղին,
Մի գուցե սողամ, մագլցեմ շատ հեշտ,
Բայց այդ պտուղը կուտեմ ես անհետ:

16 օգոստոս 2002
Ղափան

ՎԵՐԱԴԱՐՁ

Ի՛մ վերադարձին ի՞նչ է ինձ սպասվում
Ես գուշակում եմ ու ոչ հաստատում,
Ձևափոխում եմ հազար տեսակետ
Ու խույս եմ տալիս ինձանից անհետ:

Շորեր եմ կարում Աստծուն հագցնում,
Մի ուրիշ պահին տասնվեց այծեր
Խաշում եմ կաթում ու հրամցնում
Ժիր սատանային՝ այլանդակ ու ծեր:

Ու հարց եմ տալիս՝ ինչո՞ւ եմ հե՛նց ես
Ընտրված որպես պայթուցիկ բևեռ,
Մինչդեռ իմ տոմսը գնված էր մինչև
Հյուսիս հարավի կետերի միջև:

Ու կարմիր շորերով, սև ճամպրուկներով,
Վաստակած միայն տկար մի մարմին
Մոլորված կանգնում եմ աղետ-սարսափով,
Ապավինում եմ ուշ մայրամուտին:

Վերադարձ է՛լ կա, վերադարձ է՛լ կա
Ու մեկն եմ հիմա միայն ես ուզում,
Գերադասում եմ ցնծություն առկա,
Ինձ դեպի կյանք եմ ես ճանապարհում:

16 օգոստոս 2002
Ղափան

ԳՈԹԱԿԱՆ ԱՆԾԱՅՐԱԾԻՐՈՒԹՅՈՒՆ

Ու նա ծիծաղեց՝ պարզ, սքանչելի, կայտառ ծիծաղով
Եվ ամեն ինչ էր շատ սքանչելի փոքրիկ վարագի գրավիչ հոգում,
Մթության միջից փափուկ քամին էր գլորվում խաղով,
Մի կողմի վրա լույսեր էին սահում, ինչ-որ տեղ գնում:

Գավառական քաղաքում տաքություն էր ու բույրեր՝ ամռան գիշերվա,
Մպիտակ վարագույրներով, տոթից շիկացած մաքուր համարում
Մոլեգնությանը, շնչասպառ տոնում էին պահը այսօր կեսօրվա,
Շատ սքանչելի փոքրիկ մի վարագ ու մի այլ տղա:

Ու իրար վրա, նաև իրար մեջ կրքեր էին մարում
Մինչ արևաշող, շոգ ու երջանիկ լուրթ առավոտյան.
Անհապաղ քունը հեշտությամբ նստեց նրանց աչքերում
Եվ մնա՛ս բարով, և արդեն ընդմիջտ, առհավետ բաժանում...

Քաղաքը թվաց առանձնահատուկ ու առանձնապես ճոխ, նվիրական,
Չափազանց արտառոց ու անբնական, անհավանական,
Կյանքը՝ համակված պիտանիությամբ, լայնարձակությամբ,
Անծայրածիրությամբ՝ հեռաստանների՝ պերճ ու գոթական:

28 օգոստոս 2002

ՄԻԱՆՁՆՈՒԹՅՈՒՆ

Իսկ իրիկունը նույնպես խղճուկ էր՝
Գարնանային գով, դժգույն ցած երկնքով,
Ուր լուռ անտառը միշտ էլ թացուկ էր՝
Իր կեչիների մերկ սաղարթներով:
Եվ ամբողջ էությամբ ես սեր տենչացի՝
Լուռ հետևելով ճոճուն ապրիլյան
Հանդիսավոր, ընտրովի, մուգ մայրամուտին՝
Նեղ պատուհանից ամխասև հսկա
Պողպատյա, յուղոտ, գորեղ գնացքի:
Հիշողությանս մեջ հոգեհանգստի
Մռայլ-սպառնալից հանդիսություն էր,
Խղճուկ գարուն էր, ապրիլ ամիսն էր:
Իմ շոգեքարշը մռայլ ճչում էր կողքին լեռնանցքի,
Ուր հնադարյան խոնավություն կար,
Վեհաշուք էր սգո վազքը՝ ծառերի...
Առասպելական, նման դաջվածքի
Միանձնություն էր իմ գլխին ճախրում,
Ինձ վրա մայում, իմ մեջ կաղկանձում,
Միանձնությունն էր իմ մեջ աղոթում,
Միանձնությունն էր իմ մեջ ներխուժում:

3 սեպտեմբեր 2002

ԱՆԱՎԱՐՏ ԺՊԻՏ

Քարանձավային ժամեր են ապրում,
Նահանջել են ետ, կաղապարապատվել,
Ամենավերջին կինն են համարվում,
Ես ինձ չեմ ժպտում:

Ինձ գնահատել չեմ կարողանում,
Կա՛մ արժանի չեմ, կա՛մ էլ չեմ ուզում,
Արդեն սկսել են ինձ վիրավորել
Ու դադարել են ինքս ինձ ժպտալ:

Թշնամիներ են ամենուր փնտրում,
Համար առաջին թշնամին թեև
Ինքս ես ինձ եմ հիմա համարում
Ու դրանից էլ ես ինձ չեմ ժպտում:

Երամից վաղուց ետ են մնացել,
Որքան էլ չվեմ չեմ հասնի նրանց,
Թեկուզ դառնամ ձի, ունենամ պիրկ սանձ,
Այլևս ես ինձ չեմ ժպտում սրտանց:

Թեև տեղովս դառնամ ես ճոխ գանձ,
Հակինթ, մարգարիտ, սպիտակ ադամանդ,
Անփոխարինելի չկա ոչ մի անձ
Ու մի ժպիտը կորում է անդարձ:

Երևակայում են ինձ երևակայած,
Ձիվ վայելքներից ուժեղ շիկացած,
Ու նույն պահին էլ զգում են հարված,
Ժպիտս առհավետ չքվում է հանկարծ:

Ու չկայացած մարդ են անվանվում,
Սև գորշություն են ես ձևակերպվում,
Վերանորոգման տախտակ են դառնում,
Է՛լ ես ինձ համար ժպիտ չեմ փնտրում:

Ինքնախաբեությունից վեր բարձրանալով,
Գրագետ վարպետ ինձ համարելով՝
Դասեր են տալիս զուտ ձևացնելով,
Է՛լ ո՞նց ինձ ժպտամ այդ ծանր բեռով:

Իմ գոյությունը հենց մեծ խաբկանք է,
Ինչ որ միջոցի սիրո մեծ պատրանք,
Գոյատևում են առանց դավանանք,
Չեմ կարող ժպտալ առանց կախարդանք:

Հարյուր մեկ անձ են ես ճանապարհել,
Հարյուր մեկ անձ է ինձ բեղմնավորել,
Հարյուր մեկ անձ են ինքս ես դարձել
Ու ոչ մի անգամ դեռ չեմ ժպտացել:

Նստած դիրքով են բախտս քարկոծում,
Քարեր են փնտրում, բայց չկան քարեր,
Փռչի է միայն իմ դուռը կոծում,
Ու նա էլ իր հետ ժպիտ չի բերում:

Ապշահար, սառած կանգնած են լացած
Մարդու տագնապով՝ մի բան կորցրած,
Իսկ ի՞նչ կորցրած... սթափվում են հանկարծ,
Որտե՞ր են փնտրեմ ժպիտս կորցրած:

Փոքրիկ քնծիծաղ, գոնե շրթունքի փոքրիկ տատանում,
Ժպիտանման ինչ-որ ձևացում,
Ու ոչ էլ ծիծաղ, քրքիջ, հռռռոց,
Ընդամենը նուրբ, թեթև ժպտեցում:

Ժպի՛տ, ա՛յ ժպիտ, որտե՞ր ես կորել,
Ո՞ր ես գլորվել, ո՞ր ես անդունդվել,
Ո՞ւմ ես դու լսել, այդպես անհիծվել
Ու ինձ անժպիտ, անժպիտ թողել:

Մի գուցե գնամ մոտակա շուկա,
Կամ հարևանից մի բաժակ խնդրեմ,
Կամ խանութ գնամ, տեսնեմ թարմը կա
Մի քանի կիլո որակը տեղը ժպիտ ես գնեմ:

Ժպի՛տ ես առնեմ, ժպի՛տ տուն բերեմ,
Ոսկրոտ դեմքիս ժպիտ հագցնեմ,
Ինքս ինձ ժպտամ, ժպիտավորվեմ
Ու ժպտամ ես միշտ, անավարտ ժպտամ:

11 սեպտեմբեր 2002

ՀՈՐԻՆՎԱԾ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ես հորինում եմ հավիտենականություն,
Դառնում եմ փարթամ կանաչ եղևնի,
Բողբոջ եմ տալիս ծով օտարություն,
Վրաս եմ առնում ցողը՝ եղյամի:

Այսպես ապրում եմ երկար պուրակում,
Ուր հինգ տարի առաջ ես ոտք դրեցի,
Ծիլեր տվեցի, արմատ ձգեցի, ճյուղավորվեցի,
Երբեմն առատ պարարտացվեցի, սաղարթացվեցի:

Ու անցորդներն իմ միջով անցած,
Իմ չորությունից կամ էլ կարիքից իրենց դրդված,
Ինձ ջուր տվեցին, թողեցին ինձ թաց,
Ես էլ ծաղկեցի՝ առատ սերմնավորված:

Հիմա աշուն է իմ պուրակ գալիս՝
Տերևաթափով, սառը գույներով անձրևավորված,
Ու կանաչ փշերս ես շոշափելիս՝
Քամում եմ օրեր՝ պատմություն դարձած:

Ու նողկալիությունից ես իմ պատմության
Ու իմ դերերից պուրակում կերտած՝
Տերևաթափ եմ աշնանից ուզում,
Նախանձով նայում շուրջս մերկացած:

Եվ պատասխանվում եմ բոլոր կողմերից
-Դու եղևնի՛ ես, ու ո՛չ ծերացած,
Հիշի՛ր, կանաչության ես դու դատապարտված,
Անվե՛րջ կանաչություն է քեզ ճակատագրված:

Խաղաղ աշուն է իմ շուրջը բազմած,
Խաղաղ պուրակ է շուրջս մերկացած,
Ու անցորդներն էլ դարձել են սակավ,
Ես ջուր եմ ուզում ու տերևաթափ:

Աշնանապիղծ գույն եմ վրաս ես առել,
Դարձել եմ չվածների երանելի օթևան,
Կանաչ ու փարթամ եմ նորից մնացել
Ու նենգ կատակը թափառող աշնան:

Ինձ բաժին ընկած կանաչությունից
Հոգնած լացում եմ, լացս էլ, սակայն
Կանաչ կոներս եմ վրաս մնացած.
Ես շա՛տ հոգնել եմ իմ հավերժությունից:

21 օգոստոս 2002
«Պլեշկա»

ԸՆԴՎՁՈՒՄՆԵՐՍ

Վառ լույսերի պար է իջնում հորիզոնին,
Ոսկեհյուսված ճաճանչների խաղ է սկսվում,
Ջինջ ցուլքերը փողփողում են անմեկնին,
Ծեր արփիի հուր գալուստն է հին աշխարհը ողջունում:

Հրճվում է բնությունը ադամանդե ճիչերով,
Յող ու եղյամ անչեջ հուրքով բորբոքված՝
Ծփծփում են ընձանքների երանգով,
Պսպրում են ալ գույների շիթերով:

Լուսանում է ն՛ մի տղա մռայլոտ
Ու, ծծելով ունայնություն արևից,
Լալահառաչ զանգակում է պիրկ կարոտ,
Սփրթնում է սրտաբխված զարթոնքից:

Քանդվում են տխուր ողբեր հուզմունքից,
Անսպեղանի ու դառնագույն ժանտ է խոցոտ
Թշվառ, լքված ու տարամերժ շողերից
Պատել նրա տանիքները կնճռոտ:

Ու հագնելով դժգույն-դալուկ անհուսություն՝
Տխրահունչ նենգ թույլ քայլերով մահագույժ՝
Ընթանում է առավոտը՝ ցանելով թույն,
Բայց նրան ի՞նչ նա խմել է գորեղագույն հակաթույն:

5 հոկտեմբեր 2002

ՑԱՅԳԱՆՎԱԳ

Երագում էր իմ գիշերը աղջամուղջին
Հրաշափառ ու կեռասե վառ շուրթերով,
Ամուր փարվում, համբուրում էր մղձավանջին,
Գալարվում էր հրճվանքի ոռնումներով:

Ողջունում էր իմ գիշերը ցայգաբացին՝
Ձինջ արտերից ետ քաշելով սև սավերներ,
Տրվում էր նա մահվան ահեղ շուրջպարերին՝
Արձակելով արցունքների գորեղ շիթեր:

Ու հալվում էր իմ գիշերը երագների,
Ծածանում էր լույսի բծեր, լույսի ցոլքեր,
Կապտոթյուն էր նա իջեցում ծով գեղանի
Ձինջ ու հանդարտ կամարների իմ հոնքերի:

5 հոկտեմբեր 2002

ԻՆՔՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Ժամանակն անցնում է, ոչինչ չի կառուցում,
Հոտած առվակով ձմեռ է հոսում,
Սպառնալիքներ են գուտ հրահրվում,
Ես պարպվում եմ ու լիցքաթափվում:

Փոխհատուցվում եմ տիրոջ կոչումով,
Տեր եմ ես դառնում մակաբույծների,
Թագադրվում եմ ես երկրորդ անգամ
Ու տապալվում եմ գահընկեցումով:

Ինքնաբացարկ եմ ես հայտարարում
Ու ակնկալում եմ ինքնահաստատում,
Նորից զբաղվում եմ ինքնաբուժությամբ,
Մակաբույծներիս թունավորությամբ:

Ինքս ինձ կրկին կրկնօրինակում,
Ինձանից մեկին առվակ եմ նետում,
Հոտած ձնհալով արքա եմ օծվում,
Թագադրվում եմ ու մակաբուծվում:

12 հոկտեմբեր 2002

ԸՆԴԱՌԱՋ ՔԱՅԼԵՐ

Առավոտյան բարգավաճված,
Հոգիս, սիրտս պողպատացրած,
Հաստ գավազան ձեռքս բռնած
Ես քայլեցի քեզ ընդառաջ:

Առավոտյան ընդարմացված,
Սառը ջուրը կրծքիդ խրած
Ու կրքերը մեջդ եփած
Դու քայլեցիր ինձ ընդառաջ:

Բարգավաճված-ընդարմացված
Մենք քայլեցինք իրար առաջ,
Եկանք-տվինք իրար հառաչ,
Տարածվեցինք եթեր, ձախ, աչ:

Ու քեզանից ընդարմացված՝
Ես քայլեցի քեզանից անցած,
Ու ինձանից բարգավաճված՝
Դու հոսեցիր ինձանից ցած:

19 հոկտեմբեր 2002

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

Հանել են աչքերս իմ տարիները,
Փոխարինել են ամրակուռ փոցխով
Ու ես քայլում եմ մեծ փողոցներով,
Հնձում եմ մարդկանց իմ աչք-փոցխերով:

Աշնանամուտի վերջին ճիգերով
Ընտրյալ եմ գտնում մեծ ամբոխի մեջ,
Արևագալի վերջին տապերով
Նրան փոցխում եմ երազներիս մեջ:

Ու հիանում եմ ես իմ հնարով,
Նա հիացնում է ինձ սին քայլածքով,
Փոցխս մի կողմ եմ հիմա ես դնում,
Փոխարինում եմ կանչող հայացքով:

Իսկ կանչող հայացք թերևս չունեմ,
Դե՛, տարիներս լավ չեն աշխատել,
Միայն փոցխեր են նրանք ինձ տվել,
Միայն ընտրելու հնարով օժտել:

Եվ ես քայլում եմ տաք աշնան միջով,
Փոցխում եմ մայթեր, անթիվ անցորդներ
Ու համբերատար սպասում եմ սիրով
Ինքս փոցխվեմ մի գուցե մի օր:

3 նոյեմբեր 2002

ԻՆՔՆԱԲՈՂՈՔ ԱՅԳՈՒՄ

Մատնված եմ ես խոշոր խուճապի,
Ալեբախված եմ ու ալեկոծված,
Տազնապահարված եմ, ինքս ինձ կորցրած
Ու վերածված եմ տգետ անճարի:

Լալկվել եմ ես իմ թուլությունից,
Կողմնորոշումս կորցրել եմ ես,
Նյարդանանում եմ ես ամեն ինչից,
Հոգնել եմ նույնիսկ ինքս ինձանից:

Ահաբեկված եմ իմ ապագայից,
Ինձ վաղը սպասվող տխուր օրվանից,
Իմ հիմար ու սին գուշակումներից
Ու իմ հիվանդոտ անմտությունից:

Աղոթել չաղոթելու երկմտությունից
Քրքրվել եմ ես, ինքնախոշտանգվել,
Լինել լինելու ցանկություններից
Անվերջ զգվել եմ ու խելագարվել:

Եվ ինչպես հիմա ես վերափոխվեմ
Ու չեզոքացնեմ խանգարումներս,
Եվ ինչպես, ինչպե՛ս ես չեզոքացնեմ
Ու բնաջնջեմ արհավիրքներս:

5 նոյեմբեր 2002

ԼՍԻՐ, ԱՊՐԵ՞Լ ԵՍ

-Լսի՛ր, ապրե՛լ ես:
 -Գուցե, երևի՞:
 -Լսի՛ր, արքե՛լ ես,
 Շո՛ւտ, ուշքի՛ արի:
 -Կուզենայի, թերևս
 Լինել քիչ արքած,
 Կյանքով գինովցած:
 -Հապա, այն ո՞վ էր
 Օրհնում վայելած,
 Թե՛ ինքն ապրել է,
 Ի՛ր հետ են ապրել:
 -Անցած բաներ են՝
 Հետքեր չթողած:
 -Հետքեր թողա՞ծ,
 Հետքեր թողել են,
 Դե՛, մի՛ ուրացիր:
 -Ես այդպիսինն եմ:
 -Լսի՛ր, լսիր դու կո՛ւյս չե՞ս:
 -Իսկ, ի՞նչ է, մե՞ղք է:
 -Այն էլ ինչպիսի՞:
 -Մեղք չե՛ դա, վերք է՝
 Վաղուց սպիացած:
 -Համա՛ թե պինդն ես:
 -Ինձ պնդեցրել են:
 -Ինչպե՞ս, խոցելո՞վ:
 -Ե՛վ պատահել է
 Նաև այդ ձևով:
 -Ու դու դարձել ես
 Խտացված մրով
 Պարփակված կորով,
 Նենգաղավ աղվես...
 -Ինչպես տեսնում եք
 Ինձ պատրաստել են
 Բավական հաջող:
 -Այո՛, չես ասի ոչինչ:
 Միայն թե, ես քեզ
 Տեսել եմ նաև
 Երկար պուրակում,
 Ուրիշն ես այնտեղ,

Տա՛- կա՛-վի՛ն ուրիշ:
 -Իսկ ո՞ր պուրակում,
 Ուռենիների՞:
 -Այդպե՞ս է կոչվում
 Հավաքատեղին:
 -Անվանիր դու այն
 Ինչպես որ կուզես,
 Միայն, այդ կյանքիս
 Նորից չդիպես:
 -Ա՛խ, ես Ձեզ կծեցի՞
 Մեծարգո իշխան,
 Ձերո՞ղ ամենայն
 Գերազանցություն:
 -Իշխան եմ փոքրիկ
 Ոչինչ չես ասի:
 Լսի՛ր, հոգնեցի
 Քեզ հետ խոսելուց:
 -Դու խուսափում ես
 Քո պատասխանից,
 Իշխան պատվելի՞:
 -Հանգիստ թող դու ինձ
 Հեզուն՝ո գարշելի:
 -Օհ՛, ախ այդպես,
 Անցնում ենք արդեն
 Վիրավորանքի՞:
 Դե՛, լսի՛ր ուրեմն
 Նվազագո՛ւյն իշխան...
 -Էյ՛, ես կամ դեռ այնքան,
 Որ հաճախ բավական
 Ինքնասպանություն
 Գործեմ շատ դաժան,
 Որպես երաշխիք
 Իմ այս խոսքերի
 Հիմա էլ քեզ եմ
 Մոխրացնում իմ մեջ,
 Գնա՛, գումարվի՛ր
 Իմ չորությանը.
 Գուցե՞ թե նաև
 Արթնացնեմ մի օր:

13 նոյեմբեր 2002

ՀՈԳԵԲՈՒԺԱՐԱՆ

Ես գժվել եմ ըստ երևույթին,
 Չի կարելի այդքան կարուսել նստել
 Ու գլխապտույտով դրանցից իջնել,
 Թողնել հեռանալ, փորձել մոռանալ,
 Բայց վերադառնալ ու նորից նստել:
 Ու ոլոր-մոլոր կամ վերև-ներքև,
 Չանգեր, դողանջներ, անճոռնի ճիչեր,
 Ու կարուսելնե՛ր, ու կարուսելնե՛ր,
 Ու քաղաքային զիլ զբոսայգիներ,
 Նորից պտույտներ, անթիվ թռիչքներ,
 Ինքնամոռացման ծով գալարումներ,
 Ու տաք գույներով, ոճով ինդիգո,
 Լրացումներով իմ կյանքի անգո
 Աղաղակում եմ գոհ ծնծղաներ՝
 Իմ մեջ տոնելով ինչ-որ
 Խյուսացված մեծ հաղթանակներ:
 Ու նորից տրվելուց ինքնացնծության
 Մուրում եմ դեսի հոգեբուժարան,
 Խմում եմ անհազ դեղ-կարուսելներ
 Ու ախտորոշվում եմ կարուսելամետ
 Ու անբուժելի կարուսելամոլ,
 Նշանակում եմ ցման բուժումներ՝
 Ծով, կարուսելներ, ծով-կարուսելներ:

17 նոյեմբեր 2002

ՊԱՐԶԱՊԵՍ

Ես ամենավատը չեմ,
 Պարզապես, ես սուրբ չեմ,
 Պարզապես, ես պարզ չեմ,
 Թեև, ամեն ինչ պարզ է,
 Պարզապես, ձմեռ է հիմա
 Ու դեռ ավելին՝
 Գիշեր է հիմա,
 Ու ընտրածս մայրուղին
 Տուրք է տալիս մղձավանջներից,
 Պարզապես պետք է ինքնախրատվել,
 Ինքնախոստովանություն երբեմն անել:

Ես անիծված եմ,
 Ես անիծված եմ միշտ փնտրտելու
 Ու չգտնելու, չհագնալու,
 Չկայանալու պարզամտությամբ,
 Պարզ իմաստությամբ՝ որկրամոլությամբ:
 Վերապրումներով՝ տապալումների
 Գոհնե իմանալի ինձ անիծողին,
 Պարզապես, տեղը գոհնե իմանալի,
 Երկնքում է նա, թե՛ ինձնից ներքև,
 Պարզ կաշառքներով, սուրբ աղոթքներով,
 Կամ էլ գանգերով, ոսկրի հյութով
 Նրա մոտ գնալի,
 Իրեն քաջ հայտնի
 Պռռնկածնունդ անուններիցս որևէ մեկով գուտ ներկայանալի,
 Նայեի այն տեղին,
 Ուր ես պարզապես
 Միշտ էլ նայում եմ
 Պարզադիրքության ցանկություններից,
 Ու իր անեծքը իրեն ետ տալու պարզամտությամբ,
 Ու իր անեծքը իրեն իսկ վզով
 Ետ փաթաթելու պարզամտությամբ
 Պարզապես շնջալի քմծիծաղելով՝
 «Ես քեզ ուզում եմ»:

8 դեկտեմբեր 2002

ԱԳՈՒՎ... ԸՆԿԵՐՔ... ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ: ՈՏՔԻ ՎՐԱ

Անում եմ հարված
 Ես մթության մեջ,
 Իսկ հետո հրդեհ,
 Կայծակավորված
 Ծուխը ցույց կտա
 Ինձ լռության մեջ
 Բոցերն իր գունեղ.
 Դա՛ է ինձ համար:
 Ցուրտ է, քամի է՝
 Հյուսիսավորված,
 Երբեք չեմ տեսել
 Ագռավներ տգեղ,
 Չեմ էլ ունեցել,
 Հեքիաթներ ես՝ շեղ,
 Չեմ էլ ընդունել
 Մարիխուանա
 Կամ ուրիշ այլ դեղ,
 Լուռ նստեցրել եմ
 Ուսերս՝ թիկնեղ
 Վայրի գայլատեղ
 Այստեղ ու այնտեղ:
 Յրտից տաքության
 Ձեռքով շրջան եմ
 Գծել ես շատ նեղ,
 Քեզ ոչ մեկին
 Չեմ տվել, բայցև
 Չեմ գնել քեզ սեխ
 Ոսկե ջուր, պղպեղ,
 Բաց ես թողել ինձ
 Դու այնտեղ, որտեղ
 Կամ և՛ ես, և՛ դու
 Նաև հայացքներ
 Ներսից իմ անկեղծ
 Հրեշտակաստեղծ,
 Ու ես չեմ կարող
 Ծայրամասերում
 Դառնալ կեղծ,

Թեև երկինքը
 Թափում է ներքև
 Սուր տեսողություն,
 Երկու խխունջներ,
 Մետաքսե օրեր
 Ու արցունքաստեղծ
 Տաք շոկոլադներ,
 Դռան թակոցներ
 Ու նաև բացում,
 Դռան՝ իմ կողմից
 Ու հարված նորից,
 Փախուստ, փայփայում,
 Տունս գորովող
 Հյութածոր մեծ դեղձ,
 Ու մթության մեջ
 Մի հիվանդություն,
 Ժանտախտ հատկապես,
 Յոթերորդ երկինք,
 Բարձրություն բնից վեր,
 Էլ չենք արթնանա մենք
 Երկուտով այսպես:
 Ու չմոռանաս
 Դու ամեն գիշեր
 Իմ այգում տնկել
 Դալար կեչիներ,
 Ընկերքդ հանես,
 Արզանող քերես,
 Այգուս հողերը
 Ծոխ պարարտացնես,
 Ու քերամումս
 Մերմնացան անես,
 Մերմնախաղերով
 Իմ վրա միզես:

8 դեկտեմբեր 2002

ՔԱՆԴԱԿ

Փակված մի փոքրիկ, ժառանգված խցում
 Տեղավորվում էր, մի կերպ հարմարվում
 Ու ինքն իրենից մարդուկ էր ծեփում,
 Վերցնում էր նա պինդ խմորագունդ,
 Գոնդողանման մի ինչ-որ այլ գունդ,
 Բարակ փայտիկներ, նաև մեկ հաստ փայտ
 Ձևում էր դրանք, հատում ու կտրում,
 Տաշում էր հապճեպ ու վերածնում,
 Կա՛ն հաջողված էր իր գործը համարում,
 Կա՛ն էլ նայելով՝ տեսնում էր անդունդ,
 Ու չէր հապաղում, նորից էր սկսում,
 Ու գնաց... ամեն ինչ նոր սկիզբ էր առնում,
 Մի՛ խառնաշփոթ, մի՛ իրարանցում,
 Խելագարություն, մոլագարություն,
 Գիժ, նպատակամետ ծով փութկոտություն,
 Նաև սովալլուկ ճգնավորություն
 Ու և՛ մթնշաղ, ո՛ր ցնորք գիշեր,
 Հանդարտ առավոտ, աքաղաղականչ,
 Ու և՛ վարագույր, ո՛ր դրա անկում.
 Հրա՛շք, հայտնություն, թրծված կերպար,
 Փա՛ռք, հաղթանակ, ինքնաքանդակում,
 Ծնո՛ւնդ, ինքնամանի քարե արարում,
 Կա՛ռք, դեպի կյանք, ինքնակայացում:

18 դեկտեմբեր 2002

SARO

Գերեվարե՛լ,
 Ինձ շատ հեշտ է գերեվարել,
 Վրաս նայել,
 Բավական է մեկ հայացքով նշան անել,
 Մեծ կամ փոքրիկ,
 Տիա՛հ, անդուր կամ դուրեկան
 Աչիկներով ինձ դուրս հանել:

Գերեվարե՛լ,
 Ինձ շատ հեշտ է գերեվարել
 Ու իմ մեջով
 Շատ էժան է երթևեկել,
 Ու իմ մեջով, իմ ամրակուռ ոսկոր մեջքով
 Կայծակաստեղծ Ծիր կաթինով, անվերադարձ արահետով,
 ուտքով, շուքով,

Քաղցր կաթով, տապ արևով արտս հերկել:

Ուրախացնե՛լ,
 Ինձ շատ հեշտ է ուրախացնել,
 Ինձնով ապրել,
 Շատ էժան է ինձնով ապրել,
 Ինձնով տարվել,
 Ինքնաընձա առասպելով,
 Խաղով, տաղով, լեզենդներով,
 Սաղմոսներով ու օրհներգով ինքնատրվել:

Տիրապետե՛լ,
 Ինձ շատ հեշտ է տիրապետել,
 Իմ վրայով
 Շատ էժան է հագուստ կարել,
 Իմ վրայով
 Ամպապոռթկուն որոտներով,
 Մրրիկներով, մեզով, ձյունով,

Մառախուղով, տեղատարափ վարարումով,
Հեղեղատով անձրև շաղել:

Բոցավառե՛լ,
Ինձ շատ հեշտ է բոցավառել
Ու տաքացվել,
Շատ էժան է ինձնով ջերմել,
Ծուխ տարածել,
Իմ մոխիրը ինձնից հանել
Լեռնաշղթա ջունգլիներով,
Օվկիանոսով, ճահիճների մեռյալ դաշտով,
Հոգուս կանչով, կրակների հանդիպումով
Ու մատների նուրբ շարժումով խարույկ դավել:

20 դեկտեմբեր 2002

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՅՐՈՑՆԵՐ

Ու իմ սարերով զբոսանք անելիս՝
Ինչ որ մի տեղում ես սայթաքեցի՝
Իմ, հավանաբար, արտաքին տեսքում,
Պահելաձևում, պահելախաղում,
Ինձնից չկախված իմ կառուցվածքում:
Ու կորցրեցի, ինձնից հակառակ բևեռ թեքեցի,
Ինձ մոռանալով միամտություներով՝
Հաղթել տվեցի նրան մեծ խաղում,
Պարզ վաղվա օրս չախտորոշեցի
Ու տխուր ցավով ապականվեցի,
Նորից խաբվեցի, թեև գուտ իրականում
Ես վերապրեցի պատանեկայնացում:
Բայց այդ հրաշքից շուտ գրկվեցի,
Օգտագործվեցի, դեմ շարտվեցի,
Խորանի մման հետ վերադարձվեցի,
Իմ նույն ավերակ ժեխ վիճակներում
Այսօրվա օրվաս իրականացվեցի:

Իսկ դրսում նագով ձմեռ էր խաղում,
Ինձ գուշակում էր նոր ճոխ հանդիպում,
Ու ձյուն էր մաղում:

21 դեկտեմբեր 2002

ԿԻԼԻԿԻԱ

Տոնախմբության հրաշք պատմություն.
 Օր՝ հինգերորդ՝ տոնախմբության,
 Օր՝ խմբերգության, ո՛չ եղեռության,
 Օր՝ ծխակատար փայլատակության:
 Եվ փառապանծություն, ճոխ եղելություն,
 Երգ՝ հոգեթով միգամածություն,
 Պար՝ հեզաբուխ ոգևորություն,
 Տոն՝ կենաց ողջախոհություն,
 Ծառ, շղա՛րշ ու շողշողություն,
 Տղա, տղաներ, տղամարդկություն,
 Նույն ձայնի կանչով հրաշեկ պատմություն,
 Մեկ տարով ավել ծերունակություն,
 Բայց ամրապնդում՝ զիլ ունակություն,
 Ու նորից շուրջպար, ժրաջանություն,
 Բերնում զգացում դառնահամության,
 Տղա՛, տղաներ, գինի էություն:
 Օր՝ հինգերորդ, տոնախմբություն:

4 հունվար 2003

ՈՒՇԱԹԱՓՈՒԹՅՈՒՆ

Ձյան փաթիլներին հատուկ հեզանքով,
 Իմ քայլվածքին հատուկ նազանքով,
 Ու սլաքների ներդաշնակ վազքով
 Սկսեցի ընթացք նոր երազանքով,
 Նոր տվաշտանքով, նոր ճախրանքներով,
 Նոր սխրանքներով, նոր պարծանքներով,
 Նոր ճանապարհով, նոր կածաններով,
 Նոր աշխարհքներով, այլ տիեզերքով,
 Օվկիանոսների, ծովի եզերքով,
 Հոգուս համահունչ լիրիկ երգերով,
 Ինձնով, ինձանով, ես՝ իմ գույներով:

6 հունվար 2003

2003

ԴՐԱՍՄՏԻԿ

Հիմարություն, անհասկանալի տրամադրություն,
Անխնա բաշխած ճոխ գեղեցկություն,
Ու իմ տիրելը՝ նրան չհասնելու, չվայելելու,
Նրանով անգամ բույն չապրելու
Պատրվակներով թունավորության,
Նաև չարացում ու նախանձություն՝
Իմ տգեղության, նրա պերճություն,
Աչքեր կուրացնող փաստացիության:
Ու եռման կետում՝ քաղցր շոկոլադ,
Սև գույնի թանաք, հետո անուժ քուն՝
Գեղեցկանալու սին միանտությանը,
Պատվերով հեքիաթ, երազախաբություն:

29 հունվար 2003

ՄԿԻՉԲ

Լիճ էր ու ամեն ինչ կարծես սկսվում էր նորից,
Չմեռ չէր, ուղղակի աշունը խաբվել էր ցրտից,
Երկուսն էին, իրար չէին սիրում, խոսում էին կրքից,
Ու կրկին ամեն ինչ սկսվում էր նորից:

Հոգնել էր, նվաղել, բաժանվում էր կյանքից,
Չէր էլ գուշակում, որ երեկվանից
Սերմնավորվել էր՝ անկախ իր կամքից,
Սկզբնավորվել էր ամբարտավանից:

Ու անցնող մեզը կերտում էր ձյունից,
Չմեռ էր ծեփում ձյան իսկ փաթիլից,
Գալարվում, սառած շտապ անցորդներից
Պոկում էր զգվանք. «Չմեռ է նորից»:

Չմեռ չէր նորից, ուղղակի աշունը խաբվել էր ցրտից,
Սերմնավորվել էր բքոտ մրրիկից,
Պարզապես, աշունը սառչելով ցավից՝
Հրաժարվում էր իր առողջ սրտից:

Ու լիճը հարթ էր նույնիսկ սաղափից,
Այստեղ աշուն էր, ձմեռ՝ այն ափից,
Մեջտեղում նա էր՝ ձմեռն՝ աշունից,
Ո՞վ գիտե, գուցե աշունը ձիգ ձմեռվանից:

31 հունվար 2003

ԱՊՐԻԼ

Փարիզ... գարուն էր ու ապրիլ ամիս,
Բացօթյա սրճարան էր՝ Մորե փողոցում,
Ես՝ գարնանային առաջին հագուստիս
Թեթևությունն էի սուրճով վայելում,
Ու մեծ քաղաքը ուսիս գգվելիս՝
Շքեղ հեքիաթ էր ինձ շարադրում:

Կիև... գարուն էր ու ապրիլ ամիս,
Կայարան էր ահռելի, մետրոյի վագոն,
Ես՝ Կրիշատիկով թեթև զբոսնելիս՝
Լուսանկարվում էի ինձնից շատ գոհ,
Ու հնձած կանաչը մատելով քթիս՝
Շոյում էր, ցնորում, պարտություն անգոգ:

Օդեսա... գարուն էր ու ապրիլ ամիս,
Պասաժն էր, Դերեբաստվսկայան ու նաև գարեջուր,
Քառակուսի էր, փնտրում էի, բայց գուր,
Ու ես տարվում եմ, հոսում եմ, բայց ո՞ր,
Մենապարում եմ, քնում եմ այլուր,
Պրեռբրաժենսկայա, որտեղ ե՞ս, ձայն տո՛ւր:

7 փետրվար 2003

ՉՎԵ

Բարկացած են այսօր սավառնողները թռչում,
Խառնաշփոթ է, խենթ իրարանցում,
Ինչ որ հեղեղ են կանխագուշակում
Կամ փոթորիկի խելագար անցում:

Ու երամները իրենց թռիչքից արագ կպոկվեն՝
Թողնելով բարձունքները միայն ամպերին,
Իրենց ատամները բարակ կտուցով նրանք կփոխեն՝
Եթե հանդիպեն սպիտակ Ալպերին:

Ու օրինավոր իր մեծ երամից
Ինչ-որ մի ճիվաղ հաստատ դուրս կգա,
Նա ետ կմնա թռչող երամից
Տանիքից կիջնի, ինձ մոտ հյուր կգա:

Այդպես էլ մտքերը ոչ սովորական,
Որ սավառնում են գլխավերևում
Միշտ որպես կտուր ինձ են նախընտրում,
Ինձ են այցելում շատ պատահական:

Ու տարբերվում եմ, տարբերվում եմ ես,
Իմ իսկ երամին ես չեմ նմանվում,
Ուրիշ չվե եմ ինձ ճանապարհում.
Այսօր բարկացած են սավառնողները թռչում:

10 փետրվար 2003

ԿԵԶԻՆԵՐ

Ջրանցքի կողքով ճանապարհ ընկած,
Գլխաշոր կապած. դարերից հոգնած,
Շրթունքներս իջեցրած իմ երազներում
Վարդագույն ծուխ եմ բաժանում մարդկանց:

Ու թափառում եմ քո ականջներին,
Ինձ են կուլ տալիս աչքերդ բացված,
Թրթռեցնում ես ինձ քո պիրկ ջլերին,
Մի կողմ ես շարտում քեզանից վանված:

Այսպես փնտրում ու կորցնում ենք իրար
Ու հոգնել ենք այնքան, ինչքան կարող ենք,
Սպիտակ կաթնային կեչիներով հիմար
Տնակ ենք սարքել ու ապրում ենք հիմա:

Համերաշխ ենք մենք, անբռնազբոսիկ,
Երկու քույր ենք մենք տարիքն առած,
Մենք այսպես կապրենք թերևս մի քիչ
Մինչև հյուսիսից հավի մի փրկիչ:

Կամ էլ հյուսիսը բևեռափայլի,
Շողեր իջեցնի մեր կեչիներին,
Ճերմակ տնակը հյուսիսափայլի,
Յնձա՝ տրվելով արձագանքներին:

14 փետրվար 2003

ՉՈՒԳԱՀԵՌ

Չուգահեռ եմ ես, գուգահեռ ես դու,
 Չենք խաչվում իրար, թեկուզ լինենք խաչ,
 Թեկուզ ես լինեմ անսասան կամուրջ,
 Թեկուզ ձախ ճամփադ թեքեմ դեպի աջ,
 Թեկուզ մտածես մի քիչ աչալուրջ,
 Քայլես դեպի ինձ կամ իմ ետևից,
 Միևնույնն է, դա՛ գուգահեռ է ինձ:
 Դու քո ընթացքով կանցնես իմ կողքից,
 Չուգահեռ է դա, գուգահեռ ենք մենք,
 Մենք մեր հուշերում փոխադարձ բեռ ենք,
 Ուղեղից մի քիչ թերևս կեռ ենք:
 Ամենուր ենք մենք, ինչպես ժիր կեռնեխ,
 Թռչում ենք, քայլում ու վագում, սուրում,
 Ու ամեն անգամ գուգահեռ ենք մենք,
 Չենք հատում իրար, չենք խաչմերուկում,
 Թերևս միայն, միայն հայացքով,
 Բազում նայվածքներ կլանված աչքով,
 Այն էլ մի վայրկյան, մեկ ակնթարթով
 Ու լուռ անցնում ենք մենք իրար կողքով,
 Մնում ենք իրար չծածկող ուղի,
 Մին գոռոզության երկար փակուղի,
 Գռնե մայիսն իր սխալն ուղղի
 Մեզ իրար հատի ու խաչածևի,
 Ոչ թե գուգահեռ, գուգագիծ թողնի:

21 մայիս 2003

ՈՂՁ

Երկար ես գնում, իսկ գուցե շատ կարճ,
 Գուցե հավիտյան, ընդմիջտ ու գուցե անդարձ,
 Գուցե ես ինքս հենց այդպես կուգեմ,
 Գուցե պայմանը հենց դա կլինի:
 Չոհարերությամբ թեկուզ դա լինի,
 Սկսած աչքերիս կեղծ լազուրությամբ,
 Անբռնազբոսիկ, մի քիչ մանկական,
 Հաճախ էլ նաև պատանեկական
 Չրույցախաղով, բառերիս շուքով
 Ու շատ մտածված սեթևեթանքով,
 Խորամանկության դեմ է՛լ առավելով
 Ու խորհրդավորության ապակե նախշով,
 Միշտ նույն հագուստով, բայց ոչ գլխարկով,
 Նույն դրոշակով, նշանաբանով
 Ու էլի շատ նման, մի շարք այլ բանով:
 Կայիր էլի՛, մնայի՛ր, գուցե թե ստացվեր,
 Ամուր հիմքերը գուցե թե ճախրեին,
 Գուցե թե հոգնած ավելին անեինք,
 Հասկանալի կեղծ ես, մի գուցե անկեղծ.
 Արժեքս կարանայի թե գնահատեի,
 Թեկուզ գնահատելու այլ բան ես ունեի:
 Ու չեմ փոշմանում, ես դա ընտրել էի,
 Այդ ընտրությունը ես կայացրել էի,
 Մեծագույն արժեք էի նժարին դրել,
 Դա վերջնական էր, ու քննարկման էլ ենթակա չէր,
 Փայլատակումը իրական ողջ էր:

25 մայիս 2003

18 ՇԱԲԱԹ ԱՆՆՇՈՒՅԼ ԼՈՌՈՒԹՅԱՆ

Կանցնի՛, ամեն ինչ կանցնի,
 Ու քո փակ դռներն ես էլ չեմ թակի,
 Ու իմ գառանցանքը, ցնորքն իմ խակի
 Կդառնա աղոթք, հարված մահակի,
 Լացը կդառնա քո ողորմելի,
 Կաղապարներիդ կապը կդառնա,
 Սպանող կդառնա, խելառ կդառնաս,
 Ու գիշերային ժամերդ պարե՛ր, պարե՛ր կդառնան:
 Ամեն ինչ կանցնի, կանցնի, կգնա,
 Գիշերվան՝ ցերեկ, ցերեկվան՝ գիշեր,
 Արևին՝ լուսին, ու լուսնին՝ արև կհերթագայի,
 Մոլագար օրեր, օրեր անց կկենան,
 Թափառաշրջիկ պատիժներ դաժան,
 Վրեժխնդրության համառ սլաքներ,
 Արկեր, աղետներ վրադ կտեղան,
 Ձյանը՝ ձնհալով, քեզ էլ ա՛յդ ձևով պատժված տենամ:
 Ու ոչինչ չի մնա, ամեն ամենը կանցնի կգնա,
 Ես էլ կգնամ, բայց անց չեմ կենա,
 Կպած կմնամ ամեն մի մագիդ,
 Տանջալլուկ մոխիր քեզ ժառանգ կտամ,
 Ամեն ոսկորիդ հիմքը կդառնամ,
 Ամեն բջիջդ ես կսնուցեմ,
 Գոռ անեծքներս ամեն նյարդիդ հենարան կտամ,
 Ու անց չեմ կենա, միայն կգնամ, լուռ ես կգնամ,
 Լռություն, խաբուսիկ լռություն,
 Ինձնից ոչ մի լուր ես քեզ կթողնեմ,
 Բայց քեզ չեմ թողնի իմ ամայություն,
 Ու դու չես մնա, քեզանից ոչի՛նչ, ոչի՛նչ չի մնա, կանցնես կգնաս,
 Հեղեղատ կամքս թեկուզ թոթափես,
 Քեզանից ոչինչ, միևնու՛յն է, հաստատ ոչի՛նչ չի մնա,
 Իսկ ես կմնամ, ես անց չեմ կենա,
 Միայն կգնամ՝ լռությամբ, շատ լուռ, գրեթե անձայն, աննշույլ

շշուկով:
 17 հունիս 2003

ՋՐԵՐ

Հերթապահ ժպիտ, սիրալիր հայացք,
 Դերասանական հնուտ շարժուձև,
 Կյանքի գունավոր խոստումնալից ցայգ,
 Ու մարիոնետ, տիկնիկային դեր,
 Անպատեհ մի խաղ, անլույս ու տձև,
 Կամակատար, հոգնած մուգ պահվածք,
 Պայքար առանց հակառակորդի ստույգ,
 Ինքնաթշնամի ախոյանի դեմ
 Գլխաբաց նայվածք ու մերկ սանրվածք:

17 հունիս 2003

ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Շարունակ դեռատի դիմախաղերով,
 Հպարտ ու նրբին քաղաքավարի,
 Սաթե կամ ինչ որ գույնի եթեր մագերով,
 Հարուստ, գեղեցիկ, հաղթանդամ արի,
 Ներքուստ ինքնամփոփ, շատ բարձրահասակ,
 Լանջերով՝ նման վիթխարի ահեղ մի սարի,
 Սոսկ սեթևեթանք, նագելի կոհակ,
 Քայլվածք՝ որպես զարմանք, փսփսանք,
 Պճնամոլությամբ մեծամիտ սարյակ
 Հիանալի գաղտնի դիմաքողերով,
 Ճոխ, խորհրդավոր, հրաշք կերպարանք՝
 Հարիր սիսեռագույն վարվեցողությամբ,
 Ծիծաղկոտ վերնատուն, բակ տանող աչքեր,
 Նեղլիկ մութ սանդուղք, մետաքսե շրթունք,
 Չար ազնվագարմ վարդենի պիտակ
 Ու նրա մեջ գիշեր, կամ էլ գիշերներ:

19 հունիս 2003

ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ

Արևի նարինջ փոքրիկ սկավառակ,
 Ծխակապտավուն փայլուն արևմուտք,
 Անհուսալի, անանց թախիժ անհատակ,
 Արևակե ծով, պղտոր հրվանդան
 Ու չար, խղճալի, կոկորդներ պատռող
 Գունատ սև ճայեր՝ բծերով սպիտակ,
 Միալար ճովողյուն՝ սուր ու անառակ,
 Մտացրիվ քայլվածք, շաբաթներ՝ ճնշող,
 Ու կրակոտ աչքեր՝ բյուրեղապակյա, ճոճվող,
 Ձիթապտղի գույն կյանք ու պատատուկ,
 Անկիրք սգալաքե ձայն՝ ականջ ծակող,
 Ջղոտ կեղծ հայացք՝ մռայլ ու վիուկ,
 Սթափ, հաստատակամ, ուղիղ ճանապարհ,
 Ուղիղ դեպի տուն՝ խոնավ հողատակ,
 Ու ինչ-որ լեռնանցքում գառիթափների
 Իր ողջ կանաչով մի ծեր եղևնի,
 Մի մութ կիրճ, նեղլիկ մի անդունդ, գունատ գառիկող,
 Բորբոքված մրոտ երախով քամի:
 Ու շքեղ-զնդան զգեստավորությամբ
 Երկնքի դրախտային ինդիգոյի մեջ
 Երկնագույն սովերով մարդ՝ աղեղնաձև,
 Ու փափուկ, արդեն այլ առավոտ ճերմակ,
 Ծով գոռոգության փետրավորությամբ
 Բորդո, ճյուղավոր գավաթ՝ ցուպաձև,
 Գրանիտե անկենդան վիթխարի հրեշտակ,
 Պիրկ, գավառային լեռներ՝ կորամեջք,
 Գզգզված հարթավայր, աղյուսե տնակ՝
 Կուտակված քարե թեք կամրջի տակ,
 Սրճագույն շեղ դեմք՝ կոպիտ բավական,
 Կեղտոտ ու կոկիկ կոճեր, փոր՝ տափակ,
 Անմիտ կապտավուն ակնասպիտակուց,
 Փոքրիկ կրծքածոց՝ ափին նեղիրան,
 Իսկ ցածում գորշակապույտ ցող վրան,
 Կայտառ, քնքուշ ու անուշաբույր
 Սքանչելի բան՝ առանձնահատուկ:

19 հունիս 2003

ՉՄԵՌԱՅԻՆ ԿԱՄՐՁԻ ՏԱԿ

Փողոցը՝ ննջող, հաչում էր շուրջս,
 Երկար, միհար, վշտի շեմին թախիժ՝ վեհափառ,
 Մի անցորդ անցավ՝ ձեռքով մանրակերտ,
 Ազնվական, ոտքերով՝ արձանիկե, դեպի աջս,
 Կայծակ սերմեցին հոգնած աչքերս,
 Ու նորից պատրանք, գիշեր՝ առանձնակերտ,
 Որ իջնում էր ծանր՝ գրկելով ուսերս,
 Տաք փարատելով ձմեռային հույսերս,
 Ու սարսափելի հեռուներ լսող լարված ականջս
 Վառում - մարում էր դառը սպասումի կանաչ լույսերս:
 Երևակայելով լուրթ գիշեր՝ սարսուռմի ու ճոխ դաստակերտ
 Այսպես ամեն օր, մի ամբողջ ձմեռում
 Չէի լքում ոչ մի օր ձնոտ կամուրջս,
 Երբեմն - երբեմն շատ-շատ էի ես սառում,
 Իսկ երբեմն էլ քիչ գոլացնում էի անհագ բերանս,
 Հազվադեպ միայն ու շատ հաճախ ո՛չ:

29 հունիս 2003

ՍՈՒՐ

Ամեն ինչ ավարտվեց գերսովորական,
 Ինչպես վերջալույսով օրն է ավարտվում
 Կամ էլ սկսվում է թաց արշալույսով:
 Ու միայնությունս ճակատագրական
 Նայեց ամպերին տափակ հույսերով,
 Գատարկ աչքերով, սուր-սաթ հայացքով,
 Եվ չորսքուրորդ նայեց աշնանական.
 Գունե աշունը գունանախշ անի,
 Գույներ ներածի, նախշեր թևածի,
 Ծիածանացնի ու ծիծաղեցնի
 Իմ սպիտակ ու սև ժապավենում քածի
 Ու ինձ վերցնի, տանի ման ածի,
 Փայփայանք, գուրգուրանք ու նման խաղեր,
 Գրգիռներ, ջղագրգիռներ, ծայրագույն վիճակ,
 Ծայրահեղ պահեր, քնքուշ ժպիտներ,
 Չարթոնքախշխսան մարմնախաղեր,
 Ու մատնախաղեր, պաշտելի կրակ,
 Բո՛ց, մի գուցե, հրդե՛հ, գուցե՞... ավերակ,
 Գուցե բաբախում՝ երակ առ երակ,
 Գուցե ներշնչում՝ երես առ երես,
 Շրթունք առ շրթունք, լեզու առ լեզու,
 Ու լպրծուն թուք, ու ափ հասած նավակ,
 Մեջն էլ նորաթուխ փոքրիկ մի գավակ:

18 օգոստոս 2003

ԱՆՎԱՐԺ ՁԵՌՔԵՐՈՎ ԼՈՒՍԵ ԾԻԾԱՌՆԵՐ

Լայն մարգագետնում նրբին մթնշաղ,
 Տաք վերջալույսից վարդագույն դողողջ,
 Սև թեք հարթավայր, գետախորշ՝ ծանծաղ,
 Ու մանր ծածանք, ծառերի բողբոջ:

Ու ինչ որ մեկը՝ ջրկիր աչքերով,
 Ծոր մեծարանքի հինավուրց ծիծաղ,
 Աղոտ երևացող անվարժ ձեռքերով
 Օղ էր ուղարկում մի լուսե ծիծառ:

-Թռի՛ր,-քնքուշ, կրծքային, զրնգացող ձայն՝
 Կամքին հակառակ փաղաքշանքով,
 Ու բերկրանքի անբիծությամբ ձյան
 Դ-ալկադեմ շշմում էր առույգ ճախրանքով:

Ու անիվները հանած հին սայլի վրա
 Մեկնվել էր անդորր դաշտային օդում,
 Ու բաց դարպասից փշող գով քամին
 Շեղակի ու խոշոր անձրև էր բերում:

Եվ ծիծառներ էին, լուսե՛ ծիծառներ
 Կողքերքը թառում, գրկում, պարուրում,
 Նա թույլ ժպտում էր ու անտարբերում,
 Անվարժ ձեռքերով հողմ էր տարածում:

21 օգոստոս 2003

ՆՄԱՆԱԿՈՒՄ

Յավի՛ց... քաղցրությունի՛ց, քաղցրությունի՛ց,
Գորովի՛ց... տվայտանքներից, բերկրանքներից,
Գույժի՛ց... ցնծություններից, ծնծղաններից,
Սևի՛ց... սպիտակությունից, ճերմակությունից:

Վախի՛ց... մահազդու անհայտությունից,
Անհայտությունից աստվածային,
Ահի՛ց... հոգեցունց զարհուրությունից,
Չավեշտությունից առեղծվածային:

Ու մահի՛ց... անիմաստ ինչ որ մի բանից,
Մահակնքումից, նորի այդ սկզբից,
Ոմանք ջանում էին ապրել շատ անբիծ,
Կյանքի՛ց... հեռանում էին անիմաստ կյանքից:

Քամո՛ւց... այդ հուժկու շոշափուկներից,
Շոշափումներից խորանարդային,
Արևի՛ց... այդ հսկա հրե հրեշից,
Հրշեջումներից հրեշտակային:

Ջրերի՛ց... նրա վիթխարի սառը շիթերից,
Ժայռաքթերից անդրամպային,
Մշուշի՛ց... նրա անթափանց ծանր թևերից,
Տարածումներից տոնական պահին:

Մարդկանցի՛ց... նրանց խոսակցությունից,
Ջգացմունքներից՝ կրքոտ, սիրային,
Պտուղի՛ց... արգելված, բայց դրախտային,
Ախտածին հազար ու մի դավերից:

Գոյատևումի՛ց... չիմաստավորված դատարկությունից,
Չդասավորված ճակատագրից,
Տրորումների պաղ սարսուռներից,
Գոռ, կոռ, գոռ իմ տարիներից:

21 օգոստոս 2003

ՈւՐԻՇ

Ու աստղերի ձուլարաններից
Ծածուկ, ուղղամետ գահավիժումներ,
Կոռ գալիքների տապ դարբնոցներ
Ու դեն նետումներ որպես հնոցներ:

Ու աղբանոցներ պատաստակերում,
Բացօթյա, տխմար սև գիշերումներ,
Հեղուկ ընդունում հին պանդոկներում,
Ու թափառումներ, թախիծ ու ներում:

21 օգոստոս 2003

ԾԵՐՈՒԹՅՈՒՆ

Նա քիչ էր քնում: Շատ ձանձրանում էր,
Բայց երախտագիտությամբ խաչակնքում էր
Կարկտախառն, լեռնոտ երկնքին,
Ժամացույցներին, օրացույցներին:
Արժանավայել էր ինքն իրեն պահում,
Սակայն խոսում էր զվարթ ու անփույթ,
Թորշոմածությամբ միշտ էլ հուզվում էր,
Նոսրացել էին մազերը, ի՞նչ փույթ,
Ու փոս ընկած քունքերի երկու կողմերում
Ցցվել էին լեշոտ խոշոր ականջներ,
Սուր ողերով մեջքը վաղուց ծռել էր,
Ու իր՝ թափված սաղարթի հոտով մարմնին
Նստած ճանճերին հապճեպ քշում էր
Կապույտ ճանկերով, ոսկոր ձեռքերով:
Հիվանդանոցի մասին նա մտածում էր
Ու հետո, հետո՝ ծաղրանքով ժպտում:
Իրեն հաճախ էր գերեզմանոցում նա պատկերացնում,
Մենության կսկիծով պառկում էր, լռում,
Շունչը պահում ու պատահական հանդարտ քնում էր
Ու երազներում փորձում էր կարգի բերել հուշերը աղբատ,
Վերհիշում էր անիմաստ, միապաղաղ դրվագ,
Անորոշ, կցկտուր, հիմար պատկերներ...
-Ի՞նչ կամակոր է մահը, չի՛ գալիս:

21.օգոստոս 2003

ՄՈՍԿՈՎՅԱՆ

Մտադրված էի, պետք է արարեյի
Ամեն անգամ եմ այդպես ես անում
Թեև երկրողն է թվով կատարվում:
Նորից ոլոր են ու մի քիչ գաղտնի,
Եվ այդ քաղաքը պետք է նվաճվի՝
Իր կամարներով, իր այգիներով,
Իր բոլոր-բոլոր խրախճանքներով:

12 դեկտեմբեր 2003

ՄԻՇԵԼ

Հաջողությո՜ւն... իսկ դա նշանակում է հավետ,
Չենք տեսնվի, բայց երկար կշարունակվի
Քո ծիծաղը թևածել անկողնում մեր բուրավետ
Ու անքուն գիշերներում դեռ կարճագանձվի
Մեր սիրո կորուստն անդարձ, անհավետ:

Ու կբերի, ինչ որ մեկի բախտը անչափ կբերի,
Կապրեն ես նորից ինչպես պատահի,
Ինչպես որ ստացվի՝ խենթ, անիմաստ, թերի,
Մրտիս կտորած ցավով՝ ամենի,
Ցավով՝ աչքերիս հոգնած թերթերի:

Ու ամեն օրս շատ զավեշտայի
Նոր ցուցանմուշ կարող է լինել,
Տիկնիկների հնամուշ հոտով թանգարանների
Ցուցափեղկերում ես ինձ կդնեմ,
Մի գուցե նայես, մի գուցե գնես:

Ու մի օր, մի օր ինձ կվերցնեն,
Կարևոր էլ չէ թե իմ ո՞ր օրում,
Ինձ համար ոչինչ կարևոր չէ, հա՛,
Կարևորը թե նրա ո՞ր օրում,
Ու հաջողություն ցուցափեղկերին, ահա՛:

22 դեկտեմբեր 2003

ԲՈՒԼԱՏ

Օրը դանդաղ գիշերվա կփոխվի,
Ես նորից, նորից երկար չեմ քնի,
Կսիրահարվեմ ես իմ պահվածքին
Ու հազար բառեր մտքիս կհառնի:
Խուլ ես կլռեմ, լուռ կտանջվեմ,
Մեղսագործ հոգուս քանդվածքներին
Չեմ մրմնջա ոչինչ, կանցնեմ ամենքին
Ու առավոտս էլ իր նորը կսկսի,
Ես կշարունակեմ մանվածքը օրվաս,
Օրը դանդաղ գիշերվա կփոխվի:

22 դեկտեմբեր 2003

ՄՈՐՍԵ

Տարօրինակ այգիներ են, չեն կանաչում,
 Չեն հասցնում, ինձ չի հասնում,
 Պատահում է, ավա՜ղ աղ է, չեն սոսափվում,
 Հետք է թողել ուրիշ ձևի պատահածը:
 Արմատներս՝ բնույթով խոր, մամռակալած
 Գալարվել են, պալարվել են, ճղճղվել են,
 Ու ցրտերից, դատարկություն այդ ցրտերից
 Անէանում, կաղկանձում են, ինձ շփացնում,
 Դյուրաբեկոր մորմանում են՝ ցրտհարված,
 Ու արմատից, արմատից են հիվանդացած,
 Երերուն են, թեն կանգուն, բայց մահացած,
 Թե կանաչեն, նոր արմատով պիտ պատվաստվեն,
 Բայց պատվաստուկ ումի՞ց գտնեն:

17 փետրվար 2004

ԳՈՒՉՉԻ

Նորից վայր ընկավ ահռելի կյոթ
 Մի նոր բարձրություն,
 Ու հազարավոր տձև փշրանքներ,
 Մանր փշուրներ, փոշի՝ գունավոր,
 Ու որքան պահանջկոտ նախախնամությամբ,
 Ու որքան մանրակրկիտ նախապատրաստությամբ,
 Ու անհնարին կամ հնարավոր նախազգացումով
 Վերև էր հանվում բարձրությունն այդ գոռ,
 Որքան դիմափոշի, շպար, աչքի փայլեր՝ ծոր,
 Ու այլագույն բիրբեր՝ կայտառ ցասումով,
 Ընդգծված շրթունք, ընդգծված հոնքեր՝ կոռ
 Ու վերջում հորդառատ, կրակոտ գուչի՝ մոռ:
 Բայց իզուր էր այդքան վեր հանվում բարձրությունն այդ գոռ,
 Նորից կյանքն ինձ խայթեց՝ որպես նենգոտ բոռ,
 Հիմա ես ունեմ տձև փշրանքներ, անձև մանրուքներ ու կտորտանքներ
 Ու ժամանակ է պետք նոր բարձրությունը վերև հանելուն,
 Շատ-շատ է մանր իմ շինանյութը նոր,
 Բայց ես այն կանեմ, քանզի տևում են միայն այդ շնչով:

28 փետրվար 2004

2004

ՇԻՆԱՐԱՐ

Անկեղծ ասած ես հոգնել եմ
 Բանվորների փնտրտուքից,
 Ինքս պիտի բանվոր դառնամ,
 Գարտարագետ իմաստալից,
 Գծագրեմ, նախագծեմ,
 Հիմքեր գծեմ ու կառուցեմ,
 Քարտաշ դառնամ հիմա պիտի,
 Պատ կառուցեմ, վեր խոյացնեմ,
 Շինվեմ, շինեմ օր ու գիշեր
 Լայն ուղիներ, ճանապարհներ,
 Արքունիքներ, թանգարաններ...
 Բայց բանվորը՝ ինքը երբեք
 Չի՛ օգտվում իր շինածից,
 Չի՛ վայելում, չի՛ ապրենում
 Ու շինարար ես չեմ ուզում ինքս լինել,
 Ես ուզում եմ շինարարներ, շինարարներ՝ ր:

31 մարտ 2004

ՋՈՒԳԱՐԱՆԱՅԻՆ ՏԻԿԻՆ

Ջուգարանային տիկին եմ դարձել:
 Մի ոտքի վրա,
 Մյուսը ծալած՝
 Պատին դեմ տված
 Կանգնած սպասում եմ,
 Տղամարդ չկա:
 Ժամերն անցնում են՝
 Դատարկ ու հոգնած,
 Ես տխուր եմ,
 Քիչ հիասթափված:
 Տեսնես այդ հեռվում,
 Պաղ անձրևների գործարաններում

Ի՞նչ եմ մտածում
 Ջրերը տաշված,
 Որ ինձ ջրում եմ,
 Թրջում, հարբեցնում,
 Բայց ես չեմ ծաղկում,
 Մնում եմ գաճաճ,
 Մնում եմ կանգնած
 Նույն ոտքի վրա,
 Իսկ աջս ծալած՝
 Պատին դեմ տված,
 Ու մտմտում եմ՝
 Անձրևով տարված:
 Տեսնես տղամարդ
 Կգա զուգարան,
 Թեկու՛՛ կեղտոտ
 Թեկու՛՛ հարբած
 Թեկու՛՛ ծաղրի
 Թեկու՛՛ ծեծի...
 Ցնորքս միայն
 Առնի հեռացնի,
 Ջուգարաններից
 Ինձ հեռո՛ւ տանի,
 Թե չէ կավիրվեմ,
 Ջուգարանի թուղթ
 Ինքս կդառնամ,
 Ջուգարանային
 Առնես կդառնամ,
 Ջուգարան,
 Ջուգարան
 Նաև կդառնամ:

26 ապրիլ 2004

11 ԲՈՊԵ

Հետո դու կասես. «Ո՞ր է քո գինին»,
«Գինի չեմ սիրում, սիրելի՛ս, կներես,
Միայն երբեմն սպիտակ եմ խմում,
Իսկ կուզե՞ս օղի նարնջի հյութով,
Ա՛յ, դա պաշտում եմ,
Շատ դուրեկան է, անուշ,
Քո պես, սիրելի՛ս»:
Ու այդպես լավ է,
Չկան ո՛չ հուշեր ու ո՛չ էլ մշուշ,
Պարտականություն...
«Դե՛, խմի՛ր օղիդ, անցիր անկողին»:
Տասնմեկ ըռպե անց.
«Օ՛հ, շնորհակալություն,
Դե՛, հաջողությո՛ւն»:

26 ապրիլ 2004

ԱՐՄԱՆԻՆ

Ու կյանքը երբեմն տանում է նրանց,
Ովքեր կյանքի համար պայքար են մղում,
Բայց մահը դաժան չի սպանում նրանց,
Այլ շնորհում է ծով անմահություն:

Ու նա ապրում է մեր հոգում, սրտում,
Իր ընկերների վառ հիշատակում,
Քանզի այսօրվա հայ խաղաղ օրը
Մեզ պարզևե՛լ է մեր քաջ Արմանը:

Ու խիստ ձմեռվա սաստիկ ցրտերում
Մեր հայրենիքը ողբում էր, լացում,
Իրեն զավակին հողին էր հանձնում
Ու գերեզմանին թավ ձյուն էր իջնում:

Իսկ մոր արցունքն էլ այտին սառչելով՝
Միախառնվում էր ամբոխի ձայնին,
Ովքեր օրհնում էին ընկած մարտիկին,
-Փա՛ռք գերեզմանիդ, փա՛ռք քեզ, ֆիդայի՛ն:

22 մայիս 2004

ՄԵԴՈՒԶԱ

Գանգրահեր թուխներից՝ թուխ գանգրահերություն,
Իսկ ճերմակություն՝ հրեշտակներից,
Բյուրեղապակուց՝ թափանցիկություն,
Ու հանդարտություն՝ սաղոր գետերից,
Նաև ընթացքի վարար հուժկություն
Ու վեհ բարձրություն՝ սուրբ ջրվեժներից,
Դարավոր կաղնուց՝ երկարակեցություն,
Ու աղոթքների մշտնջենականություն,
Գիժ քամիներից՝ խելագարություն,
Ապա՛ ծովերից՝ մեծ փութկոտություն
Ես վերցնելով՝ հոգուս դռները կսկսեմ թակել,
Հետո ձներից մեղմ փաթիլների պտույտը կուզեմ,
Օվկինոսներից՝ խորունկ խորություն
Ու քո հատակում ես ինձ կգտնեմ:

22 հուլիս 2004

ԽԵՂԿԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինձանից թաքուն և շարունակաբար,
Այսինքն՝ ինչպիսի՛ մեծահոգություն
Երկար պասից հետո միանգամայն լուրջ
Գերկտիության խոստովանություն:

Առանց դադարի, խայտառակաբար
Թաքուն երազներ թեթևաբարո,
Չանձրույթ փարատող երանիություն
Կամ խաղալիքներ ժամանակավոր:

Ու ժողովելով մտքերի ամբար,
Անհեթեթության մի ամբողջ կողով,
Երջանիկ հույսեր, կյանքի մեծ լվացք՝
Նա վերադարձավ խեղկատակության:

7 օգոստոս 2004
Կիրով Կաչելիա

ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅՈՒՆ

Արատավոր ուրախությամբ
Ու, չզգալով ես ոչ մի ցավ՝
Թախծի, վշտի ուղեբեռով
Շարժվում եմ հոգնածությամբ:

Կաթիլ-կաթիլ կամքս կորավ,
Պղտորացավ սոնատներով,
Ու քայլերս վաղուց արդեն
Մշուշով են պատված խիտ, թավ:

Ու ձեռքերս վաղուց արդեն
Գուրգուրանքներ չեն զգացել,
Ու մատներս դարեր արդեն
Շոշոյանքներ չեն պարեցրել:

Ու աչքերս հիմա արդեն
Մոռացել են կրակ, արցունք,
Խոր գիշեր է նստել անդեմք,
Առանց թարթիչ ու առանց ունք:

Ու հոգնել են շրթունքներս
Աղաղակից, թքոտ խաղից,
Կամ այդպես են հիմա արդեն
Նրանց վրա ձմեռ դնում:

Իմ խաբուսիկ ձայնով դողդոջ
Փորձում եմ ինձ ես թաքցնել,
Թռչուն դարձած հոգիս անխոջ
Ճառական է ինձ տվալտել:

Ու դարձել եմ տրի-ռեգոլ
Կամ վարդագույն սալամբիկներ,
Կամ հրեշտակ՝ երկնագույն,
Թանձրակույտ երկնագույն:

Ո՞ր թաքցնեմ ինձ չզիտեմ,
Սերը իր տուն ինձ չի թողնում,
Իսկ առանց սեր նվագում եմ
Այրիացած հրաժեշտներ:

Ու զգացմունքի կրակներից
Իմ փշրված խղճուկ հոգում
Սերն ասես էլ չի կարող
Անասելի որջեր դնել:

Ու ելնելով նեղ մի կածան՝
Ես միայնակ գայլ եմ դառնում,
Թախսանձում եմ որպես գազան
Սիրո բեկոր, փշրանք, հատիկ:

9 օգոստոս 2004
Արզական

ՇԱՏ

Շատ էիր,
Շատ էիր ինձ համար,
Շատ էիր իմ մեջ,
Ինչպես գաղտնիքները թեժ Արևելքում,
Ինչպես սայիտակը ցուրտ հյուսիսներում:

Շատ էի,
Շատ էի քո համար,
Շատ էի ես քո մեջ,
Ինչպես կապարը թխպոտ ամպերում,
Ինչպես ալկոհոլը հարբածի գանգում:

Շատ էինք,
Հեղձուցիչ շատ էինք
Միմյանց համար մենք,
Խեղդող էինք, բոցոտ,
Կայծեր էինք,
Շատ էինք...

9 սեպտեմբեր 2004

ԹԻՎ 50 ԵՐԹՈՒՂԻ

Ինքն ինձ հետ եղավ բավական կոպիտ,
 Քնքուշ չէր, ու չեղավ նույնիսկ փոքրիկ մի ժպիտ,
 Բարեհաճ բառեր նվնվում էի միայն ես,
 Իսկ նա գռեհիկ հարցերով աներես
 Ինձ ստորացնում էր աչքերով՝ ցիանիդ:
 Դե՛, նա վարորդ էր, իսկ ես՝ ուղևոր,
 Ու ճամփան թեքած կապույտ երթուղով՝
 Նա խույս էր տալիս, համոզում էի ես,
 Ու ես բռնեցի դրան վերջապես:
 -Ուռա՛, խոշորագույնս, փարթամագույնս,
 Ջարգանդագույն ու անբասիր այնպես:

17 հոկտեմբեր 2004

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուրն ինքն է ընտրում
 Իր ընկերոջը և այլն,
 Բայց ոչ կրոնը, մաշկի իր գույնը,
 Թե ո՞ւմ աղոթի և իր բառերը՝ աղոթքի համար,
 Չենքի իր ձևը՝ պայքարի համար:
 Ամեն ինչ սո՛ւտ է:
 Ոչի՛նչ չես ընտրում,
 Ամեն ինչ ի վերուստ է,
 Միրոք քո ձևը,
 Ծննդյան օրդ,
 Մահվանդ ժամը:

26 նոյեմբեր 2004

ԱՊՐԵԼԱՈՃ

Իմ ապրելաոճը իմ նպատակը չէ,
 Ու ոչ էլ միջոց,
 Ավելի հեռու՝ դա է իմ ձևը,
 Մեր դեմքին պայծառ են միայն առավոտի շողերը:
 Ուր ինձ չես սպասում՝ դա է իմ տեղը,
 Ու նորն էլ միշտ նույնն է,
 Նույն բանի մասին,
 Ու գլուխգործոց է իմ ճանապարհը, կաթի բաժակը,
 Տարվա հերթափոխ է ու չորս եղանակ,
 Կտավների առք, մինչ այդ՝ գույնի պար, վրձինների խաղ,
 Կապույտ անապատ, ծովասույզ կղզի,
 Ի դեպ, շնորհավոր քո քաղաքի
 Գույնն առաջվա, սկիզբն է ձմեռի:

23 նոյեմբեր 2004

ԴՈՒ ՏԱՂԱՆԴ ԵՄ, ԿԱՌԿՈՒՇ...

Գիշեր է, և ես նորից իմ տուն եմ գնում,
 Իմ ոտքերը նորից ես տաք ջուր եմ դնում,
 Թե՛յ, մի գուցե խմեմ, իսկ միգուցե՝ ոչ,
 Կուզենայի իմ դուռը թակեր ինչ որ մեկն անկոչ,
 Նաև կարող եմ առաջին անգամ կյանքում
 Առաջարկ անել, հրավերքներ տալ կողքինիս անքուն,
 Շատ հասարակ է մտքինս ու բանուկ,
 Բայց և դժվար է, ունեմ զգացում ես տանուլ տալու:

28 նոյեմբեր 2004

ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Մագնիսացնելով մարմինս՝
 Կրկին սարսափահարույց կյանք եմ ըմբռնում,
 Տարաբնույթ շառաչում եմ, մաշկափոխվում
 Ու այս առավոտ, երբ իմ հուշերն ու ես
 Ոչ միաժամանակ արթնացանք
 Հայտնվեց անչափ եզակի և
 Ձինջ դյուրընկալության վիճակ,
 Ու իմ ներանձնական հայելին
 Թողնված է թափանցիկ, դատարկ,
 Ու բնավ չեմ ապավինում կյանքին,
 Ապրում եմ ու ես ինձ եմ վարժեցնում:

3 դեկտեմբեր 2004

2005

ՄԹՆՈԼՈՐՏ

Թե ցանկությունից
Կամ թե հիմարիկ մանկական խելքից,
Հետաքրքրասիրությունից
Կամ ի սկզբանե իմ մեջ ներդրված
Գեներտիկական կողավորումից,
Պատահականությունից
Կամ բարենպաստ տրամադրված
Խաղ-մթնոլորտից...

Էական չէ՞ դա,
Բայց սկսվեց հենց այնպես, չարաճճի խաղից,
Սկզբում դա ինձ մոտ սովորություն էր,
Իսկ հետո դարձավ բնավորության,
Հիմա էլ արդեն, ավա՞ղ, էության:

11 հունվար 2005

ՏԱՐԻՆԵՐ

Տարիներ առաջ խորանի դիմաց
Նա ծնկի իջած կամաց մտմտաց.
-Մերը, ինձանից, Տեր իմ Աստված,
Հեռու տար, հեռու, հեռո՞ւ-հեռու,
Անպատկերացնելի, սարսափելի հեռու:

Տարիներ հետո խորանի դիմաց
Նա ծնկի ընկած աղաչեց առ Աստված.
-Մերը, Տեր Աստված, ինձ բաժին չընկած,
Բեր սրտիս մոտիկ, մո՞տ-մոտիկ,
Աննշմարելի, ձուլման չափ մոտիկ:

Տարիներ անցան խորանի առաջ
Չկողմնորոշված ծնկի եկողի մտմտոցներով,
Երբեմն շռայլ տալիս էր նրան ծով սիրո հառաչ,
Երբեմն ժլատ լքում էր նրան մեծն Աստված.
Հոգնել էր Աստված նրա աղոթքներից սառած:

11 հունվար 2005

ՕԴԱՆՑՔ

Բոլորը նայում են պատուհանից դուրս,
Ի՞նչ լավ է պատուհանն ունի ապակի,
Բոլորը թափանցում են լուսամտից դուրս,
Ի՞նչ լավ է առկա է լույսն արեգակի:

Բոլորը լացում են ոչ հանկարծակի,
Ի՞նչ լավ է լացն օդով չի գալիս,
Բոլորը փակում են բոլոր կողմնակի
Պատուհանները՝ ուղղված լացի դեմ:

Բոլորն ուզում են ապակեպատել,
Լույս տեսնել, զգալ, բայց չշոշափել,
Ու արեգակին, ու արցունք բերող ճառագայթներին
Ապակու միջից թեթև կկոցել:

13 հունվար 2005

DEPARTURE

Աշնան ապերը միշտ էլ ալեխառն են,
Ամեն ինչ խառն է, օրերս խառն են,
Երջանկությունս՝ դժբախտություն է,
Եվ տխրությունս՝ ծով ուրախություն:

Ու երբ սկսում եմ ազատ ես շնչել
Ու իմ ամպերը սպիտակ եմ ներկում,
Իսկույն մի տեղից սկսում է շաչել,
Սև գույնն է իսկույն իրենը անում:

Ու աշնան ամպերը միշտ ալեխառն են,
Կամ միշտ աշուն է ամպերիս համար,
Սիրտս պարուրած ամպերին հախտուն
Աշուն է պատել, աշուն գունապատ:

13 հունվար 2005

ՏԵՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Միրո մասին գրքեր՝
 Հաստաժավալ ու ստվարափոր,
 Հիմարություններ՝ ահավոր,
 Կատարյալ տխմարություններ,
 Մանրակրկիտ մտացված, խոր,
 Անհմաստ ցնդաբանություններ,
 Թևավոր ու հեքիաթավոր
 Աստվածային եղենություններ,
 Գանգրոտ ամպիկներ՝ փետրավոր,
 Խաղեր, տաղեր, երգեր ու ձոներ,
 Ֆանտաստիկ, արկածավոր
 Ու անիրական, ճոխ պատմություններ,
 Պերճ շարադրված պատկերացումներ,
 Աշխարհասասան ու կրակավոր
 Ջիլ առասպելներ, նաև լեգենդներ,
 Սպիտակը սևով խզրզված տողեր,
 Բազում, բազմաթերթ էջեր բյուրավոր,
 Ու նվիրական, հոգու թրթիռով,
 Ամենավեհ, վեհոտ զգացմունքներով,
 Ու նաև շքեղ զգացումներով,
 Հոգու խորքում ծնված նուրբ երազներով, երազանքներով,
 Երբեք չկրկնվող հրաշապատումներով
 Գրքեր ու գրքեր՝ սիրո տեսիլքներով,
 Որ իրականում, զուտ իրականում
 Տխմարություն է՝ գեշ հորինվածքով,
 Մին տխմարություն, տխմարաբանություն,
 Դոխ հիմարություն, տխմար՝ տխմարություն:

16 հունվար 2005

ՍԵՆԱՊԱՐ

Գիշերն ինձ նորից պարի է հրավիրում,
 Ու օդն էլ նորից քամի է վիժում,
 Աչքերս իմն են ու առանց շարժում
 Ջրվեժից պոկում են զիլ գահավիժում:

Ու խաղողների փարթամ վիթերում,
 Ու ակունքների դաղձի թերթերում,
 Պարի շարժում է հոգիս մթերում,
 Ու տեսիլքներ է ուղեղս կերտում:

Ու իմ օերի քարավան հերթում
 Հակինթի մեջ պահված թիթեռ եմ դառնում,
 Փրփուր թուխպեր եմ դեպի սավառնում,
 Ու գիշերն ինձ նորից պարի է առնում:

1 փետրվար 2005

ДУБРОВКА

Նույնքան ուժեղ ու նույնքան մեծ,
 Ինչպես տեսիլքն իմ գիշերվա,
 Ու նույնքան ձիգ, նույնքան էլ պիրկ
 Ինչպես արևը թեժ կեսօրվա:

Ու նույնքան էլ նույնապատկեր,
 Նույնանման պատասխաններ
 Իմ հոգեմաշ ու սրտակեր
 Այնքան երկար փնտրտուքիս:

Ու ես հլու նրա տուրքին,
 Ինքը նման երազանքին,
 Նույնքան հզոր, նույնքան անզին,
 Իմ փայփայած տվայտանքին:

5 փետրվար 2005

ՃԱՆՃ

Ամեն առավոտ քո աչքի առաջ,
Քո պատուհանի բացվածքի դիմաց
Կլինի արև ու առատ կանաչ,
Ու, չուզենալով, անկողնուց վեր կա՛ց:

Ու կլինի նուրբ, գրեթե անճանաչ,
Չախողությամբ մի քիչ հնացած,
Ու քո օրերի՝ անցած-գնացած
Ափսոսանքների բարձրագույն հառաչ:

Միջնորմում ճեղքեր կլինեն ծակած,
Անցքեր կլինեն կողմերում՝ ձախ, աջ
Ու դու կլինես դիրքով պազած,
Ու հրավերքի լուռ կարոտականչ:

Կլինեն խաղեր գուցե և անդարձ,
Ու մեծ ու փոքր մսերի ճաճանչ,
Ու, իրականում, դու կզգաս հանկարծ,
Որ դարձել ես դու գուգարանի ճանճ:

6 փետրվար 2005

ԱՅՍՕՐ ԱՅԼԵՎԱ ԳՆԱՅՔՆԵՐ ՉԿԱՆ

Այսօր այլևս գնացքներ չկան,
Բոլոր տոմսերը սպառված են իսպառ,
Կարմիր պաստառներ, վագոններ լացկան,
Ամեն ինչ սառել, առել է ոռկան:

Այսօր ինձ վագոդ գնացքներ չկան,
Չկան տոմսակներ ու ոչ էլ մագուրթ,
Չկան շշակներ, կոչնակներն այդ բուրթ,
Ոչ էլ թունելներ՝ երկարոտ ու մութ:

Հեռագիր բերող գնացքներ չկան,
Երկաթե բոլոր ուղիներն այսօր
Խարխախ են գցել՝ խոր ու ինքնակամ,
Իսկ ես էլ կանգնել սպասում եմ անգոր:

Չկան, այսօր այլևս գնացքներ չկան,
Մլաքով օժտված սլաքավարներս բոլոր
Կարծես միահամուռ իրար տվել են լուր,
Չեղյալ են բոլոր ուղիներն այսօր:

20 փետրվար 2005

ԴՔԱՅԻՆ

Ուղեղին տվող դոփային ազդակ,
Սպասումների մեջ հեռախոսազանգ,
Եվ այսպես գալիս են տղաներն՝ առնակ,
Սկսվում է սեանսը՝ ճոխ, համապարփակ:

Վա՛յ, աղջիկներ ջան, դե՛, արագացրե՛ք,
Տվեք մամային հայելի, ներկերի պնակ,
Աչքերիս դնեմ երկնագույն ոսպնյակ,
Վզիս էլ կապեմ շողշողուն մանյակ:

Ոտքերիս քաշեմ կապրոնե գուլպա,
Որ իր մեջ ունի ձևեր ու ժանյակ,
Հագնեմ կոշիկներ՝ կրունկով, կաշվեպատ,
Հետույքիս դնեմ ուռուցիկ հենակ:

Ու կապույտ թավշից զգեստս հագնեմ,
Ու շրթունքներս էլ կարմիրով պատեմ,
Դեմքս էլ հարդարեմ՝ ինչպես նոր դիմակ,
Դիմափոշիով շպարեմ ինձ համակ:

Թարթիչներս էլ ջարդեն, վերև բարձրացնեն,
 Ու սևապատեն սահուն շարժումով,
 Մուր մատիտով էլ տակից վազանցեն,
 Մի հատ ինձ ձև տամ խորամանկումով:

Երեսիս շարեն կրքի հատիկներ,
 Մերկ գլխիս քաշեն կեղծամ, վարսիկներ,
 Գիմավորեք ինձ, տղե՛րք, բայց սպասեք,
 «Բալադին» մի հատ միացրեք, աղջիկներ:

20 փետրվար 2005

ԳՈՒԼԻՎԵՐ

Ես՝ միայնակ,
 Ինքս ինձ հակառակ
 Քայլում եմ դժնդակ,
 Ոտքերս երկու ակ:

Ես՝ անառակ,
 Իմ կամքին հակառակ
 Կապում եմ նուրբ ժանյակ,
 Վզիս էլ՝ ծուռ մանյակ:

Ես՝ մի մանյակ,
 Ինքս ինձ հակառակ
 Ծախսում եմ ժամանակ՝
 Շատ երկար ու բարակ:

Ես՝ մի օթյակ,
 Ինքս ինձ հակառակ
 Վարում եմ անթիակ
 Հնամաշ մի նավակ:

Ես՝ մի գրչակ,
 Ինքս ինձ հակառակ
 Գրում եմ հրովարտակ,
 Նստում եմ հովատակ:

Ես՝ մի դարակ,
 Ինքս ինձ հակառակ
 Վերցնում եմ դանակ,
 Քերթում եմ դմակ:

Ես՝ մի նամակ,
 Ինքս ինձ հակառակ
 Գրում եմ մեծ առակ՝
 Քշելով պատգարակ:

Ես՝ մի պատարագ,
 Ինքս ինձ հակառակ
 Դառնում եմ զիլ կոչնակ,
 Հնչեցնում եմ շշակ:

Ես՝ մի փչակ,
 Ինքս ինձ հակառակ
 Մտնում ես փեթակ՝
 Ուտելով լողակ:

Ես՝ մի արեգակ,
 Ինքս ինձ հակառակ
 Դառնում եմ լուսարձակ՝
 Լացելով սանձարձակ:

Ես՝ մի դերձակ,
 Ինքս ինձ հակառակ
 Կարում եմ համարձակ
 Փողերի մեծ տրցակ:

Ես՝ անարձակ,
 Ինքս ինձ հակառակ
 Շարուն եմ բացարձակ
 Իմաստով մեծ արձակ:

Ես՝ մի դագանակ,
 Ինքս ինձ հակառակ
 Ուտում եմ շագանակ՝
 Խմելով արգանակ:

Ես մի դայակ,
 Ինքս ինձ հակառակ
 Քամում եմ օշարակ՝
 Եփելով ջնարակ:

Ես՝ մի թռչնակ,
 Ինքս ինձ հակառակ
 Մատկում եմ միայնակ՝
 Ամենից անտեղյակ:

Ես՝ մի աղջնակ,
 Ինքս ինձ հակառակ
 Մարքում եմ պատրվակ՝
 Անդրվագ ու անէակ:

Ես՝ մի երակ,
 Ինքս ինձ հակառակ
 Անցնելով մաշկի տակ՝
 Կերտում եմ զարկերակ:

Ես՝ մի կրակ,
 Ինքս ինձ հակառակ
 Դառնալով հրոսակ՝
 Այրում եմ մի վտակ:

Ես՝ մի տնակ,
 Ինքս ինձ հակառակ
 Թորելով սև կոնյակ՝
 Բացում եմ դռնակ:

Ես՝ մի սրվակ,
 Ինքս ինձ հակառակ
 Մտնելով մի գյուղակ՝
 Դառնում եմ ժիր գետակ:

Ես՝ մի կտակ,
 Ինքս ինձ հակառակ
 Թաղվելով ձյան տակ՝
 Նստում եմ սահնակ:

Ես՝ մի գնդակ,
 Ինքս ինձ հակառակ
 Իմ գլխով՝ անգղակ
 Տնկում եմ թարմ մանյակ:

Ես՝ մի առնակ,
 Ինքս ինձ հակառակ
 Գրգռում եմ սռնակ՝
 Պատռելով դիմակ:

Ես՝ մի մանուշակ,
 Ինքս ինձ հակառակ
 Առանց այլ դաշնակ
 Նկարում եմ աշնակ:

Ես՝ մի կղզյակ,
 Ինքս ինձ հակառակ
 Ծովերում՝ հուրհրակ
 Լողում եմ անօղակ:

Ես՝ մի տարբերակ,
Ինքս ինձ հակառակ
Դառնում եմ քուռակ՝
Մտնելով երամակ:

Ես՝ մի կապուտակ,
Ինքս ինձ հակառակ
Թխսում եմ խոտի տակ՝
Ամեն ինչի ունակ:

Ես՝ մի սյունակ
Ինքս ինձ հակառակ,
Գնում եմ կրպակ,
Որ գնեմ սեղմակ:

Ես՝ մի ձագարակ,
Ինքս ինձ հակառակ
Շշերս՝ կլորակ,
Բերանս էլ՝ բոլորակ:

Ես՝ մի գլխարկ,
Ինքս ինձ հակառակ
Մազերս սպիտակ
Ներկում եմ ճերմակ:

Ես՝ մի մոլորակ,
Ինքս ինձ հակառակ
Սարքում եմ անորակ
Ալյուրե կլորակ:

Ես՝ մի ատրճանակ,
Ինքս ինձ հակառակ
Պաթեցնում եմ նռնակ,
Իմ կյանքն է ավերակ:

Ես՝ մի կոճակ,
Ինքս ինձ հակառակ
Հագնելով պիջակ՝
Բարձրանում եմ բլրակ:

Ես՝ մի դարակ,
Ինքս ինձ հակառակ
Ձեռքումս պայուսակ,
Մեջն էլ թղթապանակ:

Ես՝ մի պահպանակ,
Ինքս ինձ հակառակ
Շինվում եմ խայտառակ,
Ինչպես մի սայրակ:

Ես՝ մի պահակ,
Ինքս ինձ հակառակ
Ոտքերս բարակ,
Մեջքս փայտե մահակ:

Ես՝ մի բաժակ,
Ինքս ինձ հակառակ
Աչքերս միշտ փակ,
Հայացքս՝ տափակ:

Ես՝ մի կայծակ,
Ինքս ինձ հակառակ
Մեծ ամպերով ծակ
Իջնում եմ նրանց բակ:

Ես՝ մի գանձակ,
Ինքս ինձ հակառակ
Նստում եմ ճոճանակ՝
Վայելելով մի մեծ բանակ:

ԿԱՑԻՆ

Ես ու կացիճն անձրևի միջով
Վազում էիք գետնին շրխկացնելով,
Ռնդա անձրևն էլ, դեմքս տաշելով,
Փշրվում էր հողին՝ այն տալով թացին:

Ու հին քաղաքի նեղլիկ մայթերին
Հանգստանում էինք կացիճն ու ես՝ անթերիս
Ու մեր երկուսի կարմիր այտերին,
Ու իմ նեղ ուսին զարկում էր օդ գերին:

Բայց դե բարի էինք կացիճն ու ես,
Օդին շատ արագ գերի էինք առնում
Ու շատ արագ էլ ազատ արձակում,
Ես ու կացիճն անձրև էինք ստեղծում:

17 մարտ 2005

ԷՊԻԴԵՐՄՈՖԻՏԻԱ

Ու ամեն ինչի գագաթնակետում
Միկրոսկոպիկ կեղտերն ինձ են սիրահարվում,
Ինձանից իրենց արքա են կերտում
Ու ինձ տալիս են բատրակի երդում:

Ու ամեն ինչի անցյալ հետևում,
Խաղերիս հսկա ետնաբեմերում
Թեկնածությունս առաջադրողի
Հետքերս եմ իզուր որսում ու փնտրում:

Ու ամեն ինչի ստորադաս կետում
Ես էլ այն տխմարին եմ վերադարձնում
Իր իսկ անեծքը, թե՛ առածս դեղի փոխ ծախսեմ,
Ու էլ չեմ գգում հիմա ծանրացում:

Ու ամեն ինչի գումարային կետում,
Ինձ անէական անունների շարքում
Ինչ որ մեկի կազմվածքով կաշառքում
Գումարում հանում եմ հաճույքից անում:

Ու ամեն ինչի վերջնական կետում
Փափագում եմ հաճույքի բյուր բազմապատկում,
Վայելքների բյուր համայնապատում,
Ինձ հրաշքներով բյուրավոր պատում:

25 մարտ 2005

ԳՈՆԵ

Ու կրճատելով կյանքս երկուսով՝
Շատ քիչ բան ունեմ ես բազմապատկած,
Ու ես գոյում եմ միայն այն հույսով,
Որ դեռ կունենամ հրաշալի արկած:

Ասում եմ գոնե, գոնե ես ապրեմ,
Բերկրանքներից աղաղակեմ արբած,
Գոնե, գոնե հասցնեմ սիրեմ
Ու տվայտանքներից թմրանամ գատված:

Գոնե, գոնե ունենամ, գոնե ես տենամ,
Այլ աշխարհների ասքերից այն կողմ,
Ու հոգովս անդի հրաշքների հողմ,
Գոնե մի քամի, զեփյուռիկ կամ հով:

Գոնե թե կոչում, արժանիք, պատիվ,
Գոնե խրախճանքների գիշերներ ակտիվ,
Գոնե թռիչքներ, փետուրներով արծիվ,
Գոնե անմոռաց անգամներ անթիվ:

Ու և՛ եթերներ, ոտնկայս ծափեր,
Ու դաշտային վազքի հոտավետ փնջեր,
Ու և՛ ծովափեր, սիրավեպեր ջերմ,
Ու և՛ կրքոտ կիրք ու և՛ սիրով սեր:

Գոնե, աղերսում եմ, գոնե ծո՛վ գեղեցկություն,
Գոնե, պաղատում եմ, գոնե քա՛ջ առողջություն՝
Հոգու, մարմնի, կյանքի, վայելքի...

15 ապրիլ 2005

ՉԱՓԱՆԻՇ

Ու չափանիշ ես փոխելով՝ ինձ կավիրեմ,
Իմ կյանքին, իմ հին կյանքին, ընդմիշտ կասեմ
Մնաս բարո՛վ, քեզ հող ու փոս՝ անծայր, անգին:

Ու չափանիշ ես փոխելով՝ ինձ կավիրեմ,
Իմ նոր կյանքին, ուրիշ կյանքին ողջո՛ւյն կասեմ,
Ու նորաթուխ չափանիշներ կնվիրեմ:

Ինչպե՞ս փոխեմ, ինչպե՞ս փոխվեմ,
Ի՞նչ չափանիշ ես ինձ ընտրեմ,
Որ անհագ բախտի անհագ հարցերը
Մոռանան իմ հասցեները:

19 ապրիլ 2005

ԱԿՆԱԾԱՆՔ

Բացատն ինքն իրեն համար
Այստեղ-այնտեղ
Դեղին գույնի ծաղիկներով
Նախշ էր արել:

Շուրջբոլորը ծաղկի կամար
Հնչեղ-գունեղ,
Ընդարմացնող գորեղ բույրով
Հոտ էր վառել:

Մեջտեղներում խոտից դատարկ
Վառ-դիվահար,
Օշինդրի զարկերով բարկ
Հունձք էր դիզվել:

Ու վերևից արևն էր վառ
Նրանց կիզվել
Ու կիսանդրի կրծքերի դառ
Կանչ էր հուզվել:

29 ապրիլ 2005

ԾՐԱԳԻՐ

Խողովակներով, էլեկտրական հոսանքի միջով
 Ու դարերով հյուսված ավանդույթներով,
 Մագապուրծ լացով, կարմիր կոկորդով,
 Ու հողը մաշող անձրևատրոփով,
 Բարակ ցանցերով, ձևավոր սարդով,
 Քայլերով, վագրով, թռչել-սողալով
 Ու սևավոր պարերի նագով, հեգալով՝
 Ճենու՛մ եմ, գոռու՛մ. - Ես՝ նրանցից չեմ,
 Թողե՛ք մի քիչ էլ ամպերում սառչեմ,
 Գուցե անձրևի, ձյունի հատիկի տեսքով հայտնվեմ,
 Ներսիս հայացքից հոսանքներ հանեմ,
 Էլեկտրական, էներգիական կայծեր արձակեմ,
 Իմ երազներից փայլեր առանձնացնեմ
 Ու խողովակեմ, հառաչանքներից խողովակ նետեմ,
 Դողալով՝ դողամ, ու մեջտեղդ նետվեմ,
 Լեզվով թքոտեմ, անցքերդ մաքրեմ,
 Լվանամ, ուտեմ, ավելի խորը լեզուս մտցնեմ,
 Ու քո խողովակից հյութեր դուրս քամեմ,
 Ծորացնեմ բերնիս ու կուլ տամ, ուտեմ,
 Քեզ լիցքաթափեմ, էլեկտրական հոսանքից զրկեմ,
 Ու, հասցնելով գագաթի կետին, մեջս կրակեմ,
 Իմ մահանալով՝ դու էլ գագաթից ներքև կընկնես,
 Ու, ընդամենը, գրառումներիս գիրկը կընկնես,
 Գուցե մոռացվես, գուցե թե հիշվես ու էլի ուզվես:

2 մայիս 2005

ՄԱՀԱՐԱ

Ծառի տակ, թե վրան,
 Բացօթյա, առանց վրան,
 Հապճեպ, բայց անվարան,
 Թուք քսվեց վրան:
 Ու բերանվեց երկու ձվարան,
 Կայծերը բարձր տարան,
 Դրեցին կիրքը դամբարան,
 Ու ծովեց մի տապան,
 Լացը տարավ ճենարան,
 Թեթև ճոճվեց Սահարան՝
 Ավազելով քարավան:
 Նա քայլեց դեպի ավան,
 Քաղաքատիպ մի մեծ ավան
 Սփռված՝ ասես ճերմակ սավան,
 Մի քիչ բքոտ, ոնց սառնարան
 Ու հաճելի ինչպես մառան:

14 մայիս 2005

ՄԱԿՈՒԼԱՏՈՒՐԱ

Գժվար լուսաբաց,
Սյունակներով վերև եմ
Ճողվում կրակները թաց:

Մեկը չէ, երկուսն են քնած՝
Գիշերվա գիշերից հոգնած
Ու անկողնում հանգրվանած:

Իր մարմնով սափրած՝
Հանվել է նա՝ խելագարված,
Առանց օրենք ու սահմանազանց:

Բայց լուսաբացն անց
